ստոր
Ա-75
40121

# ՏԱԹԵՎԻԿ ՍԱՂԱՆԴԱՐՅԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ Է ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԵՐՈՎ

ՆՎԻՐՎԱԾ

ՏԱԹԵՎԻԿ ՍԱՀԱՆԴԱՐՅԱՆԻ 90-ԱՄՅԱԿԻՆ

40121

ԵՐՊԵՏԿՈՆՍԵՐՎԱՑՈՒՄԱՅԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА
ЕРГОСКОНСЕРВАТОРИИ

ԱՄՐՈՑ
ԳՈՒՊ

...Մեզանում անուններ կան, որոնք իրենցով
ամբողջացնում են Հայաստան անունը:
Ինձ համար այդ նվիրական անուններից մեկը
Տաթևիկ Սազանդարյանն է:
Ամենաարտիստիկ հայուհին,
որին երբևէ հանդիպել եմ ես մեր բեմում:
Ամենաեռանդուն մարդը և
ամենապրոֆեսիոնալ արվեստագետը,
որի հետ ես երբևէ առնչվել եմ կյանքում...

ՀՐԱՉՅԱ ՂԱՓԼԱՆՅԱՆ

ԵՐԵՎԱՆ

# Տաթևիկ Սազանդարյան

2006

ՀՏԴ78(479.25)
ԳՄԴ 85.23(2Հ)
Ս-125

Ս-125 Տաթևիկ Սազանդարյան (ծննդյան 90-ամյակին)/ առաջաբան՝ Գ. Գյոդակյան, կազմող՝ Ի. Իոնիսյան. - Եր.: Ամրոց գրուպ, 2006, 128 էջ, 16 էջ ներդիր:

Ս $\frac{4905000000}{880(01)2006}$ 2006թ. ԳՄԴ 85.23(2Հ)

ISBN 99941-31-40-0

© ԱՄՐՈՑ ԳՐՈՒՊ, 2006

# ՏԱԹԵՎԻԿ ՍԱՁԱՆԴԱՐՅԱՆ

ԽՍՀՄ ժողովրդական արտիստուհի, ԽՍՀՄ պետական մրցանակի դափնեկիր, պրոֆեսոր Տաթևիկ Սազանդարյանի բազմակողմանիորեն հարուստ գործունեությունը բացառիկ երևույթ էր մեր երկրի երաժշտական կյանքում: Հայ օպերային բեմի փառաբանված արտիստուհի, կամերային երգեցողության նրբին վարպետ, ակտիվ հասարակական գործիչ՝ ամեն բանում, ինչի որ ձեռնամուխ էր լինում Տ. Սազանդարյանը կա ծայրահեղ ստեղծագործական ինքնանվիրում, պատասխանատվության մեծ զգացում՝ հայրենիքի, ժողովրդի և սիրած արվեստի հանդեպ: Ինչպես և միշտ՝ ամենախիստ ու պահանջկոտ վերաբերմունք սեփական անձի հանդեպ, կատարելագործվելու, ստեղծագործական նոր բարձունքների հասնելու մշտական ձգտում, ակտիվ ու կրքոտ վերաբերմունք դեպի այն ամենը, ինչ տեղի էր ունենում հարազատ արվեստի ասպարեզում, շրջապատող կյանքում: Եվ միշտ ու ամենուր յուրաքանչյուր աշխատանքային օրը, ժամը, որպես՝ ծայր աստիճան հագեցված:

Օպերային թատրոնի բեմում ունեցած փայլուն ելույթներին, երբ ամբողջ դահլիճը շունչը պահած գտնվում էր նրա կախարդական արվեստի ազդեցության ներքո, փոխարինում էին օպերային խաղացանկի վրա տարվող խորասույզ աշխատանքի ժամերը, նոր համերգային ծրագրերի նախապատրաստումը: Թատրոնում լարված փորձերին, ընտրողների հետ ունեցած հանդիպումներին, որպես դեպուտատ՝ քաղսովետի, ապա և ԽՍՀՄ Գերագույն խորհրդի աշխատանքներին ակտիվորեն մասնակցելուն հետևում էին համերգային ուղևորություններ ԽՍՀՄ և աշխարհի խոշոր քաղաքները: Ելույթներ ռադիոյով, երկար ու հոգնեցուցիչ, բայց պատասխանատու

ժամեր ձայնագրման ստուդիաներում, վոկալ բազմաթիվ մրցույթների՝ այդ թվում նաև միջազգային ժյուրիների անդամ, հանդիպումելույթներ Խորհրդային բանակի մարտիկների, երիտասարդության, դպրոցականների առջև, պարապմունքներ կոնսերվատորիայի և թատերական ինստիտուտի ուսանողների հետ: Եվ դեռ ժամանակ պետք էր գտնել երգիչ-կոլեգայի հյուրախաղերի մասին հոդված գրելու կամ թատրոնի գեղարվեստական խորհրդի նիստերին մասնակցելու համար:

Եվ այսպես անընդմեջ տասնյակ տարիներ: Նախանձելի ճակատագիր: *«Տաթևիկ Սազանդարյանի փայլուն արվեստը վաղուց արդեն դարձել է մեր կուլտուրայի տարեգրության գեղեցկագույն էջերից մեկը»* (Մարտիրոս Սարյան): *«Ոչ ոք չի զարմանում, երբ Սազանդարյանին համարում են անզուգական»* («Դրապո-Ռուժ» լրագիր, Բելգիա): *«Այսօր ես հայտնագործեցի համաշխարհային կարգի նոր արտիստների, մենք կուզենայինք, որպեսզի ժողովրդական արտիստուհի Սազանդարյանը և մյուսները ելույթ ունենային մեր թատրոնի բեմում»* (Բրնոյի օպերային թատրոնի դիրեկտոր, դոկտոր Վացլավ Ֆրիդման): *«Վոկալ արվեստի երկրպագուների համար իսկական տոնահանդես էր Տաթևիկ Սազանդարյանի համերգը: Դահլիճը գերված էր նրա փառահեղ տեմբրի գեղեցիկ մեցցո-սոպրանոյով, երգչուհու հիասքանչ վարպետությամբ»* («Վիշկա» լրագիր):

Նման ասույթները ուղեկցել են երգչուհու ողջ ստեղծագործական ուղուն: Այդ ուղին խորհրդային արվեստի համար և՛ սովորական էր և՛ շատ բանով արտասովոր, զարմանալի...

Տաթևիկ Սազանդարյանը ծնվել է Սյունիքում, Խնձորեսկ գյուղում, դպրոցական ուսուցչի ընտանիքում:

Դեպի երկինք վեր խոյացած Զանգեզուրը վաղուց հռչակված է իր գեղեցիկ, խիստ բնությամբ: Առանձնապես գեղադիր է Խնձորեսկը՝ ժամանակակից զբոսաշրջիկների ուխտագնացության վայրը: Շրջակայքում՝ լեռնային սարահարթին հողմահար ժայռերը կանգնել են ֆանտաստիկ էակներ հիշեցնող քարե արտասովոր արձանների պես: Ձառիթափի ծերպին կախված, ասես երկնքին կպած Խնձորեսկը՝ ժայռերում փորված բազմաշար բնակատեղիների ու նրանց վրա ձգվող սահուն կամարներով ապշեցնում է իր արտասովորությամբ և ինչ-որ նախագո մի առանձնահատուկ հրապույրով: Թե ինչպես են այստեղ մարդիկ ապրել՝ դժվար է պատկերացնել: Պարզ է, որ նրանց կյանքը եղել է դաժան փորձու-

թյուններով լի: Բայց այդ կյանքն էլ հենց կոփել է բնավորություններ: Սյունիքցիները հպարտ, ազատասեր մարդիկ են և համառ իրենց նպատակադրումներն իրագործելիս:

Տաթևիկը կարճատև մնաց Զանգեզուրում. շուտով ընտանիքը տեղափոխվեց Բաքու: Հրաժեշտ տալով հարազատ երկրամասին, ապագա երգչուհին դեռևս բոլորովին երեխա, իր հետ տարավ անմոռաց տպավորություններ շրջապատող բնությունից, սիրված ժողովրդական մեղեդիների թովչանքը: Հարազատ երկրամասի հետ ունեցած կապի մասին է մշտապես հուշում և նրա անունը՝ Տաթևիկ, որ համահունչ է Տաթևին: Այդպես է կոչվում այն հռչակավոր վանքը, որը հարյուրամյակներ ծառայում էր որպես երկրամասի մշակութային կենտրոն և առանձնապես փառաբանված էր իր համալսարանով՝ ամենաառաջիններից մեկը ոչ միայն Հայաստանում, այլև ողջ միջնադարյան Եվրոպայում:

Կյանքը Բաքվում ընթացավ այլ, ավելի սովորական հունով: Դպրոց: Պարապմունքներ: Արվեստի՝ թատրոնի, երաժշտության հանդեպ արթնացող սեր: Փոքրիկ Տաթևիկի երաժշտական ընդունակությունների վրա ուշադրություն դարձրեց կոմպոզիտոր, ժողովրդական երաժշտության գիտակ Անտոն Մայիլյանը, մի խոշոր գործիչ, որը Բաքվում կարևոր դեր էր խաղում հայ երաժշտական արվեստի զարգացման խնդրում: Մայիլյանը նրան ընդունեց իր դպրոցական երգչախումբը, իսկ շուտով Տաթևիկին սկսեց հանձնարարել մենակատարի դերերգեր: Պահպանվել է նրա՝ Մայիլյանի դպրոցական երգչախմբի հետ առաջին անգամ որպես մենակատարուհի ելույթ ունենալու մասին վկայող հայտագիրը:

Դա ապագա երգչուհու յուրատեսակ դեբյուտն էր: Տաթևիկն այն ժամանակ տաս տարեկան էր:

Հայրն ամեն կերպ խրախուսում էր դստեր մեջ սեր դեպի արվեստն ու երաժշտությունը: Կրքոտ թատերասեր, նա հաճախ իր հետ թատերական ներկայացումների էր տանում նաև Տաթևիկին: Կիսում էր տպավորությունները, պատմում արտիստների կյանքի մասին, առանձնապես ոգևորված խոսում էր հռչակավոր Սիրանույշի մասին, որին անձամբ ծանոթ էր: Բաքվում նույնպես հայրը մերձեցավ արվեստի գործիչներին, նրանց հետ պահպանում էր սերտ կապեր: Նրանց տանը եղել են հայտնի կոմպոզիտորներ, գրողներ, արտիստներ՝ Ծիրվանզադեն, Հովհ. Աբեղյանը, Ա. Տեր-Ղևոնդյանը, Ժասմենը, Հովհ. Ոսկանյանը և շատ ուրիշներ:

1929 թվականին նորից տեղափոխություն: Այս անգամ՝ Մոսկվա:

Դպրոցն ավարտելուց հետո պետք էր մտածել ապագայի մասին: Բուհ ընդունվելու համար անհրաժեշտ էր արտադրական ստաժ, չասած, որ ընտանիքի նյութական դրությունն էլ ծանր էր: Որոշվեց, որ Տաթևիկը որպես աշակերտ ընդունվելու է Մոսկվայի գործարաններից մեկը: Գործարանի կոմերիտականներն ամենագործնական մասնակցությունն ունեցան երիտասարդ բանվորուհու ճակատագրում: Նրանք օգնեցին Տաթևիկին տիրապետելու փականագործի մասնագիտությանը, ներքաշեցին գեղարվեստական ինքնագործունեության մեջ: Այստեղ նա գերեց բոլորին ժողովրդական՝ հայկական և ադրբեջանական երգերի կատարումով: Ոգևորությունն այնքան մեծ էր, որ արևելյան անսամբլ ստեղծելու առաջարկն անմիջապես ջերմ պաշտպանություն գտավ: Սկսվեցին ժողովրդական գործիքներ նվագողների որոնումներ, ինչ-որ տեղից ճարեցին արևելյան զգեստներ և արդեն շուտով անսամբլը Տաթևիկ Սազանդարյանի մասնակցությամբ ելույթ ունեցավ Մոսկվայի գեղարվեստական ինքնագործունեության մրցույթում:

Արևելյան ինքնագործ անսամբլը աստիճանաբար ուժ էր հավաքում: Այն համալրվեց ժողովրդական գործիքների նոր կատարողներով: Մեծ թատրոնից հրավիրվեց պարող Զարե Մուրադյանը: Անսամբլը հաճախ էր ելույթներ ունենում ակումբներում, մշակույթի տներում, զբոսայգիներում, Գիտնականների տան դահլիճում և մի անգամ նույնիսկ Կրեմլում:

Երիտասարդ երգչուհին հետզհետե ավելի ու ավելի էր իր վրա ուշադրություն հրավիրում: Մոսկվայի հայկական կուլտուրայի տանը տեղի ունեցած համերգից հետո, որին ներկա էին նաև հանրապետության ղեկավարները, նրան առաջարկեցին պարապել մշակույթի տան ստուդիայում: Սազանդարյանը համաձայնեց, բայց ասաց, որ կուզենար սովորել որպես օպերային երգչուհի: Դա անսպասելի էր, որովհետև հանձինս նրա տեսնում էին ժողովրդական և գուսանական երգերի ապագա հիասքանչ կատարողի:

Վերջնական որոշման համար հավաքվեց հանձնաժողով, որի մեջ էին ռեժիսոր Ռուբեն Սիմոնովը, կոմպոզիտորներ Արամ Խաչատրյանը, Արտեմի Այվազյանը, վոկալի դասատու Ստեփան Բարխուդարյանը և ուրիշներ: Իր սովորական երգացանկի երգերը կատարելուց հետո Սազանդարյանը հանձնաժողովի խնդրանքով՝ ցույց տալ օպերային որևէ հատված, երգեց Խաբաներան «Կարմեն» օպերայից: Նա, որ Խաբաներայի բառերն անգամ ինչպես հարկն է չէր հիշում, փույթ չէ՝ ինչ չէր հիշում՝ փոխարինում էր սովորական

վոկալիզով: Հետագայում այս դրվագը Տաթևիկ Տիգրանովնան հիշում էր ծիծաղով և սարսափով: Ինչպե՞ս նա հանդգնեց այդպես վարվել: Բայց հանդուգն ջահելությունն իր օրենքներն ունի, իսկ նա շատ-շատ էր ուզում օպերային երգչուհի դառնալ:

Հանձնաժողովի անդամների կարծիքները բաժանվեցին: Եվ, այնուամենայնիվ, որոշվեց, որ նրան պատրաստելու են որպես օպերա-համերգային պրոֆիլի երգչուհի: Հազվագյուտ երաժշտականությունը, բնությունից դրված ձայնը, երգելու բնական կատարողական կերպը՝ այդ ամենը համոզեց հանձնաժողովի անդամներին ընդունել նման որոշում:

Սկսվեցին լուրջ պարապմունքները: Վոկալի նրա դասատուն դարձավ Ս. Բարխուդարյանը, որ երաժշտական կրթություն էր ստացել Իտալիայում և այդ ժամանակ խորհրդատու էր աշխատում Մեծ թատրոնում: Պարապմունքներն անցնում էին լարված ու հագեցած ծրագրով, պարապում էին գրեթե ամեն օր, մի քանի ժամ: Զարմանալի չէր, որ երիտասարդ երգչուհին կարճ ժամանակում անսպասելի հաջողությունների հասավ: Դրան զուգահեռ նա հաճախում էր և դրամատիկ ստուդիան, որը ղեկավարում էր ռեժիսոր Ռուբեն Սիմոնովը: Հիասքանչ այդ վարպետի բեմադրություններին մասնակցելը վճռական ազդեցություն ունեցավ Սազանդարյանի դրամատիկական տաղանդի զարգացման վրա: Այստեղ նա ոչ միայն տիրապետեց բեմական արվեստին անհրաժեշտ պրոֆեսիոնալ հմտությունների, այլև մերվեց բեմին ու սիրեց այն, այժմ արդեն՝ ընդմիշտ:

Երիտասարդ երգչուհու ձևավորման գործում անմիջական ազդեցություն ունեցավ և Մոսկվայի ողջ գեղարվեստական մթնոլորտը: Այդ ժամանակաշրջանին բնորոշ էր արվեստի, հատկապես թատերական արվեստի չտեսնված թռիչքը: Դա Ստանիսլավսկու և Մեյերխոլդի, Բարսովայի և Մակսակովայի, Օստուժևի և Կնիպպեր-Չեխովայի, Պիրոգովի և Սոբինովի, Կոզլովսկու, Տարխանովի ու Խմելյովի, Նեժդանովայի և Գոլովանովի ժամանակներն էին: Մեծ, Գեղարվեստական և Փոքր թատրոններում այն ժամանակ չկային սովորական, միջակ ներկայացումներ, յուրաքանչյուր բեմադրություն դառնում էր անկրկնելի և անմոռանալի իրադարձություն: Այդպես էր դրանք ընկալում և Տաթևիկ Սազանդարյանը, երբ նրան հաջողվում էր տեսնել այս կամ այն ներկայացումը այդ փառաբանված թատրոններում: Սակայն բեմում կատարվածը սոսկ որպես հանդիսական վերապրելու հրճվանքին

այժմ ավելացավ նաև ինչ-որ նոր բան. սևեռուն ուշադրություն դերասանական խաղի մանրամասների, ձայնի տիրապետման տեխնիկայի, այս կամ այն դերի, դերերգի մեկնաբանման առանձնահատկությունների հանդեպ:

Սուր դիտողականությունը, որ ընդհանրապես հատուկ էր Տաթևիկին, ուսումնառության այս տարիներին դրսևորվեց առավել նպատակասլաց: Այստեղ հենց ինքը՝ կյանքը շատ բան էր սովորեցնում: Իրենից անկախ, գիտակցության մեջ մեխվում էր ամեն բան. և՛ դուր եկած գեղեցիկ քայլվածքը, և՛ պատահականորեն տեսած հպարտ, արտահայտիչ ժեստը, և՛ ճաշակով ու, ամենակարևորը՝ «ժամանակակից» հագնվելու շնորհքը, անգամ գեղեցիկ ու անբռնազբոս կեցվածքով նստելը: Այս հարցում չկան և չեն կարող «մանրուքներ» լինել: Ենթադրվում էր, որ ամեն մի իսկական դերասանուհի ոչ միայն բեմում, այլև կյանքում ժամանակակիցը պիտի ընկալի որպես յուրատեսակ չափանիշ, ընդօրինակման տիպար: Դրան, թերևս չգիտակցված, ձգտում էր և Տաթևիկը: Ինքնադաստիարակումը, իր յուրաքանչյուր քայլին քննադատորեն նայելը, որ այն ժամանակվանից ի վեր դարձավ նրա բնավորության յուրահատուկ գիծը, շատ բանով կանխորոշեց նրա հետագա ստեղծագործական ուղին:

1937 թվականին Սազանդարյանը հրավիրվեց աշխատելու Երևանի օպերային թատրոն: Երիտասարդ երգչուհու համար ստեղծվեցին հատուկ պայմաններ. նրա պարապմունքները չընդհատելու նպատակով նրա հետ Երևան հրավիրվեց և վոկալի դասատու Ս. Բարխուդարյանը:

Սկզբում, հասկանալի է, նրան առաջարկեցին երկրորդական փոքրիկ դերեր: Առաջին դերն ընդհանրապես խոսք չուներ՝ դայակի դերը Ձերժինսկու «Խաղաղ Դոնում»: Ապա հետևեցին Գայանեն «Ալմաստ» օպերայում (1937), Օլգան «Եվգենի Օնեգինում» (1937), հետո Ձիբելը «Ֆաուստում» (1938), Աղախինը Ա. Այվազյանի «Թափառնիկոս» նորաստեղծ օպերայում (1938): Դերասանուհին աստիճանաբար ընտելանում էր օպերային բեմին, ծանոթանում այն թատրոնի առաջավոր դերասաններին, որը շատ երկար տարիներ իր երկրորդ տունը պետք է դառնար:

Ալ. Սպենդիարյանի անվան թատրոնն այն ժամանակ ապրում էր իր կազմավորման շրջանը: Արտիստական հիանալի աշխատանքների (իսկ թատրոնում հանդես էին գալիս այնպիսի վարպետներ, ինչպես՝ Հ. Դանիելյանը, Լ. Իսեցկի-Իոննիսյանը, Ա.

Կարատովը, Շարա Տալյանը և ուրիշներ) և փայլուն ներկայացումների կողքին այստեղ նաև ոչ քիչ թվով չլուծված խնդիրներ կային, գեղարվեստական տեսակետից ոչ օրգանական, երբեմն պարզապես պատահական երևույթներ: Սակայն թատրոնում իշխում էր բացարձակ խանդավառության ոգին և ամեն ինչ հաղթահարող երիտասարդական ավյունը: Եվ սա հասկանալի է, քանի որ թատրոնն էլ այն ժամանակ երիտասարդ էր (այն, ինչպես հայտնի է, իր դռները բացել է 1933 թվականին), նոր և անսովոր էին նրա առջև կագնած խնդիրները, առանձնապես ազգային օպերային խաղացանկի ձևավորման հետ կապված հարցերը: Երիտասարդ էին նաև իրենք հանդիսականները, որոնք մեծ մասամբ հենց այս թատրոնում էլ ծանոթացել էին օպերային արվեստի զարմանահրաշ աշխարհին:

Սազանդարյանի առաջին դերերի թվում կային և հաջողվածներ (Զիբել, Գայանե) և կիսով չափ հաջողվածներ (Օլգա): Համենայն դեպս, դրանք բոլորը խնամքով մշակված և ուսումնասիրված էին: Այս դերերը առանձնակի առարկություն, ինչպես և, առանձնակի ոգևորություն չհարուցեցին: Եվ հանկարծ...

Յուրաքանչյուր թատրոն իր լեգենդներն ունի: Դրանք կան և Սպենդիարյանի անվան թատրոնում: Դրանցից մեկը կապված է Տաթևիկ Սազանդարյանի անվան հետ: Այդ լեգենդը համեստ, բայց և հույսեր ներշնչող երիտասարդ արտիստուհու հեքիաթային վերափոխման, իսկական օպերային պրիմադոննա դառնալու մասին է: Այս վերափոխումն այնքան սրընթաց և անսպասելի կատարվեց, որ թվաց ոչ ճշմարտացի, հրաշքային: Իսկ և իսկ Անդերսենի հեքիաթի սպիտակ ու սքանչելի կարապի նման...

1939 թվականին Մոսկվայում կայանալու էր հայ արվեստի տասնօրյակը: Ենթադրվում էր, որ այն կբացվի Ա. Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայի նոր բեմադրությամբ: Ի զարմանս շատերի, օպերային գլխավոր հերոսուհու դերը հանձնարարվեց քսաներեքամյա Տաթևիկ Սազանդարյանին: Եվ երիտասարդ արտիստուհին ոչ միայն հաղթահարեց այս դժվարագույն դերերգը, այլ հաղթահարեց փայլուն կերպով, ըստ որում արտասովոր, բացառիկ պայմաններում (պատասխանատվությունն առանձնապես մեծ էր, որովհետև ներկայացումը տասնօրյակի ծրագրում էր):

Ալմաստ-Սազանդարյանը զարմացրեց, ապշեցրեց ժամանակակիցներին: Հենց այդպիսին էր, թե՛ շարքային հանդիսականի և թե՛ օպերային արվեստի հմուտ գիտակների կարծիքը: Այդ ներկայացմանը նվիրված բազմաթիվ արձագանքների մեջ, թերևս,

առանձնապես ուշագրավ է նշանավոր Մ. Մաքսակովայի՝ Մեծ թատրոնի Ֆիլիալի ներկայացման Ալմաստի առաջին դերակատարուհու կարծիքը: Ալմաստ-Սազանդարյանի՝ որպես զարմանալի երևույթի մասին կարծիքը դառնում է նրա տպավորությունների յուրատեսակ լեյթմոտիվը. «Սազանդարյանն ինձ ապշեցրեց գեղեցիկ, արտասովոր փափուկ հնչող ձայնով, որին նա հմտորեն տիրապետում է, փայլուն դիմախաղով... նման փափուկ հնչողությամբ իշխանասեր, փառամոլ, ուժեղ Ալմաստի կերպարը մարմնավորելու համար պետք է լինել շատ փորձված արտիստուհի...

Սազանդարյանն ինձ ապշեցրեց: 23 տարեկան հասակում լինել այդքան սքանչելի դրամատիկ դերասանուհի ու վոկալիստ...» («Լիտերատուրնայա գազետա», 1939 թ., N58):

Իսկապես, Ալմաստի դերը Տ. Սազանդարյանի կատարմամբ մեր երաժշտական կյանքում դարձավ բացառիկ երևույթ... այս դերը երիտասարդ արտիստուհուն բերեց անվերապահ ճանաչում:

Ինչո՞վ ունկնդիրներին զարմացրեց Սազանդարյանի Ալմաստը: Սրան դժվար է միանշանակ պատասխան տալ: Այստեղ և՛ կերպարի իսկական կենսական հավաստիություն կար, և՛ նրան անդադար շարժման, զարգացման մեջ ցույց տալու կարողություն, և՛, իհարկե, օպերային բեմում հազվադեպ պատահող՝ վոկալի, երգեցողության և դրամատիկական խաղի օրգանական միասնություն:

Հենց իր առաջին մուտքից Ալմաստ-Սազանդարյանը տիրաբար իր վրա էր գամում հանդիսականի ուշադրությունը և հետո արդեն նրան պահում չընդհատվող լարվածության մեջ: Կրքերի շիկացումը, որ կատաղորեն փոթորկվում էին Ալմաստի հոգում, ակամայից գրավում էր ողջ հանդիսասրահը, ներկայացման մեջ ներմուծում իսկական դրամատիզմի, բարձր ողբերգության մթնոլորտ:

Ալմաստի կերպարի բարդությունը՝ նրա բազմապլանայնության, տարբեր, երբեմն խիստ հակադիր հոգեկան վիճակների արագ փոփոխության մեջ է: Սազանդարյանը նրբորեն էր հաղորդում այդ փոփոխությունները: Ավելի ճիշտ, ոչ թե հաղորդում էր, դա այն բառը չէ, այլ յուրաքանչյուր պահին բեմում ապրում էր Ալմաստի կյանքով:

Անմոռաց տպավորություն էր թողնում Ալմաստի առաջին արիան: Կարծես հոգու ամենախորունկ անկյուններից էր ծնվում հերոսուհու թախիծը դրսևորող այդ տխուր մեղեդին: Ալմաստին պատած մռայլ խոհերն աստիճանաբար էլ ավելի սուր բնույթ էին ստանում, ձայնի մեջ արտացոլվում էր հասունացող զգացմունքների գրգռված ու շփոթ վիճակը: Եվ այդ ամենի բարձրակետն էր դառնում արիայի

վերջնամասը: Բայց այդ բարձրակետը արտասովոր էր. «խաղաղ» նվագախմբի ուղեկցման «թափանցիկ» ֆոնի վրա սկիզբ էր առնում հասարակ, ժողովրդական երգի պես անպաճույճ, բայց հազվագյուտ հուզականությամբ ազդեցիկ մեղեդին: Ասես որպես արձագանք, կանացի երգչախումբը՝ թախիծով լի, նրա հետ կրկնում էր «Գյուլում ջան, գյուլում ջան»:

Սազանդարյանի զարմանալի կատարմամբ այս մեղեդին մարմնավորում էր դատապարտվածության բուն գաղափարը, այնքան անմարելի թախիծ ու վիշտ կար նրա մեջ: Ձայնի վճիտ ու հարթ, կարծես աննյութական հնչեղության մեջ չէր զգացվում անգամ փոքր իսկ ընկճվածություն, վշտին ակտիվորեն հակադրվելու որևէ ձգտում, միայն հոգու սև խավար՝ նույնիսկ հույսի ամենաթույլ շողով անգամ չլուսավորված: Թեև այս դրվագը շատ կարճատև էր, այնուամենայնիվ այն ձեռք էր բերում վճռական նշանակություն, ճակատագրական այս տեսիլքի մռայլ ստվերը անտեսանելիորեն սավառնում էր Ալմաստի կերպարի զարգացման հետագա ողջ ընթացքի վրա:

Ալմաստի հոգին դառնում էր հակասական ու տանջալից զգացմունքների պայքարի ասպարեզ: Գայանեի հետ ունեցած տեսարանում, երբ նա մտովի դիմում էր սիրած Թաթուլին, երգչուհու ձայնը պայծառանամ էր, և լայն կանտիլենան ոգեշնչվում էր կենդանի ու անկեղծ զգացմունքի թրթիռով: Բայց ահա հայտնվում էր աշուղը և Ալմաստին խոստանում արքայական թագ, անհամար գանձեր, շահի սերը: Անշարժանալով, ամբողջովին լսողություն դարձած, Ալմաստ-Սազանդարյանը ագահորեն որսում էր աշուղ-երգչի յուրաքանչյուր բառը և նրա բորբոքված երևակայության համար այդ պահին չկար առավել քաղցր ու անձկալի երգ: Եվ նա արթուն անրջում էր արդեն, ըմբոշխնելով ապագա փառքն ու հզորությունը (տեքստը լիբրետոյից է).

Իրավ, ինչո՞ւ ես թագուհի չեմ,
Հզոր ու մեծ իմ նոր փառքով,
Բացվում է լայն արծվի թռիչքը,
Կապույտ երկնքում, ահեղ ոնց ծով:

Սազանդարյանն այս տեսարանն անց էր կացնում մեծ ոգևորությամբ: Ավելի սլացիկ էր թվում նրա իրանը ու հպարտ՝ կեցվածքը, նրա ձայնը ձեռք էր բերում հզորություն ու ուժ և ազատ, անկաշկանդ

ընթացքի մեջ վեր էր խոյանում, զրնգուն «մետաղյա» ձայնով ճեղքելով նվագախմբի նվագակցության հզոր հնչողությունը: Եվ ապա, այդ անզուսպ պոռթկումից հետո, նորից հոգին ծվատող սարսափելի մտքեր («և՛ այրող ամոթանք, և՛ հավերժ անեծք... Արյան հեղեղ, մութ դժոխք»), իսկ ձայնը՝ ծայրաստիճան պրկված լարի պես, պատրաստ ուր որ է կտրվելու («Օ՜հ, Գայանե, ինձ հույս տուր, Տե՛ր իմ Աստված, աղաչում եմ քեզ, վռնդի՛ր աշուղին»):

Այստեղ Սազանդարյանի կատարումը հասնում էր դրամատիզմի այնպիսի բարձունքների, որ ի վիճակի էին դրսևորելու միայն իրոք ականավոր արտիստներ:

Երրորդ գործողության մեջ, երբ դավաճանելու որոշումը վերջնականապես հասունացած էր, Ալմաստ-Սազանդարյանի գործողությունները ստանում էին գրեթե սատանայական վճռականություն: Այստեղ նա դառնում էր ուրախ խրախճանքի ոգին: Նա սրընթաց հայտնվում էր քեֆ անողների տարբեր խմբերի մեջ, եռանդը ժայթքում էր շատրվանի պես, աշխույժ ռեպլիկները համընդհանուր ծիծաղ, խոլական ուրախություն էին առաջացնում: Եվ միայն շարժումների մեջ մերթ ընդ մերթ սողոսկող անսովոր տենդը, հայացքում ակնթարթորեն սպրդող կասկածը կամ ուժասպառ վար իջեցրած ձեռքերը վկայում էին այն մասին, թե այս երկակի խաղը հոգեկան ուժերի ինչպիսի մեծ լարում է պահանջում հերոսուհուց:

Կերպարի զարգացման բարձրակետն էր դառնում Ալմաստի պարը:

Օպերային բեմի պայմաններում պարային դրվագը ոչ պրոֆեսիոնալ պարուհու կատարմամբ բացառիկ երևույթ էր և, իհարկե, ամեն երգչուհի չէ, որ կարող է նման ռիսկի դիմել: Սազանդարյանն այդ անում էր սահուն ու անկաշկանդ, ինչպես իսկական պարուհի: Նրա պարի պլաստիկան զարմանալիորեն գեղեցիկ էր ու արտահայտիչ:

Սազանդարյանի կատարմամբ Ալմաստի պարը նախ և առաջ դրամատիկ բնույթ էր կրում: Սկզբում պարն ընթանում էր դանդաղ տեմպով: Ալմաստի մեղմ ու սահուն, նրբագեղ շարժումներում կար ոչ միայն սեփական գեղեցկության, հիասքանչ դեմքի, իրանի, ձեռքերի գրավչության ուժը գիտակցող մարդու յուրատեսակ ինքնահիացում, այլև թախիծով լի մի հմայիչ զգացում: Կարծես հրաժեշտ էր տալիս նա անցյալին, կյանքում ամենաթանկ ու սիրելի բաներին: Աստիճանաբար փոխվում էին մոտիվները, պարի ռիթմը ուժգնանում էր: Այն այժմ արտահայտում էր տագնապալի ապրումներ, որոնց

քմահաճորեն զուգակցվում էին մոլեգին կատաղությունն ու հուսահատ վճռականությունը: Ճկուն, գայթակղորեն կանչող գալարուն շարժումներում անորսալիորեն երևում էր ինչ-որ նենգ, օձային բան:

Եվ գործողության վերջնակետը. մթության մեջ հարբած ու քնած զինվորների մարմինների միջով անլսելի սահում է Ալմաստը: Նա բարձրանում է բարձունքի վրա, մինչև թշնամիներին պայմանական նշան տալը նայում է, հայացքով որոնում քնած Թաթուլին, կարծես ձգվում է դեպի վերջինս, ապա շեշտակիորեն շրջվելով, դանդաղ բարձրացնում է վառված ջահը. դավաճանությունը ի կատար ածվեց:

Ֆինալում Ալմաստ-Սազանդարյանի հոգում տիրապետող էին երկու զգացում՝ դա շահին իր խոստումը կատարել տալու վճռականությունն է, իսկ հետո, երբ հերոսուհին հասկանում է, որ խաբված է, Ալմաստին պատող հուսահատությունն ու խորտակված հույսերի դառնությունը: Իր կատարման մեջ արտիստուհին բացառել էր այն ամենը, ինչը ամենափոքր չափով իսկ կարող էր կարեկցանք, հերոսուհու հանդեպ խղճահարություն առաջացնել (այդպես էր մտահղացված բեմադրողների կողմից, և այդպես էլ ֆինալում Սազանդարյանը դրսևորում էր Ալմաստի կերպարը): Հերուսուհու մահն ընկալվում էր իբրև անողոք, իրավացի հատուցում կատարածի հանդեպ...

1939 թվականի «Ալմաստը» ունեցավ հասարակական լայն արձագանք և բեմում մնաց գրեթե քառորդ դար: Այդ ներկայացման ստեղծմանը մասնակցեցին ազգային մշակույթի հոյակապ գործիչներից շատերը՝ դիրիժոր Գ. Բուդաղյանը, նկարիչ Մ. Սարյանը, բեմադրողներ Վ. Աճեմյանը և Գ. Հովհաննիսյանը, Ա. Մելիք-Փաշայանը (երաժշտական կոնսուլտանտ), Ռ. Սիմոնովը (բեմադրության կոնսուլտանտ), երգիչներ Լ. Իսեցկի-Իոնեսյանը, Պ. Լիսիցյանը, Գ. Գաբրիելյանը և շատ ուրիշներ: Նրանց մասնակցությունը, անշուշտ, օգնել է երիտասարդ երգչուհուն գտնելու Ալմաստի բարդ կերպարը բացահայտելու ճիշտ բանալին, նպաստել է նրա կատարման բարձր մակարդակին: Բայց և այնպես, հանուն ճշմարտության, պետք է ասել, որ ողջ ներկայացման անկրկնելի, յուրօրինակ արժեքը շատ բանով պայմանավորված էր Ալմաստ-Սազանդարյանի մասնակցությամբ: Նրա բացակայությունը ներկայացումը զրկում էր, թերևս, ամենից կարևոր, գեղարվեստական տեսակետից անփոխարինելի բաղադրամասերից:

«Ալմաստ» ներկայացումից հետո էր, որ Սազանդարյանը թատրոնում իրավամբ գրավեց մեցցո-սոպրանո դերերգերի

առաջատար կատարողի դիրք: Նոր դերերը հետևում էին մեկը մյուսին: Իսկ նրա մասնակցությունը ազգային օպերաների նոր բեմադրություններում առանձնահատուկ արժեք էր ստանում:

Այդ տարիներին Սպենդիարյանի անվան թատրոնը ստեղծագործական արտակարգ վերելքի շրջան ապրեց: Ինտենսիվ որոնումներ էին գնում խաղացանկը հարստացնելու, ազգային ներկայացումներ ստեղծելու ուղղությամբ, որոնք կհաստատվեին թատրոնում, կազմելով նրա ոսկե ֆոնդը: Այդպիսի ներկայացումներ դարձան մասնավորապես Տ. Չուխաջյանի «Արշակ Երկրորդը» և Ա. Տիգրանյանի «Դավիթ Բեկը»: Այս ներկայացումների հաջողության խնդրում Սազանդարյանին մեծ դեր էր վերապահված: Փառանձեմի և Թամարի դերերգերի նրա կատարումը կարելի է համարել օրինակելի, դասական: Հայկական օպերայի ականավոր այլ վարպետների շարքում Սազանդարյանն իր ստեղծագործությամբ հաստատում էր ազգային կատարողական արվեստի նոր սկզբունքներ, որոնք կրում են մեկնաբանման ռեալիզմի և դրամատիկական բարձր ճշմարտության դրոշմը:

«Արշակ Երկրորդի» պրեմիերան կայացավ 1945 թվականի վերջերին ֆաշիստական Գերմանիայի դեմ Սովետական ժողովրդի տարած պատմական հաղթանակից գրեթե անմիջապես հետո: Հայրենասիրական բացառիկ վերելքի մթնոլորտը, անշուշտ, ոգևորել էր ներկայացման բոլոր մասնակիցներին, խթանել նրանց աշխատանքը: Եվ ներկայացումը եղավ վառ, հուզիչ ու տոնական: Շնորհիվ դիրիժոր Մ. Թավրիզյանի ոգեշունչ մեկնաբանության, ստեղծագործական սկզբունքներով և վոկալ դպրոցով միմյանց հարազատ ու առաջատար երգիչ-կատարողներ Հ. Դանիելյանի, Տ. Սազանդարյանի, Պ. Լիսիցյանի փայլուն համաստեղության՝ ներկայացումը գրավում էր և՛ ոճական միասնությամբ, և՛ գեղարվեստական կատարելությամբ: Այդ ներկայացումը հանրապետության մշակութային կյանքում դարձավ իրադարձություն և այդ ժամանակից ի վեր «Արշակ Երկրորդ» օպերան հաստատվեց օպերային թատրոնի խաղացանկում:

Փառանձեմի դերերգը Ալ. Սպենդիարյանի Ալմաստի համեմատությամբ երգչուհու առջև բոլորովին այլ, նոր խնդիրներ դրեց: Տ. Չուխաջյանի երաժշտության մեջ ուժեղ են իտալական օպերայի ավանդույթները, ուստի երգողից պահանջվում է կանտիլենայի և բելկանտո ոճի ազատ տիրապետում: Սազանդարյանի կատարմամբ Փառանձեմի վոկալ դերերգի այս առանձնա-

հատկությունը մատուցվեց անբասիր վարպետությամբ: Այդ էր վկայում և՛ ողջ ձայնածավալի կատարյալ հավասար հնչողությունը, և՛ լայնաշունչ, ազատ հորդող կանտիլենան, և՛ տարբեր հուզական նրբերանգների ճկուն, պլաստիկ արտահայտությունը: Գեղեցիկ երգելն ինքնին իսկական գեղագիտական հաճույք էր պատճառում: Բայց գեղեցիկ երգելը, բնականաբար, ինքնանպատակ չէր: Այն սոսկ Փառանձեմի ռեալիստական, լիարյուն կերպարի ստեղծմանն անհրաժեշտ հիմք էր ծառայել: Իսկ արտիստուհու համար գլխավորը, ինչպես միշտ, կերպարի երաժշտադրամատիկական կողմի ճշմարտությունը վեր հանելն էր:

Սազանդարյանի Փառանձեմը իր ժողովուրդը, իր հայրենիքն անհունորեն սիրող մի ամբողջական, կամային բնավորություն էր: Սակայն այս կերպարն ամենևին էլ ուղղագիծ կամ սխեմատիկ չէր: Սազանդարյանը ճշմարտացի էր հաղորդում կերպարի ներքին բարդ զարգացման ողջ ընթացքը: (Կերպարի մշտական շարժման, զարգացման այս ճշմարիտ զգացումը Սազանդարյանի կատարման անբաժան, նրա մեծ տաղանդի իսկապես դրամատիկ բնույթը բացահայտող գիծն է): Նրա Փառանձեմը սկզբում ինքնամփոփ է, ամբողջովին գտնվում է սիրելի ամուսնու՝ Գնելի բռնի մահվան հետ կապված վշտալից ապրումների ազդեցության ներքո: Ճշմարիտ է, Արշակ արքայի հետ ունեցած առաջին զուգերգում արտաքին հնազանդության և խոնարհության ետևում զգացվում է Փառանձեմի բնավորության ուժն ու կրքոտությունը, որ հանկարծ պոռթկում է մերթ ներքին արժանապատվությամբ լի ժեստի, մերթ հպարտ, իշխանական ինտոնացիայի միջոցով: Այնուամենայնիվ և այդտեղ, իսկ հետո նաև մեներգում ու աղջիկների երգչախմբին ձայնակցող երգում տարերայնորեն հորդող քնարականությունը որոշում է հերոսուհու ներքին ապրումների բնույթը: Բայց ոչ քնքույշ կամ առինքնորեն նրբագեղ քնարականություն, այլ զգացմունքների ուժն ու խորությունը, նրա հագեցվածությունը, ներքին դրամատիզմը դրսևորող քնարականություն: Այսպես, աստիճանաբար երգչուհու ստեղծած կերպարը խորանում է, դառնում նշանակալից: Դրա հետևանքով էլ երգչուհին հոգեբանորեն օրինաչափ ու պատճառաբանված է պատկերում Փառանձեմի՝ սուբյեկտիվ ապրումների ոլորտից դուրս գալը և հայրենասիրական պարտքի, հայրենիքի միավորման համար մղվող պայքարի մեջ ակտիվորեն ներգրավվելու անհրաժեշտության գիտակցումը: Դերասանուհու ներգրավվելու անհրաժեշտության գիտակցումը: Դերասանուհու անկեղծ պաթոսը Փառանձեմի կերպարին հաղորդում է ոգեշնչվա-

ԵՐՊԵՏԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА ЕРГОСКОНСЕРВАТОРИИ

ծաթյուն, դերին հաղորդում հերոսական հնչողություն: Սազանդարյանն իր հերոսուհու էության մեջ գիտակցորեն ընդգծում է հասարակայնորեն նշանակալից էթիկական հիմք և սա նույնպես նրա արվեստը բնորոշ առանձնահատկություններից մեկն է:

Ա. Տիգրանյանի «Դավիթ Բեկ» (1950) օպերայից Թամարի փոքրիկ, սոսկ քնարական դերերգը սկզբում դերասանուհուն թվաց ոչ այնքան իրեն համապատասխան:

«Հերոսական դրամատիկ բազմաթիվ դերերից հետո, — գրում է արտիստուհին 1956 թվականին, — ինձ համար դժվար էր անմիջապես գտնել Թամարի կերպարը՝ այնպես քնարական ու թեթևասահ ու այնպես բնական: Եվ ես երկար, համառորեն որոնում էի... Այս որոնումների մեջ անցան առաջին երկու բեմադրությունները, բայց ես, ավա՛ղ, դեռևս ինձ բավարարված չէի զգում»:

Նրա վերամարմնավորման վարպետությունն այս անգամ էլ ապշեցուցիչ էր: Բոլորովին նոր գույներ, բեմական ոչ սովորական գծանկար, ուր ամեն ինչ՝ սահուն ու սրընթաց քայլվածքից մինչև շարժումների նուրբ ու գեղեցիկ պլաստիկան, զարմանալիորեն համահունչ էր դեռ բոլորովին ջահել, աղջկական ջինջ անմիջականությամբ ու հմայքով լի Թամարի կերպարին...

Թվում էր, փոխվել էր անգամ ձայնի տեմբրը, այն դարձել էր լուսավոր ու թափանցիկ, ստացել գրեթե սոպրանոյի հնչողություն: Երգչուհու սովորաբար խիստ հագեցած, ներքին ռեգիստրի «թանձր» հնչյուններն անգամ այստեղ, ասես, կորցրել էին իրենց այդ որակը, աչքի ընկնելով միայն տեմբրի՝ վերին ռեգիստրի հետ համեմատած, որոշ ինտենսիվությամբ և թրթռացող հուզականությամբ:

Թամարի արդեն առաջին արիայում իսկ դերասանուհին բացահայտում է իր հերոսուհու քնքույշ, պարզ էությունը, սիրեցյալի հետ հանդիպման սպասող աղջկա լուսավոր զգացմունքների ոգեշնչվածությունը: Երգչուհին նրբորեն հաղորդում է նաև կերպարի ազգային բնութագրումը՝ վրաց ժողովրդական երգի ոճով գեղեցիկ կատարելով մելիզմները, վոկալ գունազարդերը: Նրա ուրախ, գունեղ խնջույքի երգը երբեմն պարուրված է թախծի շղարշով՝ կարծես շուտափույթ բաժանման նախազգացումով: Ձայնի երանգներն ավելի էքսպրեսիվ են դառնում Դավիթ Բեկին հրաժեշտ տալու տեսարանում: Դրամատիզմի դրսևորումն այստեղ զուսպ է ու խիստ: Եվ միայն, թերևս, դուետի ամենավերջում, ձայնի «սպիտակ», կարծես խլացած հնչյունների մեջ է թափանցում չքողարկված ցավի ու տրտմության ելևէջը, որ հուզում է անկեղծ զգացմունքների կենդանի թրթիռով:

Սազանդարյանը «Սրշակ Երկրորդ» և «Դավիթ Բեկ» օպերաներում 1956 թվականին հանդես եկավ Մոսկվայում, Մեծ թատրոնի բեմում, հայ արվեստի երկրորդ տասնօրյակի ժամանակ: Նրան մեծ հաջողություն էր սպասում: Հենց այդ ժամանակ նա արժանացավ ՍՍՀՄ ժողովրդական արտիստուհու բարձր կոչման:

1938 թվականից սկսած, երբ Սազանդարյանը Ա. Սյվազյանի «Թափառնիկոս» օպերայում կատարեց Աղախնու դերը, հետագա 30 տարիների ընթացքում գրեթե չի եղել մի նոր հայկական օպերային ներկայացում, որին նա մասնակցած չլինի: Միանգամայն իրարից տարբեր կերպարների մի ամբողջ պատկերասրահ՝ ուրախ, կրակոտ Մանուշը (Վ. Տիգրանյանի «Սոս և Վարդիթեր», 1957 թ.) և կրքոտ ու խռովահույզ Շուշանը՝ (Ա. Բաբաևի «Արծվաբերդ», 1957 թ.)*, խիզախ պատանի Բերբերոն (Ա. Տեր-Ղևոնդյանի «Արևի ցոլքերում», մանկական օպերան, 1949 թ.) և տանջվող Էմիլիան (Գ. Արմենյանի «Խաչատուր Աբովյան», 1960 թ.), հասարակ գեղջկուհի Սաթոն (Կ. Զաքարյանի «Մարջան», 1942 թ.): Եվ, իհարկե, հատկապես պետք է առանձնացնել Հ. Ստեփանյանի «Հերոսուհին» օպերայում նրա կատարած (1950 թ.) Նազելիի դերերգը:

Սազանդարյանը վաղուց էր երազում օպերային բեմում մարմնավորել մեր ժամանակակցուհու կերպարը: «Հերոսուհի» օպերան վերջապես նրան տվեց այդ հնարավորությունը:

Հ. Ստեփանյանի ստեղծագործության մեջ, որ զուրկ չէր թերություններից ու վրիպումներից, առաջավոր կոլտնտեսուհի Նազելիի կերպարը, անշուշտ, ամենահաջողվածն է: Սազանդարյանը կարողացել էր այդ կերպարին կյանք ներշնչել, ճշմարտացի բացահայտել իր հերոսուհու ակտիվ և կրքոտ բնավորությունը, որը համարձակ ու համառ է աշխատանքում, մաքուր և ինքնազոհ սիրո մեջ: Արտիստուհու մարմնավորած հայ կանանց կերպարներից Նազելին, թերևս, ամենից «հայկականն» է իր վոկալ կոլորիտով: Կատարման մեջ այս «հայկականը» դժվար է բառերով բնորոշել, ակնհայտ է ժողովրդական երգեցողությանը մոտ վոկալ ինտո-

---

* Շուշանի դերում մեծ հաջողությամբ Տ. Սազանդարյանը ելույթ է ունեցել նաև Մոսկվայի Միությունների տան սյունազարդ դահլիճում (1968), «Արծվաբերդ» օպերայի համերգային կատարման ժամանակ, որ իրականացվեց Համամիութենական ռադիոյի ու հեռուստատեսության օպերային և սիմֆոնիկ նվագախմբի, օպերային երգչախմբի և Մեծ թատրոնի մեներգիչների և այլոց մասնակցությամբ (դիրիժոր Ե. Ակուլով):

նացիայի բնորոշ ձև (պետք է նշել, որ դերերգի երաժշտական նյութը ևս, որ հասունացել է կոմպոզիտորի կողմից ֆոլկլորային աղբյուրների ստեղծագործական իմաստավորման հիման վրա, այս դեպքում շատ բանով «ուղղություն» է տվել երգչուհուն): Եվ կատարման պարզություն, բնականություն, հուզառատություն:

Նազելիի դերի համար Սազանդարյանն արժանացավ ԽՍՀՄ պետական մրցանակի դափնեկրի կոչման:

Երգչուհու խաղացանկում միշտ էլ մեծ տեղ է գրավել օպերային կլասիկան: Նրա ստեղծագործական բարձր նվաճումների թվին պետք է դասել Լյուբաշայի, Կարմենի, Ամներիսի, Դալիլայի դերերգերի կատարումը: Եվ սա պատահական չէ: Իրենց ողջ տարբերությամբ հանդերձ, շատ բան է միացնում այս հերոսուհիներին: Նրանք բոլորը կամային ուժեղ բնավորություններ են, նրանք ապրում են մեծ կրքերի աշխարհում, անշեղորեն գնում են դեպի նշված նպատակը, չվախենալով ոչ պայքարի թեժությունից, ոչ էլ անգամ սեփական կործանումից:

Դժվար չէ հասկանալ, որ օպերային հերոսուհիների այս տիպը առավել մոտ է Սազանդարյանի ստեղծագործական խառնվածքին և ձգտումներին:

Այս դերերգերից մի քանիսը նրա խաղացանկն են մտել, երբ նա նոր էր միայն սկսում ստեղծագործական ուղին: Այսպես, Լյուբաշայի դերերգի առաջին կատարումը նշված է 1940 թվականով, Կարմենը՝ 1941-ով, բայց համառ աշխատանքը նրանց վրա շարունակվել է նաև հետագա տարիներին: Արտիստուհին ուշադիր էր խաղընկերների կարծիքներին: Ինչպես ինքն է հիշում, առանձնապես խիստ ու բծախնդիր քննադատ է եղել Հակոբ Խանջյանը՝ նրա կյանքի հավատարիմ ընկերը: Հիասքանչ և նրբազգաց երաժիշտ, օպերային խաղացանկի հիանալի գիտակ, Խանջյանը երկար տարիներ աշխատել է օպերային թատրոնում որպես առաջին ջութակների կոնցերտմայստեր...

Լյուբաշան՝ Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովի «Թագավորի հարսնացուն» օպերայից, Ալմաստից հետո, երկրորդ մեծ դերն էր, որ Սազանդարյանը ստացավ թատրոնում: Դերասանուհու ապագայի, նրա ստեղծագործական հավատամքի ձևավորման համար մեծ նշանակություն ունեցավ այս օպերային կլասիկան: Լյուբաշայի դերերգը շատ շահավետ է երգչուհու համար: Այն գրված է հարմար տեսիտուրայով և միաժամանակ օգնում է դրսևորելու երգողի ձայնական հարուստ հնարավորությունները, այստեղ կան և՛ լայն

կանտիլենա, և՛ դրամատիկորեն արտահայտիչ ասերգեր, և՛ ներհուն քնարականություն: Ծահավետ է այս դերերգը և բեմականորեն: Դրամատիկ վիճակների սրությունը, որոնց մեջ ընկնում է Լյուբաշան, հնարավորություն են տալիս դերասանուհուն ակտիվ վերաբերմունքով դրանք դրսևորելու, բացահայտելու իր ներքին տեմպերամենտը, դրամատիկ ընդունակությունները: Սակայն Լյուբաշայի ապրումների երբեմն չափից դուրս զգայականությունը իր մեջ նաև մելոդրամայի վտանգ է պարունակում: Երգչուհու վարպետությունն էլ հենց նրա մեջ է, որ պահպանելով հանդերձ իր հերոսուհու զգացմունքների անմիջականությունը և ուժը, խաղը չչափազանցնի, չհագեցնի ավելորդ դրամատիզմով: Այս առումով Լյուբաշայի դերերգը օպերային երգչուհու իսկական տաղանդն ու վարպետությունը դրսևորող յուրատեսակ փորձաքար է:

Կերպարը ճիշտ բնութագրելու բանալին Սազանդարյանն անմիջապես չգտավ: Սկզբում նրան շատ էր գրավում իր հերոսուհու վարքի բոլոր, անգամ ամենափոքր մանրամասները բեմում դրսևորելու (և «արտահայտիչ» դրսևորելու) հնարավորությունը, իսկ դա կերպարի զարգացման միջանցիկ գիծը մասնատում էր, զրկում նհրաժեշտ միասնականությունից: Երբեմն խանգարում էր արտիստուհու բուռն տեմպերամենտը: Լյուբաշայի կերպարի վրա կատարած աշխատանքը լավ դպրոց էր դերասանուհու համար, և այն օգնեց նրան հասկանալու (թերևս, առաջին անգամ գիտակցորեն հասկանալու), որ նույնիսկ դրամատիկորեն ամենալարված և պաթետիկ պահերին անհրաժեշտ է ձգտել կատարման պարզության ու բնականության: Դրան էր մղում հենց նրա տաղանդի բնույթը, այդ արդեն շատ բանով էր բնութագրում արտիստուհու բեմական ուղին: Լյուբաշայի (հետո նաև Կարմենի) կերպարի վրա աշխատելիս այդ նպատակադրումը վերջնականապես ամրապնդվեց դերասանուհու մեջ իբրև ստեղծագործական սկզբունք և դարձավ նրա ռեալիստական արվեստի կարևորագույն հիմքը:

Լյուբաշայի կերպարում Սազանդարյանը մարմնավորում էր ոչ թե մերժված սիրո ողբերգությունը (ինչպես սովորաբար դա ընդունված է օպերային բեմում), այլ իր մարդկային արժանապատվության, այս կյանքում երջանկության իրավունք ունենալու համար պայքարելու գաղափարը:

Սազանդարյանի կատարմամբ Լյուբաշայի առաջին երգը հնչում էր լայն ու թախծոտ, ռուսական ծորուն ժողովրդական երգերի ոգով: Լյուբաշայի զգացմունքների մաքրությունն ու խորությունը

հակադրված էր արբեցման ուրախ գինարբուքի մթնոլորտին, որ իշխում էր Գրյազնոյի խնջույքում: Հերոսուհու և այդ աշխարհի միջև կոնֆլիկտը անխուսափելի էր և կանխորոշված: Այդպես կանխորոշված էր և Լյուբաշայի ճակատագիրը: Նրա երգի թախծոտ ինտոնացիաները խոսում էին արդեն փշրված և դժբախտ հոգու առկայության մասին:

Երգը, որ կարծես ներմուծված դրվագ լիներ, իրականում ստանում էր դրամատուրգիական մեծ նշանակություն: Խտացված ձևով այստեղ դրսևորված դատապարտվածության թեմայի շնորհիվ բացահայտվում էր Լյուբաշայի ողջ ճակատագրի «նախապատմությունը», իսկ Լյուբաշան արդեն կորցրել էր սերը, արդեն հակադրված էր իր շրջապատին: Եվ նրա բոլոր հետագա արարքները ընդունվում էին իբրև հուսահատության վերջին ճիգ՝ պատիվը, կյանքը, երջանկությունը փրկելու ու վերադարձնելու նպատակով: Դրա համար էլ հոգեբանորեն նախապատրաստված եղան և՛ Մարֆային թունավորելու ճակատագրական որոշման դաժանությունը, և՛ նրա խոսքերի առավել հուզառատ կրքոտությունը: Սազանդարյանը դրամատիկորեն վառ ու լարված էր անցկացնում Բոմելիի հետ նշանավոր տեսարանը: Այս տեսարանի բարձրակետն էր «Աստված քեզ կդատապարտի» արիան, որի մեջ զգացվում էին և՛ Լյուբաշայի անսահման հուսահատությունը, և՛ ապագայի մասին նրա տանջալից խոհերը, և՛ Գրիգորիի դատապարտումը՝ ոտնահարված սիրո համար...

Կարմենի դերերգը ամենասիրվածներից մեկն էր Սազանդարյանի խաղացանկում: Այստեղ նույնպես հարթ չէր եղել դեպի կերպարն ընկած ուղին: Առաջին ներկայացումներում, ինչպես նշում էին քննադատները, երգչուհին փորձում էր Կարմենին ներկայացնել որպես «դիվային» բնավորություն, որպես «ճակատագրական» կրքերով համակված կնոջ: Բայց կերպարն աստիճանաբար հղկվեց, կատարելագործվեց և, վերջապես, ձեռք բերեց գեղարվեստական ավարտվածություն: Այս օպերայում հաջողությունն անփոփոխ ուղեկցում էր երգչուհուն: Առաջին տարիներին Խոզեի դերում նրա մշտական խաղընկերն էր հիասքանչ երգիչ և դերասան Սավելև-Դամուրինը: Երևանում և այլ օպերային թատրոնների բեմերում Սազանդարյանի կողքին երգել են Կիպորենկո-Դամանսկին, Խանաևը, Նելեպը, Ուզունովը, Անգուլաձեն, Իվանովսկին և ուրիշներ:

Կարմեն-Սազանդարյանը հանդիսականներին գրավում էր կյանքի հանդեպ ունեցած անզուսպ սիրով, կրակոտ ավյունով,

խաղաձևի յուրահատուկ ազատությամբ և անմիջականությամբ: Արտիստուհու բեմում երևալը նրան ակնթարթորեն դարձնում էր ներկաների ուշադրության կենտրոնը: Եվ ոչ միայն այն պատճառով, որ նա գլխավոր հերոսուհին էր: Նրա հետ կարծես բեմ էր ներխուժում կյանքի տարերքը՝ գրավիչ ու գեղեցիկ, բայց և բարդ, մշտապես փոփոխվող, խորհրդավոր ու հանելուկային:

Սազանդարյանի ստեղծած Կարմենի կերպարը հանդիսականին ներկայանում էր զարմանալիորեն բազմադեմ: Դժվար էր որսալ, թե նա ինչպիսին կարող է լինել գործողության յուրաքանչյուր հաջորդ ակնթարթում: Նրա Կարմենը երբեմն քնքույշ էր, երբեմն դաժան, երբեմն բռնկվող, երբեմն անասելի հպարտ: Մեկ նա խաղում էր մարդկանց հետ, մեկ լուրջ էր: Եվ միշտ չէ, որ հասկանալի էր, թե երբ է «խաղում»: Բայց նրան հատուկ էին նաև իր հոգու խորքերը սուզվելու պահեր (գուշակման տեսարանը), ճշմարտախոսության և անկեղծության այրող պահեր (ֆինալը): Եվ այդ պահերը, որպես հակադրություն նախկինին, իսկապես ցնցում էին:

Կերպարի այս բազմիմաստությունն էլ իր մեջ պարփակում էր մեծ ճշմարտություն:

Երգչուհին չէր փորձում Կարմենի վզին փաթաթել մեն-մի թեմա (ասենք՝ սիրո կամ ազատության) և հետո ուղղագծորեն այն անցկացնել ողջ ներկայացման միջով: Այս կերպարի ուժը նա տեսնում էր հենց ողջ մարդկայինի հարուստ դրսևորումների մեջ: Եվ դերասանուհին, հավանաբար, իրավացի էր:

Սովետական օպերայի պատմության մեջ Սազանդարյանը մտավ որպես Կարմենի դերերգի լավագույն կատարողներից մեկը:

Ամերիսի կերպարի հետ առնչվելուն Սազանդարյանը պատրաստվում էր վաղուց: 1941 թվականին թատրոնն աշխատում էր Վերդիի «Աիդա» օպերայի բեմադրության վրա: Փորձերին մասնակցում էր և Սազանդարյանը: Բայց վերջին պահին նա, այնուամենայնիվ, հրաժարվեց հանդես գալ պրեմիերային: Երգչուհին գտնում էր, որ վոկալի առումով իսկապես, ներքևի ռեգիստրում դերերգը չի հնչում իր ուզածի պես: Եվ միայն շատ տարիներ անց նա մտավ ներկայացման մեջ: Վոկալ և բեմական առումով այս դերերգը նա պատրաստել էր մեծ վարպետությամբ:

Ամերիսի կերպարում Սազանդարյանն ընդգծում էր իշխելու տենչը, իր արքայական դիրքի գերազանցության գիտակցումը: Նրա Ամերիսը սովոր է հրամայել, ամեն գնով, անգամ խորամանկության

ու նենգության ճանապարհով հասնել իր ցանկությունների կատարմանը: Նրա կարծիքով դրանք իշխանության սովորական, բնական ուղեկիցներ են: Եվ ոչ թե խղճի խայթ, այլ չարախինդ բավարարվածություն է զգում նա, երբ հենց այդ ճանապարհով էլ հաջողվում է Սիդայից կորզել իրեն անհրաժեշտ խոստովանությունը: Բայց այս արտաքին սառնության և լրիվ ինքնատիրապետման ետևում թաքնված են, թերևս, Ամներիսի համար էլ անհիմանալի ուժգին կրքեր: Եվ դրանք դուրս են պոռթկում, երբ նա ստիպված է խոստովանել, որ փլվում է իր երջանկությունը: Խոցված հպարտությունը, խանդի տանջանքները, Ռադամեսի հանդեպ տածած սերը, և վերջինիս հնարավոր մահվան գիտակցությունից ծագած հուսահատությունը ծվատում են նրա հոգին: Ու խառնաշփոթ զգացումների այս խճճված կծիկը հնարավոր չէ ոչ բացել, ոչ էլ սրտից արմատախիլ անել: Դատաստանի տեսարանում Ամներիս-Սազանդարյանի ապրումներում իսկական ողբերգականություն կա, անկեղծ զգացմունքի խորություն: Նրան, ինչպես անտիկ ողբերգությունների հերոսուհիներին, հարկ եղավ տանջանքների գավաթը պարպել մինչև հատակը: Բայց, ի տարբերություն նրանց, դա Ամներիս-Սազանդարյանին չբերեց ոչ մեղքերի քավում, ոչ էլ հոգեկան պայծառություն: Հասկանալով պատահածի անխուսափելիությունը, նա քարանում է, անզգայանում և ապա արմատից կտրած ոստի պես թուլացած ընկնում...

Սազանդարյանի համար չկային առաջնակարգ կամ երկրորդական դերերգեր: Ամենափոքր դերում անգամ նա փնտրում ու գտնում էր նոր ու գրավիչ ստեղծագործական խնդիրներ: Դրա համար էլ նրա բոլոր (կամ գրեթե բոլոր) դերերգերը գեղարվեստորեն նշանակալից կամ հետաքրքիր էին: Դրանցից էին Մեյտուսի Ուլյանա Գրոմովան, Սպադավեկիայի Ձիտան:

Ուրբանի (Մեյերբեր «Հուգենոտներ», 1943) փոքրիկ դերում անգամ նա փայլեց կոլորատուրայի թեթևությամբ, ձայնի վիրտուոզ տիրապետմամբ: Նրա բարձր մեցցո-սոպրանոն միանգամայն այլ կերպ հնչեց Կոնչակովնայի (Բորոդին «Իշխան Իգոր», 1949) դերերգում, կամ Դալիլայի (Սեն-Սանս «Սամսոն և Դալիլա», 1950) դերերգում, ուր հմայում էր նրա թանձր, հագեցած տեմբրի գեղեցկությունը: Բեմում ընդամենը մեկ անգամ երևալիս էլ, ինչպես եղել է «Քյոր օղլի» օպերայում, նա կանգնում էր առաջատար կերպարների շարքում: Այս առումով բնորոշ խոստովանություն է թողել օպերայի հեղինակ Ու. Հաջիբեկովը. «Ինձ շատ ուրախացրեց

արտիստուհի Տ. Սազանդարյանի հանդես գալը երգչուհու էպիզոդիկ դերում: Սազանդարյանի կատարմամբ այդ փոքրիկ դերը առաջին պլան է մղվում: Սազանդարյանն իր վրա է բևեռում ունկնդիրների ուշադրությունը և արժանանում նրանց բուռն խրախուսանքին»:

Երևանի օպերային թատրոնի բեմը ազգային հիասքանչ երգչուհիներ շատ է տեսել: Բայց, անտարակույս, նրանցից ոչ մեկը չի ունեցել վոկալ և բեմական վարպետության այսպիսի ներդաշնակ համաձուլում: Այս առումով Սազանդարյանը եղել է և առայժմ մնում է որպես բացառություն:

... Այսպես տարեց-տարի, իրար ետևից անցնում էին նորանոր և այնքան տարբեր կերպարներ: Մարդկային ոգու այս անմարմին ստեղծագործությունները լինում էին պահանջկոտ և անհանդուրժող, նրանք ուզում էին բեմում ապրել իսկական, ճշմարիտ կյանքով, ուզում էին բնական ծիծաղել ու լաց լինել, սիրել ու մեռնել: Եվ նրանց «իսկական» լինելու համար դերասանուհին հարկադրված էր լիաբուռն վճարել: Նրանցից յուրաքանչյուրը կարծես իր հետ տանում էր դերասանուհու սեփական կյանքի մի մասնիկը, փոխարենը տալով, ճիշտ է, ինչ-որ այլ բան՝ արվեստի խորախորհուրդ գաղտնարանները ներթափանցելու ուժ:

Եվ, գուցե, առանձնապես ակնառու դա դրսևորվեց արտիստուհու ստեղծած վերջին կերպարներում: Դա Իոկաստայի ողբերգական կերպարն էր Ի. Ստրավինսկու «Էդիպ արքա» օպերայում և Աննան՝ Ա. Հարությունյանի «Սայաթ-Նովայում»: Աննայի կերպարը Սազանդարյանը հյուսել է իր արվեստի ամենանուրբ ու եթերային թելերից: Փխրուն գեղեցկության և բանաստեղծական հիացմունքի զգացումն ընդմիշտ մնաց նրանց հիշողության մեջ, ում բախտ էր վիճակվել լինել այդ ներկայացմանը: «Սայաթ-Նովա» օպերայի պրեմիերայից (1969) շատ չանցած Սազանդարյանը թողեց բեմը, թողեց, երբ դեռ ստեղծագործական անկման ոչ մի նշան չկար: Բայց նա գիտեր, որ բեմի օրենքներն անողոք են: Եվ դա մի անգամ ևս հաստատեց նրա բարձր պահանջկոտությունը իր և արվեստի հանդեպ...

Կամերային երգեցողությունը Սազանդարյանի ստեղծագործության երկրորդ նշանակալից բնագավառն էր: Նրա կամերային խաղացանկը մեծ էր և ընդգրկում էր մոտավորապես 450 անուն, ուր կային հայ, ռուս, սովետական, արևմտա-եվրոպական կոմպոզիտորների ստեղծագործություններ, տարբեր երկրների ժողովուրդների երգեր:

Պատմական նշանակության արժեք ունեցավ երգչուհու կողմից հայ կամերային երաժշտության պրոպագանդան: Նա դարձավ հայ կոմպոզիտորների վոկալ շատ ստեղծագործությունների առաջին կատարողը, տալով նրանց գեղարվեստական «կյանքի ուղեգիր»: Այդպես է եղել Ա. Սաթյանի, Ա. Հարությունյանի, Է. Միրզոյանի, Կ. Զաքարյանի, Ղ. Սարյանի, Ա. Դոլուխանյանի, Ս. Ջրբաշյանի, Վ. Կոտոյանի, Գ. Չթչյանի և շատ ուրիշների մի շարք ստեղծագործությունների հետ: Երգչուհու բարձր կատարումը այս կոմպոզիտորներից յուրաքանչյուրի ոճական անհատականության յուրահատկությունը հաղորդելու, նրանց ստեղծագործությունները հուզականորեն վառ ու արտահայտիչ ընթերցելու ստույգ գրավականն է: Պատահական չէ, որ դեպի նա էին ձգվում ժամանակակից հայ կոմպոզիտորները, աշխատելով, որ հենց նա լինի իրենց երգերի ու ռոմանսների առաջին կատարողը: Այս ստեղծագործություններից որևէ մեկին դժվար է նախապատվություն տալ: Այնուամենայնիվ անհնար է, օրինակ, չհիշել Ա. Սաթյանի «Դավիթ Բեկ» օրատորիայից Գայանեի երգը կամ Հ. Ստեփանյանի «Հե՛յ, Արագած» ռոմանսի ոգեշունչ, քնարական կատարումը: Այս ռոմանսի մեջ երգչուհին մտցնում էր էպիկական լայն թափ և տրամադրության վեհություն: Եվ այն հնչում էր որպես հիմն Հայաստանի բնության, որ իր վրա անտեսանելիորեն կրում է հարազատ ժողովրդի փառքի և ողբերգական փորձությունների հետքերը:

Դժվար է գերագնահատել Սազանդարյանի դերը վոկալ լիրիկայի նշանավոր վարպետ Ռոմանոս Մելիքյանի ստեղծագործության հանդեպ հետաքրքրություն արթնացնելու գործում: Նրա և կոնցերտմեյստեր Ն. Սաղյանի կողմից ամբողջովին Ռ. Մելիքյանի ստեղծագործություններից պատրաստած հատուկ համերգում (1950 թ.) հնչեցին կոմպոզիտորի շատ մոռացված կամ կիսամոռացված երգեր ու ռոմանսներ: Բացառիկ էր այդ երեկոյից ստացած գեղարվեստական տպավորությունը, ունկնդիրների առաջ կարծես բացվեց անկրկնելիորեն գունեղ ու բանաստեղծական մի ամբողջ ներաշխարհ: Այստեղ կան ժողովրդական հումորով լի հյութեղ ու կոլորիտային կենցաղային տեսարաններ («Ա՛խ, ինչ կըլի», «Դափ-դափի-դափ», «Ծույլ աղջիկ», «Սուրիկի վիշտը» երգերը), որոնց հաջորդում էին խաղաղ, սրտաճմլիկ թախիծ բերող աշնանային բնապատկերների տեսարանները («Աշնանային երգ», «Աշնանային էտյուդ»), զգացմունքների դրամատիկ պոռթկումին («Դու անհոգ նայեցիր ինձ վրա») հետևում էր կյանքի հիացական փառաբանում

(«Շափաղ կուտաս», «Ծիլ-ծիլ ա»), ապա մենակյաց կյանքի թախծոտ պատմություն («Վայրի ծաղիկ»), գարնանային արթնացման պայծառ լիրիկա («Արի, արի», «Գյուլ-գյուլի»):

Կոմիտասի երգերի սազանդարյանական կատարումը աչքի էր ընկնում վերին աստիճանի պարզությամբ և անհատական յուրահատկությամբ: Նրանց մեջ առանձնապես հիշվում են «Ալագյազը», որը երգչուհին կատարում էր թախծոտ ժողովրդական լացերգի ոգով և «Ծիրանի ծառը», որը չնայած դրամատիկ բնույթին, հնչում էր մեղմ, լայնաշունչ, իսկ վերջում, անսահման վիշտ արտահայտելիս, կարծես քարանում:

Երգչուհուն հարազատ էր և աշուղների ստեղծագործությունը: Նա հիասքանչ էր կատարում Սայաթ-Նովայի, ժամանակակից գուսաններից՝ Շերամի երգերը:

Սազանդարյանի համերգային ծրագրերում մեզ զարմացնում էր ոչ միայն երաժշտական ոճի ճշգրիտ ըմբռնումը, անբասիր ճաշակը, այլև վոկալ արվեստի գաղտնիքների այնպիսի տիրապետում, երբ ձայնն ամբողջովին ենթարկվում է կատարողի կամքին, դառնում նրա մտքերի ու զգացմունքների արտահայտիչը: Դրանից է, որ նա կարողանում էր այդքան համոզիչ վերարտադրել և՛ Գրիգի «Սոլվեյգի երգի» ակվարելային թափանցիկությունը, և՛ Լեոնորայի արիայի վիրտուոզ պասաժների փայլը Դոնիցետիի «Ֆավորիտուհի» օպերայում, և՛ Բիզեի «Հովվերգության» հմայիչ պարզությունը, և՛ Ա. Նովիկովի «Մոր երգի» քաղաքացիական պաթոսը:

Սազանդարյանի արվեստը լայն ճանաչում է ստացել ոչ միայն Հայաստանում: Նրա համերգներն ու ելույթները մշտապես հաջողությամբ են անցել Մոսկվայի, Լենինգրադի, Թբիլիսիի, Բաքվի, Խարկովի, Տաշքենդի, Օդեսայի և Սովետական միության շատ ուրիշ քաղաքների օպերային բեմերում:

Հյուրախաղերի հաջողությունը նրան ուղեկցում էր և արտասահմանում՝ Իրան, Լիբանան, Սիրիա (1956 թ.), Բելգիա (1958 և 1962 թթ.), Հունաստան (1959 թ.), Ֆրանսիա, Լյուքսեմբուրգ (1963 թ.), Հունգարիա (1946 թ.), Ալժիր (1956 թ.), Չեխոսլովակիա (1966 թ.):

Սազանդարյանը հայ արվեստը բազմիցս ներկայացրել է Շվեդիայում (1972 թ.), Գերմանիայում (1975 թ.), Շվեյցարիայում (1972 թ.), ամենապատասխանատու միջազգային համաժողովներում: Այսպես, 1958 թ. նա մի շարք ականավոր արտիստների հետ միասին մասնակցել է ՍՍՀՄ ազգային օրերին Բրյուսելի համաշխարհային ցուցահանդեսում: Նրա փայլուն կատարողական արվեստը

գնահատվեց, և երգչուհին ստացավ ՍՍՀՄ մշակույթի նախարարության հատուկ շնորհակալագիրը, որտեղ մասնավորապես նշվում էր, որ նա «իր ելույթներն անց է կացրել բարձր գեղարվեստական մակարդակով, հանդես է բերել պատասխանատվության բարձր զգացում»:

Սազանդարյանն իր արվեստը չէր պատկերացնում առանց լայնահուն կյանքի, հասարակական գործունեության հետ ամենասերտ կապերի: Հասարակական ջիղը, ակտիվ եռանդը նրա երկրորդ բնավորությունն էր: Երկու անգամ նա ընտրվել է Երևանի քաղսովետի դեպուտատ, իսկ 1958 թ. մեր ժողովուրդը նրան ցույց տվեց մեծ վստահություն՝ առաջադրելով որպես երկրի Գերագույն օրգանի՝ ՍՍՀՄ Գերագույն սովետի դեպուտատ:

Միաժամանակ Սազանդարյանը 1961 թվականից նվիրվեց մանկավարժական գործունեության: 1970 թվականից նա Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր է, 1977-ից՝ մեներգեցողության ամբիոնի վարիչ: Այդ ժամանակաշրջանում նրա դասարանն ավարտել են շուրջ 50 երիտասարդ մասնագետներ: Նրանցից Ա. Հարությունյանը և Վ. Եսաբեկյանը Սազանդարյանի մոտ ասպիրանտուրա են անցել և Մուսորգսկու անվան վոկալիստների 1964 թ. համամիութենական մրցանակաբաշխությունում մրցանակ են նվաճել, Մ. Մալունցյանը Պատվո դիպլոմի է արժանացել Պրահայի միջազգային մրցույթում: Իսկ մի քանիսն էլ անդրկովկասյան մրցույթի դափնեկիրներ են: Սազանդարյանի սաներն աշխատում են Ալ. Սպենդիայրյանի անվան օպերային թատրոնում, Ա. Խաչատրյանի անվան հայֆիլհարմոնիայում, ոմանք՝ արտասահմանում:

Սազանդարյանն իր ժամանակի առյուծի բաժինը նվիրում էր երիտասարդությանը, պատվաստելով ջերմ սեր, բարձր պահանջկոտություն արվեստի հանդեպ, խնամքոտ վերաբերմունք ազգային ավանդների նկատմամբ:

Հսկայական է այն ներդրումը, որ ունեցավ Տաթևիկ Սազանդարյանը հայրենական մշակույթի զարգացման գործում: Ազգային կատարողական արվեստի պատմության ապագա հետազոտողները դեռ կգնահատեն ըստ արժանվույն նրա վաստակը:

ԳԵՎՈՐԳ ԳՅՈՂԱԿՅԱՆ

2006

# ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԸ ՏԱԹԵՎԻԿ ՍԱՁԱՆԴԱՐՅԱՆԻ ՄԱՍԻՆ

## ՍԱՁԱՆԴԱՐՅԱՆԻ ԱՐՎԵՍՏԸ

Միայն անցածներին չէ, որ հիշում են, գրում նրանց մասին հիշողություններ, միայն երիտասարդները չէ որ հիշում են ավագներին, նրանց թեւավոր խոսքերը, վարվելակերպի հետաքրքիր դրվագները... Ոչ, դա միայն նրանց մենաշնորհը չէ: Գոնե ես չեմ ուզում ինձ զրկել իմ կրտսեր արվեստակիցների մասին հիշողություն գրելու հաճույքից:

Ընթերցողին թող չթվա, թե իմ այդ որոշումը ես արդեն ուզում եմ ի կատար ածել այս ակնարկում: Ես այստեղ կխոսեմ մեր աչքերի առաջ գործող ու զարգացող արվեստի, այդ արվեստի կրողի մասին, բայց որպես գրական հնարք, թող ինձ թույլ տրվի իմ ակնարկը սկսել Տաթևիկ Սազանդարյանի մասին իմ ունեցած հիշողությունների մի փոքրիկ դրվագով:

Հիշում եմ Սազանդարյանի դեբյուտը «Ալմաստ» օպերայի հերոսուհու դերում: Բոլորը, թե ես ու իմ սերնդին պատկանողները, ում համար օպերայի բեմն արդեն դարձել էր հարազատ տուն, թե նրանք, ովքեր դեռ նոր էին ճաշակում բեմի դժվար, երբեմն նույնիսկ դառն հաճույքը, հուզվում էինք, իսկ ամենից շատ հուզվում էր ինքը՝ դեբյուտանտուհին: Հիմք ուներ այդ հուզմունքը: Առաջին անգամ բեմ էր բարձրանում երիտասարդ երգչուհին, որ արվեստում հազիվ երկու տարեկան էր, կյանքում ընդամենը՝ 23: Բեմ էր բարձրանում կատարելու ամենադժվար վոկալ պարտիաներից մեկը, մարմնավորելու քմահաճ ու փառասեր իշխանուհու վերին աստիճանի ինքնատիպ կերպարը:

Շատ բան տեսած, շատ ճանապարհ անցած դրամատիկ երգչուհին անգամ չէր կարող առանց հուզմունքի, գուցե նույնիսկ վեհերանքի, իր ուժերը փորձել Ալմաստի դերում, ուր մնաց երիտասարդը...

Սազանդարյանին հաջողվեց: Չխոսենք այն մասին, թե դա ուժերի, արտիստական ունակությունների ինչպիսի լարման գնով ստեղծվեց: Նա, ում աչքերը մի պահ շլացել են բեմի լուսարձակների լույսից, այդ բանը լավ գիտե: Կարևորն այն է, որ առաջին դերը (այն էլ ինչպիսի դեր) հաջողվի): Եվ այդ հաջողությունն այնքան ակնբախ էր, որ երգչուհու վրա հրավիրեց ընդհանուրի ուշադրությունը, և Մոսկվայում, հայկական արվեստի առաջին տասնօրյակի ժամանակ, արժանացավ այնպիսի խոշոր արվեստագետների միահամուռ դրվատանքին, ինչպիսիք են Ա. Նեժդանովան, Ա. Մելիք-Փաշայանը և ուրիշներ, իսկ իմ լավ բարեկամը՝ Մ. Պ. Մակսակովան, «Լիտերատուրնայա գազետա»-ում գրեց. «Սազանդարյանն ինձ ապշեցրեց: 23 տարեկանում լինել այսպիսի՛ հրաշալի դրամատիկ դերասանուհի և երգչուհի»:

Սազանդարյանը կանգ չառավ, նա առաջ գնաց, աճեց, ձեռք բերեց այն, ինչ դեռ չուներ և չէր էլ կարող ունենալ Ալմաստի առաջին դերակատարման ժամանակ՝ բեմական պրոֆեսիոնալիզմ, խորացրեց իր արտիստական կուլտուրան, լայնացրեց խաղացանկը և կանգնեց մեր առաջ իր ստեղծագործական բարձր ու հմայիչ հասակով մեկ:

Ես իմ կյանքում օպերային շատ դերեր եմ խաղացել և տարիների փորձը ինձ իրավունք է տվել ասելու, որ ես գիտեմ մեր ունկնդրին, գիտեմ նրա ակնկալիքները օպերայից և յուրաքանչյուր երգիչ-երգչուհուց: Ամենախիստ քննադատն անգամ պատրաստ է երգչին ու երգչուհուն ներել միջակ կամ նույնիսկ վատ խաղը, եթե նրանք լավ ձայն ունեն և լավ են երգում, և ամենամեղմ ու անպահանջկոտ ունկնդիրն անգամ օպերայի արտիստուհուն չի կարող ներել նրա վատ ձայնը, վատ երգելը, անկախ այդ արտիստի բեմական արժանիքներից:

Ձայնը օպերայում այն ամենահաս ձեռքն է, որով դու առաջին իսկ հանդիպման պահին գերում ես ունկնդրին և ստիպում նրան անցնել քո արտիստական խառնվածքի նրբուղիներով, ընդունել կերպարներիդ երաժշտական ու բեմական մեկնաբանությունը, զգալու և ճանաչելու քեզ: Սազանդարյանը լավ ձայն ունի, և այդ աներևույթ «ձեռքը» նրան լավ է ծառայում:

Ես գիտեմ դրամատիկական թատրոնի դերասանների, որոնք բեմ են բարձրացել առանց որևէ հատուկ պատրաստության, առանց թատերական արվեստի այբը և բենը որևէ դպրոցում սերտելու: Լավագույն դեպքում նրանց համար այդ դպրոցը թատրոնն է եղել:

Բայց ես չգիտեմ, գոնե չեմ հիշում որևէ օպերային երգչի, որ բեմ բարձրացած լինի առանց մասնագիտական նախապատրաստման, առանց երգեցողության ինչ-որ «դպրոց» անցնելու: Խոսքս երաժշտական գրագիտության մասին չէ, թեպետ դա էլ, իհարկե, կարևոր է: Խոսքս ձայնի դրվածքի մասին է, որը ոչ մի դեպքում չի կարող այդ «դպրոցով» անցնելուց խուսափել: Սակայն կա նաև բնականից ձայն, որը նույնպես չի կարող այդ փուլը շրջանցել, բայց և այնպես իրենից բոլորովին այլ որակ է ներկայացնում: Կարծես նա այն ձույլ ոսկին է, որի հետ ինչ էլ անես՝ նույն ոսկին կմնա: Սազանդարյանի ձայնը բնականից լավ էր դրված: Իսկ դպրոցը, որտեղ, ի դեպ, նա շատ ավելի քիչ եղավ, քան սովորաբար ընդունված է, նրա ձայնն ամրապնդեց, դարձրեց հնազանդ՝ երգչուհու հետապնդած դրսևորումներին, նրան տվեց ընթացք և ուղղության:

Ես երաժիշտ եմ, երգչուհի, և կարող եմ մասնագիտական տերմիններով բնութագրել Սազանդարյանի ձայնը և այդ բնութագրումը կլինի ճշմարիտ: Ասենք, այսպես՝ երգչուհու մեցցո սոպրանոն ունի լայն դիապազոն, բոլոր ռեգիստրներում հնչում է համահավասար, տեմբրերը մաքուր են և հաճելի... և էլի մի քանի այսպիսի տողեր: Սակայն ես նաև ունկնդիր եմ, և բոլորովին չմոռանալով երգչուհի լինելս, ընդունակ եմ ամբողջ հոգով վերապրել երգչական արվեստի գեղեցկությունը և վերածել ավելի մարդկային, ավելի մատչելի պատկերների: Եվ երբ ես լսում եմ Սազանդարյանին, իմ ականջներում մերթ մետաղի կուռ ձայնն է հնչում, մերթ զանգերի դողանջներ, միջնադարյան զանգերի, հիմա այդ կուլտուրան կորել է. մերթ ես որսում եմ փայտյափողային գործիքների նվագը, մերթ թավջութակի, մանավանդ թավջութակի, որի անունը հայերենում աներևակայելի գեղեցիկ բառաստեղծության արդյունք է, որովհետև իր մեջ կրում է թավը, թավիշը:

Սակայն վերադառնանք Ալմաստիս, վերադառնանք այս անգամ արդեն ոչ թե հիշողության ճանապարհով, ոչ թե առաջին անգամ բեմ բարձրացած երգչուհու առաջին դերակատարմանը, այլ այն Ալմաստին, որին այսօր էլ մենք կարող ենք տեսնել բեմի վրա՝ Տաթևիկ Սազանդարյանի կատարմամբ: Իսկ այս Ալմաստը իր առաջնեկից տարբերվում է տարիների փորձով, հղկվածությամբ, կերպարի խորությամբ: Եվ այլ կերպ չէր էլ կարող լինել, չէ՞ որ մենք գործ ունենք կենդանի արվեստի, աճող արվեստագետի հետ:

Ալմաստի հարուստ կերպարը կարծես ամբողջովին հակասու-

թյուններից է հյուսված և, ըստ երևույթին, բոլորովին էլ հարկավոր չէ թատերագետ լինել հավաստելու համար, որ այդ կերպարը օպերայի սկզբից իսկ Սազանդարյանի մոտ գտնում է համոզիչ, դրամատիզմով հագեցած մեկնաբանություն: Ելնելով դերի էությունից, զարմանալի մետամորֆոզներ է ապրում այստեղ Սազանդարյանը: Ալմաստը՝ սիրող և նրբազգաց կին, իր ամուսնու փայլով ու փառքով ապրող, Ալմաստը՝ սիրո և գեղեցկության մարմնավորում, ամեն ինչ թեթև և ուրախ ընդունող... Եվ մեր աչքերի առաջ նույն այդ Ալմաստի մեջ, որ աշուղի երգի, նրա խոստումների ազդեցության տակ մտորումների մեջ է ընկել, մեկ ուրիշ Ալմաստ է սկսում ծնվել, ավելի ճիշտ՝ արթնանալ: Արթնանալ, որովհետև նա կար, բայց քնած էր: Մեր աչքերի առաջ հետզհետե հյուսվում է այդ նոր Ալմաստը, միս ու արյուն է առնում, ամբողջանում, ի վերջո, մեր առաջ նա կանգնում է իր հոգու ողջ տգեղությամբ՝ նույն գեղեցիկ դեմքի տակ, նույն գեղեցիկ մարմնի մեջ: Այնուհետև, պասսիվ համոզմունքը ակտիվ գործողություն է դառնում, տգեղ հոգին բռնում է մատնության ճանապարհը: Եվ ինչպես ձորը գլորվող քարը քանի գնում, այնքան ավելի արագ է թավալվում, այդպես էլ Սազանդարյանի Ալմաստը քանի գնում՝ այնքան ավելի հախուռն է վերապրում և իրականացնում մատնությունը: Իսկ վերջին պահին, երբ նա՝ գիշերի պես, հանցագործության պես մութ քողը գլխին, կարծես ինքնամոռացման մեջ, վազում է բերդի դուռը բանալու, հանկարծ մի պահ, միայն մի պահ, նրա մեջ արթնանում է մարդը, ավելի ճիշտ՝ մարդկային մի ինչ-որ հյուլե, նա մի պահ հապաղում է, երկյուղով, ափսոսանքով լի մի հայացք է գցում մատնության գինու ուժով քուն մտած խրախճանքի սրահի վրա, բայց հետևյալ պահին նրա աչքերը դարձյալ բոցավառվում են... և կատարվում է անուղղելին:

Ձայնային հարուստ տվյալները Սազանդարյանին օգնում են դյուրությամբ հաղթահարելու Ալմաստի վոկալ պարտիտուրայի դժվարությունները, ինչպես ինտոնացիոն-տեսիտուրային կարգի, այնպես էլ՝ կապված վոկալ-օրկեստրային համահնչյունության հետ: Ասերգային դրվագներում ևս նա հասնում է արտահայտչականության և դրա օգնությամբ ավելի շեշտում իր կերպարի բեմականությունը:

Իր դիրքով, հոգու մի ինչ-որ անկյունով Ալմաստին հիշեցնող կերպար է Փառանձեմը Տ. Չուխաջյանի անմահ «Արշակ Երկրորդից» և, միաժամանակ, նրանից խորապես տարբեր:

Շատ ավելի տարբեր են երաժշտական այն միջոցները, որոնց

օգնությամբ բնութագրված են այդ երկու հերոսուհիները: Եվ, չնայած այդ տարբերությանը, Սազանդարյանն այստեղ ևս նույնքան ճշմարտացի է ու համոզիչ, նրա կատարումը նույնքան հուզական է, որքան «Ալմաստում»:

«Ալմաստի»՝ արևելյան կոլորիտով հագեցած երաժշտության փոխարեն «Արշակ Երկրորդում» երգչուհին գործ ունի արևմտյան, հատկապես իտալական վոկալ երաժշտությանը հատուկ ստեղծագործական լեզվի, տեխնիկապես չափազանց բարդ պարտիայի հետ: Եվ այդ պարտիան Սազանդարյանը կատարում է այնպիսի անմիջականությամբ ու թեթևությամբ, գեղարվեստական ներգործության այնպիսի ուժով, այնքան լավ է պահպանում Չուխաջյանի երաժշտության ողջ նրբությունը, ռիթմն ու ֆակտուրայի հստակությունը, որ, թվում է, Սազանդարյանի մատուցման կերպը այդ պարտիայի կատարման միակ եղանակն է, իսկ նրա կերտած կերպարը՝ Փառանձեմի կերպավորման միակ հնարավոր ճանապարհը: Դա, իհարկե, այդպես չէ: Փառանձեմի երաժշտական և դրամատիկ կերպարը մեկնաբանման շատ և շատ հնարավոր ձևեր ունի, շատ ճանապարհներ, որոնք, ի վերջո, նույն նպատակն են հետապնդում: Եվ արվեստը հենց նրանով է արվեստ, որ ենթադրում է նույն երևույթի բացահայտման անսահման շատ հնարավոր ձևեր ու կերպեր՝ կապված արվեստագետի խառնվածքի ու ձգտումների, նրա ստեղծագործական անհատականության հետ: Այսպիսով, ես հեռու եմ Սազանդարյանի Փառանձեմը (կամ Ալմաստը և մյուս դերերը) եզակի հնարավորը ճանաչելու մտքից, սակայն ինձ, ինչպես նաև յուրաքանչյուր մասնագետ կամ ոչ մասնագետ ունկնդրի, լավ խաղի ու երգեցողության անմիջական տպավորության տակ այդ մեկնաբանությունը կարող է մի պահ միակ հնարավորը թվալ:

Ինչպես «Ալմաստում», այնպես էլ այստեղ, արտիստուհին կարողանում է մի կուռ ու միասնական կերպարի մեջ ամփոփել տարբեր զգացմունքների մի հարուստ գամմա:

Սակայն միայն Ալմաստով ու Փառանձեմով չէ, որ մենք պետք է ճանաչենք Սազանդարյանին օպերայում, միայն Ալմաստից մինչև Փառանձեմը ընկած ճանապարհով չէ, որ մենք պետք է չափենք նրա դիապազոնը օպերային խաղացանկում: Այդտեղ դերեր կան՝ իրարից անասելի հեռու, իրար հետ ոչինչ ընդհանուր չունեցող ոչ ժամանակով, ոչ արտահայտած գաղափարով, ոչ մեկնաբանման համար անհրաժեշտ միջոցներով, բայց և մի առանցքի շուրջ հավաքված: Այդ առանցքը արվեստագետի անհատականությունն է,

որ չխախտելով ներկայացվող կերպարի ինքնատիպությունը, մի աներևույթ թելով նրանք իրար է կապում:

Ծնորհիվ Սազանդարյանի արտիստական վառ խառնվածքի, դժվար չէ նրա արվեստում այդ թելը հետապնդել, և նա, սկիզբ առնելով «Ալմաստից», կգնա՝ կանցնի նրա կատարած դերերի հարուստ պատկերաշարքով, որտեղ զարմանալի կերպով կողք-կողքի կենակցում են հայրենիքի ազատության համար իր կյանքը զոհող Ուլյանա Գրոմովան (Յու. Մեյտուս՝ «Երիտասարդ գվարդիա»), և հազարամյակներ առաջ «ապրած» պագշոտ ու քինախնդիր Ամներիսը (Վերդի՝ «Ամիդա»), ֆրանսիական արիստոկրատը՝ պաժ Ուրբանը (Մեյերբեր՝ «Հուգենոտներ») և գերմանացի բյուրգերուհին՝ Զիբելը (Գունո՝ «Ֆաուստ»), կոլտնտեսուհի Նազելին (Հ. Ստեփանյան՝ «Հերոսուհին») և ռուսական միջնադարից եկող Կոնչակովնան (Բորոդին՝ «Իշխան Իգոր»), հին Հրեաստանի ավանդական Դալիլան (Սեն-Սանս՝ «Սամսոն և Դալիլա») և ռուսական ազգայինը այնքան անմիջականորեն, իր մեջ կրող Լյուբաշան (Ռիմսկի-Կորսակով՝ «Թագավորի հարսնացուն»): Ես այլևս դերեր չեմ թվարկի, առավել ևս՝ կանգ չեմ առնի նրանց վրա: Բայց իմ բերած ցուցակը թերի կմնար, եթե ես չհիշատակեի Կարմենի դերը, որը Սազանդարյանի մեկնաբանմամբ կյանքի ու սիրո մի սքանչելի ձոն է: Այստեղ այնքան արտահայտիչ է Սազանդարյանի կատարումը, ձայնն այնքան հարուստ է երանգներով, այնքան, եթե կարելի է այսպես ասել՝ բովանդակալից, որ կարող ես փակել աչքերդ, բայց դեմդ տակավին կանգնած կլինի նույն Կարմենը, նույն կրքոտ, ավյունով լի հերոսուհին:

Տաթևիկին ես նույնքան սիրում, նրա ձիրքը նույնքան գնահատում եմ նաև կամերային արվեստում:

Եկեք խոստովանենք, որ երբեմն օպերայի արտիստները, ճիշտ է, այդպիսիները հազվագյուտ են, չեն ցանկանամ իրենց «օլիմպիական» բարձունքներից ներողամտաբար «իջնել» մինչև կամերային երգը, իսկ եթե «իջնում» էլ են, ապա կլասիկներից այն կողմ չեն անցնում: Բայց որ նրանք երգեն սկսնակ հեղինակների ստեղծագործությունները, մանավանդ՝ գուսանների երգերը... այդպիսի շատերի՞ն արդյոք կարող եք թվել...

Դժվար բնագավառ է կամերային երգեցողությունը, ունի իր խութերն ու մացառները և, մինչև վերջ անկեղծ լինելու համար պետք է ասեմ, որ, ըստ իս, որոշ «օլիմպացիների» հրաժարիմքն այս բնագավառից՝ հարուցված է նրանց վախով, գուցե նույնիսկ

անգորությամբ, ոչ թե «բարձր» նկատառումներով: Այլապես նրանք չէին հրաժարվի երաժշտական կուլտուրայի այս վերին աստիճանի ժողովրդական, գուցե և ավելի ժողովրդական, քան օպերան, բնագավառից:

Վերը ես ակնարկեցի, թե ինչպիսի լայն օպերային խաղացանկ ունի Սազանդարյանը: Նույնքան լայն է ու բազմազան երգչուհու կամերային երգացանկը: Նրա համերգներում հնչում են թե՛ հանճարեղ Կոմիտասի երգերը, թե՛ Սպենդիարյանի և Ռոմանոս Մելիքյանի ռոմանսները, թե՛ ժամանակակից հայ կոմպոզիտորների վոկալ ստեղծագործությունները և թե՛, ի վերջո, հայ ժողովրդական ու գուսանական երգերը: Իսկ Կոմիտասից մինչև Ռոմանոս Մելիքյան, Ռոմանոս Մելիքյանից մինչև մեր երիտասարդ կոմպոզիտորների էստրադային երգերը, այդ երգերից մինչև գուսանականը (ես դեռ չեմ խոսում երգչուհու ռուսական և արևմտաեվրոպական երգացանկի մասին) ինտերվալները եթե մեծ չեն, ապա հաճախ փոքր էլ չեն տարբեր օպերային պարտիաների մեջ եղած ինտերվալներից: Ես, որ իմ արտիստական ողջ կյանքը օպերայի բեմում եմ անցկացրել, սիրում եմ օպերան և, գուցե երաժշտական բոլոր ասպարեզներից ամենից ավելի բարձր դասում, քիչ չեմ հանդես եկել նաև կամերային ծրագրերով և գիտեմ, թե կատարողից ուժերի ինչպիսի լարում, հնարավորությունների մոբիլիզացում, ինչպիսի ոգևորված ստեղծագործական աշխատանք է պահանջում կամերային ծրագիրը: Յուրաքանչյուր երգ, մանավանդ, եթե դրանք տարբեր ստեղծագործողների երգեր են, իր երաժշտական լեզուն ունի, իր տրամադրությունը, իր բառերը, վերջապես՝ իր ժամանակն ու միջավայրը, և երգչուհին երգից երգ արտահայտության նոր և ուրույն միջոցներ է դրսևորում:

Այդպիսին է Սազանդարյանի արվեստը ոչ միայն նրա հայկական կամերային երգացանկում, այլև ռուսական ու արևմտաեվրոպական կլասիկների՝ Չայկովսկու, Ռախմանինովի, Գլազունովի, Մոցարտի, Շուբերտի, Գրիգի, Շումանի, Բրամսի և ուրիշների երգերը կատարելիս:

Ի դեպ, գուցե և արժեր փոքր ինչ հանգամանորեն պատմել այն մասին, թե ինչքան հարուստ և բազմազան է Սազանդարյանի՝ ռուսական և արևմտաեվրոպական երգացանկը և ինչքան լավ է կատարում նա այդ ստեղծագործությունները, սակայն ներկա դեպքում, ըստ իս, առաջնահերթ կարևորություն է ներկայացնում հայ երգը: Ես շատերին գիտեմ, այդ թվում նաև երգիչների, որոնք

անզուգական վարպետությամբ ու ներշնչումով են կատարում ռուս, իտալացի, գերմանացի և այլ կոմպոզիտորների ստեղծագործությունները: Սակայն, մեղքս ի՞նչ թաքցնեմ, ես չեմ կարող ասել, որ շատերն են մեր հայ երգը լավ երգում, անգամ հայ կատարողները, որոնց համար այդ երգը հարազատ միջավայրի ու հարազատ մշակույթի ծնունդ է:

Սազանդարյանը լավ է երգում մեր երգը և այդ լավի տակ ես նախ և առաջ ուզում եմ շեշտած լինել պոետական այն նուրբ, բայց և կյանքով լի շունչը, որ հաղորդում է նա իր կատարած երգերին, և այն, որ երգչուհին կարողանում է հարազատ մնալ հայ լեզվին, հայ երաժշտության ինտոնացիոն կարգին, նրա մելոդիկ հստակությանը, կատարողական արվեստին:

Ես շատ եմ ուզում, որ իմ՝ այնքան մեծ ակնածանքով գործածած հարազատ բառը հնչի որպես ուղղակի հակադարձ համեմատականը կատարողական այն պրիմիտիվին կամ դիտավորյալ պրիմիտիվացման, որոնք բուն հայերենի անվան տակ ժողովրդին են հրամցվում հատկապես ժողովրդական գործիքների անսամբլների հետ հանդես եկող շատ երգիչ-երգչուհիների կողմից: Թող վատ ճաշակի հովանավորողները չփորձեն ժանր տերմինը վահան դարձնել՝ պաշտպանելու համար վատը և պրիմիտիվը:

Արդեն հին ճշմարտություն է, որ չկան լավ և վատ ժանրեր, այլ կան բոլոր ժանրերի լավ և վատ ստեղծագործություններ, լավ և վատ մեկնաբանողներ, կատարողներ: Վերցնենք, դիցուկ, գուսանական երգը, ժողովրդական ստեղծագործության այդ հիանալի բնագավառը, որ վատ ճաշակի բույն է դարձել և ձեռք բերել պրիմիտիվ ժանրի տխուր համբավ: Իհարկե այստեղ կան որևէ արժեքից զուրկ օրինակներ, բայց խոսքս լավ օրինակների մասին է: Երբ այդ լավ օրինակներն անգամ կատարում են վատ ճաշակի պրոպագանդիստները, ապա այդ երգերը թվում են իրենց կատարողների նման պրիմիտիվ, այնինչ նույն այդ երգերը Տաթևիկ Սազանդարյանի կատարմամբ հնչում են որպես արվեստի իսկական գործեր:

Ո՞րն է գաղտնիքը: Գաղտնիքը, եթե կա այդպիսին, ստեղծագործական այն կուլտուրան է, որ երգչուհուն հնարավորություն է տալիս հեռու մնալ պարզունակ էթնոգրաֆիզմից և կատարվող երգը բարձրացնել իր մակարդակին: Առանց այդպիսի կուլտուրայի առկայության՝ մեր երգը չի կարող հարազատ հնչել: Այսպիսով, կուլտուրա և հարազատություն բառերը, գոնե ինձ համար,

սերտորեն միակցված են, և դա այդպես պետք է լինի ոչ միայն ինձ համար, այլև բոլորի, որովհետև մենք Կոմիտաս ենք ունեցել:

Մի լավ հատկություն ևս. հայ վոկալ երաժշտության նմուշների կատարման և ժողովրդականացման իր շնորհակալ աշխատանքում Սազանդարյանը հատուկ սեր է ցուցաբերում դեպի հայ կոմպոզիտորների նորաստեղծ գործերը, հանդես գալով որպես նրանց առաջին կատարողն ու պրոպագանդիստը: Հայ օպերաների համապատասխան ամպլուայի հերոսուհիների պարտիաները, մեր երգարվեստի բազմաթիվ նմուշներ հայ ունկնդիրն առաջին անգամ լսել է Տաթևիկ Սազանդարյանի կատարմամբ, և այդ ստեղծագործությունների համար Սազանդարյանի կատարումը դարձել է կյանքի ուղեգիր:

Իսկ գիտե՞ք, թե ինչ է նշանակում որևէ ստեղծագործություն կատարել առաջին անգամ, և թե որքան բան է կախված այդ առաջին կատարումից: Երևի շատերդ գիտեք, որովհետև կյանքի և մշակույթի բոլոր ասպարեզներում էլ առաջին նախաձեռնության էությունը նույնն է, տարբեր են ձևերն ու արտահայտության միջոցները: Նոր կերտված ստեղծագործությունն առաջին անգամ բեմ բարձրացնող արտիստին ես հաճույքով կհամեմատեի խիզախ ճանապարհորդի հետ, որի անցած տեղանքին մարդու ոտքը մինչ այդ դեռ չի կպել:

Թող ընթերցողն այն տպավորությունը չստանա, թե ես ի վիճակի չեմ կամ չեմ ուզում Սազանդարյանի արվեստում բացեր ու թերություններ տեսնել և ամեն ինչով այն համարում եմ կատարյալ (կա՞ արդյոք այդպիսի արվեստ): Եթե կան ստեղծագործական մտորումներ և որոնումներ, ճանապարհներ, որ արվեստագետն առաջին անգամ է անցնում, եթե կա կենդանի մարդը՝ իր մարդկային բոլոր հատկություններով հանդերձ, ուրեմն՝ կան նաև բացեր ու թերություններ: Դրանք կան Սազանդարյանի մոտ ևս: Արժե դրանց մասին խոսել, բայց ես դա թողնում եմ մանրակրկիտ վերլուծությունների մասնագետներին:

Սակայն, սիրելով Սազանդարյանին ու նրա արվեստը, ունենալով տարիքով ու փորձով մեծի առավելություն (եթե դա կարող է առավելություն ճանաչվել), ես ինձ իրավունք եմ վերապահում նրան մի քանի մտերմական խորհուրդներ տալ:

...Ինձ թվում է, որ օպերայի բեմում Տաթևիկը երբեմն արտաքին էֆեկտներին ավելի շատ նշանակություն է տալիս, քան նրանք արժեն: Ճիշտ է, այդ արտաքին էֆեկտները ստեղծում են գունեղ

դեկորատիվություն և ժլատ օգտագործման դեպքում արտիստին օգնում են բացահայտել իր հետապնդած կերպարի այս կամ այն կողմը, բայց նրանք ընդունակ են նաև խանգարելու արտիստին կերպարի մեկնաբանման, իսկ ունկնդիրներին՝ ընկալման գործում:

Պատահում է, որ Սազանդարյանը դրամատիզմ է դնում այնտեղ, որտեղ դրա կարիքը չի զգացվում, օրինակ՝ պարզ պատմողական տեքստի, կամ հայեցողական լիրիկայի մեջ: Իսկ դրանից ինչ-որ չափով տուժում են նույն գործերի մեջ հանդիպող իսկապես դրամատիկ պահերը, որովհետև այստեղ արտիստուհու դրսևորած դրամատիզմը չի հակադրվում խաղաղ տրամադրության հետ և մասամբ կորցնում է իր հնչեղությունը:

Դեպի նորը տածած սերը և այն ամեն լավը, որ կրում է իր արտիստական խառնվածքում Տաթևիկը, և որը ես վերևում աշխատեցի իմ ուժերի ներածին չափ ցույց տալ, նրան հնարավորություն են տալիս արվեստում երիտասարդ մնալ, առաջ գնալ մեր օրերի հետ համընթաց: Դա մի ունակություն է, ձիրք, որին պետք է ձգտեն բոլոր արվեստագետները՝ անկախ հասակի և տաղանդի մեծությունից:

ՀԱՅԿԱՆՈՒՇ ԴԱՆԻԵԼՅԱՆ
1956թ.

## ԱՆՁՆՁԵԼԻ ԵՆ ՆՐԱ ՍՏԵՂԾԱԾ ԿԵՐՊԱՐՆԵՐԸ

Տաթևիկ Սազանդարյանը հայ օպերային բեմի զարդերից է: Ձայնային ու դերասանական հիանալի տվյալները, բեմական գերազանց կուլտուրան ու ճաշակը, բարձր պրոֆեսիոնալիզմը իրավունք են տալիս նրան կոչել Վարպետ՝ բառի իսկական իմաստով:

Իմ հիշողության մեջ մինչև այսօր անմոռանալի են նրա մարմնավորած Ալմաստն ու Փառանձեմը: Դրանք օպերային, բեմական կատարողական արվեստի իսկական գլուխգործոցներ են, կերպավորման ամբողջական արտահայտություններ:

Տաթևիկ Սազանդարյանի փայլուն արվեստը վաղուց արդեն դարձել է մեր մշակույթի տարեգրության գեղեցիկ էջերից մեկը:

ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆ

## ԻՄ ՎԱՂԵՄԻ ԲԱՐԵԿԱՄԸ

1938 թվականին, Թբիլիսիում նշանավորվում էր Շոթա Ռուսթավելու ծննդյան 750-ամյակը: Բազմաթիվ հյուրեր էին ժամանել և նրանց թվում շատ նշանավոր արտիստներ:

Իմ բախտը բերեց՝ ես եղբայրական Հայաստանից եկած բոլորովին երիտասարդ մի երգչուհու ելույթի դիրիժորն էի:

Երիտասարդ երգչուհին Տաթևիկ Սազանդարյանն էր: Ինչպես հիմա, հիշում եմ նրան, փխրուն, կանացի հմայքով առլեցուն, հիասքանչ տեմբրով, թարմ, զրնգուն ձայնով և արտիստական փայլուն տվյալներով:

Նա Կարմեն էր երգում:

Այդ կատարումը այնպես գրավեց դահլիճը իր էֆեկտով և միաժամանակ անմիջականաթյամբ, որ իր ոգևորությանը հագուրդ տալու համար դահլիճը սկսեց «բիս» կանչել՝ չնայած ժամանակի խստագույն սահմանափակման:

Ավելի ուշ ես Տաթևիկին հանդիպեցի Պալիաշվիլու անվան օպերային թատրոնում, Թբիլիսիի ֆիլհարմոնիայի ամառային այգու համերգներում, ուր տեղի էին ունենում մեր համատեղ ելույթները վրացական ֆիլհարմոնիայի նվագախմբի հետ:

Աշխատասիրությունը Սազանդարյանի առանձնահատուկ հատկանիշն է: Ինձ, որպես երաժշտի, շատ հաճելի էր տեսնել, որ կարճ ժամանակահատվածում նա դարձել է հասուն արվեստագետ և արդեն ժողովրդական արտիստ է:

Համերգներում, ուր ես դիրիժոր էի, կատարվում էին արիաներ եվրոպական օպերաներից, ռուսական դասական գործեր և հայկական ժողովրդական երգեր:

Սազանդարյանի կատարումներն իրենց բարձր կուլտուրայով, նրա ստեղծած ակնառու կերպարներով և հայկական ստեղծագործությունների կատարման ակադեմիական կոլորիտով միշտ էլ հիացնում են վրացի երաժշտասերներին:

Շատ ժամանակ է անցել, բայց ես չեմ կարող չհիշել Տ. Սազանդարյանի հյուրախաղերը Սև ծովի ափերով՝ Սոչի-Գագրա-Նոր Աֆոն՝ վրացական սիմֆոնիկ նվագախմբի հետ:

Սազանդարյանի ելույթներից մեկի ժամանակ, մինչև նրա բեմահարթակ ելնելը, անձրև սկսվեց: Տաթևիկը սարսափելի հուզվել էր, որ համերգը կխափանվի, բայց արդեն հայտարարվել էր համերգի երկրորդ բաժինը սկսելու մասին: Չնայած հորդառատ անձրևին, ոչ մի ունկնդիր չհեռացավ դահլիճից: Այդ համերգը՝ շնորհիվ ազնվաբարո հանդիսատեսի, անցավ մեծ հաջողությամբ:

Բազմաթիվ անգամներ եմ լսել Տաթևիկին օպերաներում ուհամերգներում ուրիշ դիրիժորների մասնակցությամբ, վկա եմ եղել նրա մեծ և արժանի հաջողություններին:

Հատկապես նշանավոր էր նրա Ամերիսի դերերգը, որտեղ հիանալի ձայնային տվյալների կողքին երգչուհին ցույց տվեց դերասանական խաղի բարձր վարպետություն:

Տաթևիկի հետ մենք մեծ բարեկամներ ենք և առավել հաճելի էր ինձ հանդիպել նրան նաև վոկալիստների մրցույթի ժամանակ որպես հանձնաժողովի անդամ, որտեղ ես մեծ բավականությամբ լսում էի նրա շատ սկզբունքային և գեղարվեստական դիպուկ ձևակերպումները:

ՕԴԻՍԵՅ ԴՄԻՏՐԻԱԴԻ

## ՀԻԱՍՔԱՆՉ ԵՐԳՉՈՒՀԻՆ

Ինձ վիճակվեց աշխատել դրամատիկական և երաժշտական մեր թատրոնների բոլոր նշանավոր արտիստների հետ: Այդ համաստեղության մեջ Տաթևիկ Սազանդարյանը փայլել է իր ուրույն և ինքնուրույն շողարձակումով:

Ես եղել եմ նրա արտիստական հարուստ տարեգրության վկաներից ու մասնակիցներից մեկը: Բեմադրել եմ տասից ավելի օպերաներ, ուր Սազանդարյանի մասնակցությունն առանձին փայլ ու հմայք է հաղորդել այդ ներկայացումներին:

Ինձ համար, իբրև ռեժիսորի, մեծ բավականություն է եղել տաղանդավոր արտիստուհու հետ աշխատելը, ինչո՞ւ միայն ինձ, նաև դիրիժորների, ներկայացման բոլոր մասնակիցների համար և դա հասկանալի է, որովհետև հայտնի երգչուհին և դերասանուհին օժտված է արտիստական բացառիկ տաղանդով: Բնությունը նրան պարգևել է թովիչ ձայն, անբասիր երաժշտականություն, հուզական ու վարակիչ ներքին, խոսքի հստակ արտաբերման ունակություն: Նա նվաճել է վոկալ արվեստի նուրբ տեխնիկան, դասական ու ժողովրդական ազգային երաժշտության խոր ընկալման հետ՝ կատարողական բարձր վարպետություն:

Սակայն այս ամենը նրա տաղանդի դեռ մի երեսն է միայն: Չէ՞ որ փայլուն երգչուհին միաժամանակ փայլուն դերասանուհի է, դերասանուհի՝ բառիս իսկական իմաստով: Ունենալ հարուստ ու մշակված ձայն, հարդարվել ու բեմ բարձրանալ կարող են շատերը, բայց երգելով կերպար ստեղծելու, մարդկային որոշակի բնավորություն կերտելու տաղանդ, ավաղ, բացառիկներին է շնորհված: Սազանդարյանն ահա այդ երջանիկ բացառիկներից է, որ կարողանում է երաժշտական ու դրամատիկական արվեստները օրգանապես համադրել, սինթեզել: Մի բան, որի համար պահանջվում են, նախ և առաջ դերասանական բարձր կարողություններ:

Ես դժվարանում եմ որոշել, թե առաջնայինը Սազանդարյանի մոտ երգչուհի՞ն է, թե դերասանուհին... Վստահ եմ, եթե օպերային արվեստը գոյություն չունենար՝ ապա Սազանդարյանն այսօր կլիներ Սունդուկյանի անվան դրամատիկական թատրոնի լավագույն դերասանուհիներից մեկը: Դրամատիկական դերասանուհու դպրոցը նա անցել է Մոսկվայում, Ռուբեն Սիմոնովի ղեկավարությամբ, ուստի

մեր հիացմունքը արտիստուհու դերասանական կարողությունների նկատմամբ արդարացված է, հիմնավորված:

Տաթևիկ Սազանդարյանն ունի ստեղծագործական վառ երկակայություն և կերպարային մտածողություն, ակտիվ ենթագիտակցական աշխարհ և զարմանալի աշխատասիրություն, գիտե մանրամասն ուսումնասիրել կերպարի հետ առնչվող տարբեր հարցերն ու պատմական միջավայրը, մտածող է, որոնող և խստապահանջ իր նկատմամբ: Այս ջանքերը նա ուղղում է բեմական կերպարի առավել ճշգրիտ մեկնաբանման նպատակին:

Պրոֆեսիոնալ այս բարեմասնությունների հետ մեկտեղ, Սազանդարյանը սքանչելի տիրապետում է իր մարմնին, ճկուն է, պլաստիկ, խորեոգրաֆիկ բարդ ձևերին հարմարվող: Բեմի վրա նա բացարձակ անկաշկանդ է, հմայիչ:

Պետք է նշեմ նաև, որ հարգարժան դերասանուհին ունի և հումորի սուր զգացողություն, կոմիկական բնավորություններ գծագրելու վարպետություն, որը վկայում է նրա տաղանդի բազմերանգության մասին:

Սազանդարյանը իրարից բոլորովին տարբեր բնավորություններ կերտելու վարպետ է: Հիշենք նրա հոյակապ Ալմաստը, հոգեկան տվայտանքների մեջ ալեկոծվող, փառասեր ու տիրական հայ իշխանուհուն: Իսկ նրա կողքին նուրբ ու քնքշագին, քնարական Թամարն ու Աննան: Բոցավառ Կարմենն ու խղճուկ, անօգնական մանչուկ Բերբերոն:

Դասական ու սովետական օպերաներում նրա կերտած կերպարները կմնան իբրև մեր օպերային արվեստի հարստություններ: Երեսունհինգ տարի շարունակ Տաթևիկ Սազանդարյանը փայլել է մեր օպերային արվեստի երկնակամարում իբրև նրա ամենապայծառ աստղերից մեկը, որի շողարձակումները հասել են մեր միության բոլոր ծայրերը և դեռ ավելի հեռուները:

ՎԱՐԴԱՆ ԱՃԵՄՅԱՆ
1974

Երբ 1938 թվականի սկզբին որոշվեց հայ արվեստի ու գրականության տասնօրյակի նախապատրաստման խնդիրը, ամբողջ լրջությամբ ծառացավ Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայի հիմնական դերակատարների կազմի հարցը: Տասնօրյակը պիտի բացվեր այդ օպերայով:

Հաշվի առնելով Տաթևիկ Սազանդարյանի կատարողական և արտաքին բացառիկ տվյալները, որոշվեց նրան ընտրել Ալմաստի դերերգի կատարման համար:

Մենք լավ էինք հասկանամ, որ մեզ վրա վերցնում ենք արտակարգ բարդ ու պատասխանատու ստեղծագործական խնդիր: Եվ ահա մենք մեծ զգուշությամբ ձեռնարկեցինք այդ դժվարին աշխատանքը:

Ամենօրյա երաժշտական պարապմունքները, որ ես և կոնցերտմայստեր Նինա Գրիգորի Սաղյանը անց էինք կացնում Տաթևիկ Սազանդարյանի հետ, պահպանելով երիտասարդ երգչուհու հետ պարապելու զգուշության բոլոր կանոնները, շուտով նկատելի արդյունքներ տվեցին, իսկ քիչ ուշ լրիվ համոզեցին, որ սկսած գործը հաջողություն կունենա:

Պետք է խոստովանեմ, որ այն ժամանակ ինձ զարմացնում էր Տաթևիկ Սազանդարյանի ապշեցուցիչ աշխատունակությունը: Դասից-դաս նա գալիս էր ոչ միայն ցուցումները գերազանց կատարած, այլև Ալմաստի երաժշտական կերպարի խորության մեջ թափանցած: Ալմաստի բարդ և հակասական կերպարը պահանջում էր վոկալ-երաժշտական կատարման մեծ ճկունություն: Առաջին իսկ փորձերը ցույց տվին, որ մենք չենք սխալվել մեր մտադրություններում և հույսերում:

Դժվար է բառերով հաղորդել ուրախության այն զգացումը, որ համակեց մեզ Ալմաստի դերերգի այդ երիտասարդ և տաղանդավոր կատարողի ստեղծագործական լարված աշխատանքի փայլուն արդյունքների համար, որոնք լիովին դրսևորվեցին Սովետական Միության Մեծ թատրոնի բեմում, 1939 թվականի աշնանը, հայ արվեստի տասնօրյակի օրերին:

Տաթևիկ Սազանդարյանը Ալմաստ երգել է բազմաթիվ անգամներ: Չխաթարելով երաժշտական-բեմական կերպարի հիմնականը, նա յուրաքանչյուր ներկայացման մեջ ներմուծում էր նոր գծեր, որոնք հարստացնում էին Ալմաստի կերպարը:

Հետագայում Տաթևիկ Սազանդարյանի հետ ես պատրաստեցի համաշխարհային օպերային կլասիկայի դժվարագույն դերերից մեկը՝ Կարմենի դերերգը: Նա մեծ հմայքով կատարեց նաև Թամարի դերերգը Ա. Տիգրանյանի «Դավիթ Բեկ» օպերայում:

Տաթևիկ Տիգրանովնայի ստեղծագործական կենսագրության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում կամերային համերգների շարքը՝ Ռոմանոս Մելիքյանի, Սպենդիարյանի, Չայկովսկու, Ռախմանինովի, Գրիգի, Բալակիրևի, Լիստի և այլ կոմպոզիտորների գործերից: Հետաքրքիր էին Պուշկինի և Իսահակյանի տեքստերով գրված ռոմանսների նրա համերգները:

Կատարողական արվեստի այս դժվարին բաժինը Տաթևիկ Տիգրանովնան, առաջին շրջանում հաղթահարում էր իրեն հատուկ համառությամբ և վարպետությամբ:

Ներկայումս Տաթևիկ Տիգրանովնան, որպես Երևանի կոնսերվատորիայի պրոֆեսոր, երիտասարդ երգիչներին է հաղորդում իր գիտելիքները և կատարողական հարուստ փորձը:

Տաթևիկ Տիգրանովնայի մանկավարժական գործունեությունը դարձավ նրա անժխտելի շնորհներից մեկը:

ԳԵՎՈՐԳ ԲՈՒԴԱՂՅԱՆ
1974

## ՄԱՍՈՒՆՔ ՎԱՐՊԵՏԻՑ...

1944-ի գարնանն էր:

Նորից հատուկ հանձնարարականով հասել էի Երևան:

Իմ այս հանձնարարությունը, ժամանակի իմաստով, նախորդից ուներ մի առավելություն՝ մի քանի օր մնալու էի Երևանում: Կնշանակի հանդիպումների համար սահմանված ժամերը միանգամայն բավարար էին:

Մայիսի 29-ն էր:

Վարպետի տանն եմ:

Սովորույթ էր դարձել ու անհրաժեշտություն. Երևան գալիս անպայման պիտի այցելեմ Վարպետին: Նա ինձ այդպես էր ասել.

— Նույն օրն անմիջապես պիտի իմաց տաս ու գաս:

Այն էլ ասեմ, պայմանը մնաց ուժի մեջ մինչև 1957 թվականի հոկտեմբերի 17-ը... մի պայման, որ սրբությամբ կատարել եմ մեծագույն հաճույքով:

Ցերեկվա ժամն էր, երբ բաժանվում էի Վարպետից:

— Երեկոյան ի՞նչ ես անում:

Մի առանձին անելիք չունեի: Ես հայտնեցի երեկոյան իմ ծրագիրը:

— Այսօր երեկոյան Կուլտուրայի տան սրահում Տաթևիկի համերգն է. ինձ երկու տոմսակ են ուղարկել: Գնանք միասին:

Պայմանավորվեցինք ու երեկոյան միասին գնացինք Տաթևիկ Սազանդարյանի համերգին:

Ճանապարհին միայն իմացա, թե ինչու Վարպետն ուզում էր այդ երեկո լինել համերգին:

— Անուշ երգչուհի է Տաթևիկը... այսօր առաջին մենահամերգն է տալիս:

Չի շտապում Վարպետը: Գիտեմ, կիսատ է խոսքը: Նրա սկսած նախադասությունն ունի՝ պիտի ունենա իր շարունակությունը:

— Իր գործի վարպետն է, — շարունակում է նա, — մեծ վարպետ:

Համրաքայլ, կիսամութ Աբովյանով իջնում ենք դեպի Կուլտուրայի տուն:

— Տաթևիկը պիտի երգի Ռախմանինովի գրած ռոմանսը...

Քայլում ենք. կողքից անցնողները մեզ ուշադրություն չեն դարձնում:

— Երգի խոսքերն իմն են:

Վարպետը կարող էր չասել: Այնքան հասկանալի էր ամեն ինչ:

Իսահակյան, Ռախմանինով, Սազանդարյան...

Դահլիճում՝ երկրորդ կարգի աթոռները, համաձայն ուղարկած տոմսերի, զբաղեցրինք առանց մեզ վրա ներկաների ուշադրությունը սևեռելու:

Վարպետի համեստության արտահայտություններից մեկն էր այդ, որ քանի-քանի անգամ նկատել էի:

Համերգի առաջին մասը մեծանուն բանաստեղծը որակյալ երգասերի ուշադրությամբ լսեց, ապրեց, հետևեց երգչուհու աշխատանքին:

— Ծանր աշխատանք է երգչուհու գործը, — թռուցիկ կերպով նա ասաց համերգի ընդմիջումին, — ծանր գործ է...

Համաձայն ծրագրի Ռախմանինովի ռոմանսը պիտի կատարվեր երկրորդ բաժնի ընթացքում:

Նորից բեմում երևաց տաղանդավոր երգչուհին, որի մուտքն ընդունվեց շռնդալից ծափերով:

Դեռ առաջին բաժնի սկզբին աչքի տակով տեսել էր Վարպետին, սակայն նա անելիք ուներ բեմում, հուզվել էր՝ ցույց չտալով, սակայն, հուզմունքը դահլիճին:

Եվ ահա Ռախմանինովի ինձ քաջ հայտնի ռոմանսը, որը բազմիցս լսել էի ռուս մեծանուն երգչուհիների կատարմամբ...

Ամեն գիշեր իմ պարտեզում
Լալկան ուռին, հեզ ուռին,
Վշտատոչոր լաց է լինում,
Լաց է լինում իմ ուռին:

Վարպետի խոսքերը՝ իր ներկայությամբ... Տաթևիկի զուլալ ձայնը... ոչ սովորական պահ:

Երգեց: Չխնայեց իր արտիստական ուժը, եռանդը, հուզմունքը: Նստել եմ Վարպետի կողքին: Լսողություն եմ ուզում դառնալ այդ պահին: Խոստովանում եմ, չի ստացվամ...

Ո՞ւմ ապրումներն էին ավելի ուժեղ. Վարպետի, թե Սազանդարյանի...

Ռոմանսի կատարումը դահլիճն ուժեղ ծափերով ընդունեց: Երգչուհին շառագունած, երջանիկ, աչքերում ցոլք, կանգնած էր բեմում և իր արվեստն արժեքավորողներին հայտնում էր ուրախության զգացմունքը:

Նա բեմից մի շարժումով թեքվեց դեպի Վարպետը: Գլուխը խոնարհեց:

Նրանք հայացքով միմյանց հանդիպեցին...

Վարպետը շատ էր հուզված: Երիտասարդի նման հուզված էր:

Նա չէր ծափահարում, մոռացել էր, թե շփոթվել, չգիտեմ:

Նայում էր Տաթևիկին: Աչքերում արտասվոր ցոլք կար, որ երբեք ինձ չէր հաջողվել տեսնել:

Երբ Տաթևիկը դարձավ դեպի Վարպետը, ժպտաց, հայացքով նրան շատ բան ասաց:

Վարպետը շատ ցածր ձայնով արտասանեց.

— Զորանա՛ս...

Լսեցի ես, լսեց Տաթևիկը: Չլսեց միայն դահլիճը... Վարպետն իրավունք ուներ: Նրան ծանոթ էին նաև շատ ուրիշ բառեր և արտահայտություններ՝ այդպիսի պարագաներում ասելու, հայտնելու...

— Զորանա՛ս...

Միայն այսքան:

Ու ապա բարձրացավ տեղից, շատ անշտապ մոտեցավ նախաբեմին:

Շառագունեց երջանկությունից շողացող երգչուհին: Վարպետի վարմունքից ու նաև դահլիճի փոթորկալից ծափերից՝ թունդ առավ հոգին ու... խոնարհվեց: Նրանք գրկախառնվեցին:

Վարպետը Տաթևիկին մեկնեց մի վարդ՝ իր պարտեզից...

Դահլիճը նորից փոթորկվեց:

Երկուսի աչքերին էլ արցունքի կաթիլ նկատեցի:

Ռոմանսի կատարումը կրկնվեց և եթե Վարպետը ստիպված չբարձրանար տեղից և խնդրեր, որ չծափահարեն, ապա անկասկած երգչուհին ստիպված կլիներ երրորդ անգամ հմայել իր աստվածային արվեստով:

Տաթևիկը այնպես հպարտորեն էր պահել վարդը ու այնպես սեղմել կրծքին, ասես արեգակ ուներ ձեռքին, որի շողերով և ինձ ջերմացրեց:

Տարիներ են անցել... մոտ երեք տասնյակ տարիներ... սակայն աշխարհի շատ մեծ բեմերում հաղթարշավներ տարած, բազում պարգևների ու մեծարանքների արժանացած արտիստուհին, որպես իսահակյանական մասունք պահում է այդ համերգի ծրագիրը, որի մեջ այնքան թանկ ու նվիրական վարդն է՝ Վարպետի վարդը:

ԱՐՇԱԼՈՒՅՍ ԱՐՇԱՐՈՒՆԻ
1974

## ԽՈՐ ՀԱՐԳԱՆՔ

Իմ ողջ կյանքի ընթացքում, այն ժամանակից ի վեր, ինչ տեսել եմ Սազանդարյանին Մեծ թատրոնի բեմում Ալմաստի դերերգը կատարելիս, ես խոր հարգանք եմ տածել նրա տաղանդի, տոկունության և աշխատասիրության նկատմամբ:

Սազանդարյանը գերեց ինձ իր արտասովոր մեղմահունչ ձայնով, որին տիրապետում է վարպետորեն: «Ալմաստը» դժվար օպերա է: Ուժեղ իր բնույթով, խորապես դրամատիկական: Ողբերգական իրադարձություններ պատկերող երաժշտությանը տրված է նուրբ քնարական ձև: Պետք է լինել խիստ փորձառու դերասան, որպեսզի այս մեղմ երանգների մեջ կարողանաս ներկայացնել Ալմաստի տիրական, պատվախնդիր և ուժեղ կերպարը:

Սազանդարյանն ինձ ցնցեց:

Քսաներեք տարեկանում լինել այսպիսի հիասքանչ դրամատիկական դերասան ու վոկալի՞ստ:

Ծռայլ ու բազմակողմանի տաղանդի տեր, բոլոր ձայնային սահմաններում համաչափ ու հմայիչ հնչող հազվագյուտ գեղեցիկ ձայնով օժտված՝ նա գերում է իր վառ խառնվածքով ու դերասանական տաղանդով:

Նա բնական է և օրգանական, նա մեծ վարպետ է՝ ծնված բեմի համար: Նրա կյանքը երգչուհու իսկական սխրանք է:

Քո և Ալմաստի քույր՝

ՄԱՐԻԱ ՄԱԿՍԱԿՈՎԱ
1975

## ՋԵՐՄ, ԳԵՂԵՑԻԿ ՁԱՅՆ

Քսան տարուց ավելի է, ինչ ես գիտեմ ՍՍՀՄ ժողովրդական արտիստուհի, պետական մրցանակի դափնեկիր Տաթևիկ Սազանդարյանին:

Գեղեցիկ, ուժեղ ձայնը՝ մեցցո-սոպրանոն, աչքի ընկնող

երաժշտական տվյալները, արտիստական վառ անհատականությունը, կատարողական բարձր կուլտուրան Տ. Տ. Սազանդարյանին կանգնեցրին մեր երկրի վոկալի այն քանքարավոր վարպետների առաջին շարքում, որոնք սովետական արվեստի փառքը տարածել են մեր հայրենիքում և նրա սահմաններից շատ հեռու:

Տաթևիկ Սազանդարյանը հայ ազգային օպերաներում կանացի կերպարների ստեղծողն ու անդրանիկ կատարողն է, կերպարներ, որ նրա տաղանդի շնորհիվ լայն ճանաչում են գտել ժողովրդի մեջ:

Սազանդարյանի համակողմանի օժտվածությունն ու տաղանդը դրսևորվել է ռուս և արևմտաեվրոպական դասական երկացանկի առաջատար դերերի փայլուն կատարմամբ:

Տ. Սազանդարյանի արտիստական նկարագրի գրավիչ ու առինքնող գծերն են՝ ազնիվ տեմպերամենտը, երաժշտա-հուզական կերպարի մեջ խորը թափանցելու և այն ճշմարտացի մարմնավորելու ունակությունը, երաժշտությամբ հափշտակված լինելը, ինչպես և մտքի ու զգացմունքի բարձր կուլտուրան:

Տաթևիկ Սազանդարյանն այդ հատկությունները հաջողությամբ ու արդյունավետ դրսևորում է նաև մանկավարժական աշխատանքում: Ընդ որում նա սոսկ դասավանդմամբ չի սահմանափակվում:

Վոկալ կրթությանը նվիրված հանրապետական և համամիութենական կոնֆերանսներում Տ. Սազանդարյանը հաճախ հանդես է գալիս երիտասարդ երգիչների դաստիարակության պրոբլեմները շոշափող բովանդակալից զեկուցումներով: Վոկալ արվեստի խնդիրներին նվիրված նրա ակնարկները, գրախոսականները, հոդվածները տպագրվում են թերթերում և հանդեսներում:

Այս ամենին զուգընթաց, պրոֆեսոր Սազանդարյանը հասարակական խոշոր գործիչ է: Ընտրվել է ՍՍՀՄ Գերագույն սովետի դեպուտատ: Ակտիվորեն աշխատել է որպես սովետական կանանց կոմիտեի անդամ, սովետա-բելգիական բարեկամության ընկերության անդամ, ահա Սազանդարյանի կատարած հասարակական պարտականությունների ոչ լրիվ թվարկումը:

Ես հաճախ եմ առիթ ունենում Տաթևիկ Տիգրանովնային հանդիպել տարբեր մրցույթների ժյուրիների նիստերում և մեծ բավականություն եմ ստանում նրա խստապահանջ, սկզբունքային ու անաչառ գործունեությունից:

ՕԼԳԱ ԲԼԱԳՈՎԻԴՈՎԱ
1975

## ԱՌԱՋԻՆ ՀԱՅԱՑՔԻՑ

Տաղանդը, իհարկե, անհրաժեշտ է, տարակուսել այստեղ պետք չէ: Եվ գրոշի արժեք ունի արտիստ դաստիարակելու ողջ հնարամտությունը, եթե տաղանդ չկա: Բայց արտիստիզմի կարևոր եզրը արվեստագետի կուլտուրան չէ՞, արդյոք, և ցնորամիտ չէ՞ այն տաղանդը, որ զրկված է աշխարհն առավել ինտելեկտուալ և հասկանալի ընկալելու անհրաժեշտությունից, այսինքն այն բանից, ինչը յուրահատուկ է մտավորականին, բնորոշում է նրա աշխատանքը, նրա ստեղծագործությունը:

Կուլտուրան, իբրև արտիստի հատկանիշ, ամենալուրջ և, ավաղ, գեղարվեստական ստեղծագործության ընկալման մեջ դեռևս չմշակված պրոբլեմներից մեկն է: Եվ մեծապես երջանիկ է այն արտիստը, որի ստեղծագործության մեջ, բուն կերպարում ապրելու, շփվելու, աշխարհն ընկալելու կերպում կա իսկական, բնական ու ոչ թե շինծու ու ցուցադրական կուլտուրայի բնատուր գիծ:

Երբեմն հազվադեպ և պատահական հանդիպումները ճշմարիտ պատկերացումներ են տալիս, որովհետև զերծ են լինում մեր թատերական կենցաղում հաճախ հանդիպող մանրամասներից, պատահականություններից:

Տաթևիկ Տիգրանովնան հենց առաջին հանդիպումից որոշեց իմ տպավորությունն իր մասին որպես արտիստուհու, մի արտիստուհու, որն իր կյանքը չի բաժանում բեմի, համերգային էստրադայի կամ կենցաղում լինելու մեջ: Պարզ էր, որ ինձ մոտեցող արտիստուհին գերազանց հասկանում էր, ավելի լավ, թերևս, զգում, որ կյանքն ու բեմը, վարքը կյանքում և «դերասանությունը» միաձույլ են: Այստեղ վարք բեմում և կենցաղում բաժանումն անհանդուրժելի է: Հավաք լինելը, մշտական հոգածությունը արտաքինի մասին, շրջապատի վրա թողած տպավորության ենթագիտակցական և հարափոփոխ գնահատումը և դրան գիտակցորեն ծառայելը՝ ահա իսկական պրոֆեսիոնալ արտիստիզմի հիմքը: Առանց այդ հատկությունների անհնար է արտիստուհի լինելը:

Տ. Տ. Սազանդարյանի համար ընտրած մասնագիտությանը ծառայելը իր էությունն է, իր սովորությունը, իր երկրորդ «եսը»: Դա իր սխրանքն է, իր ուրախությունը, դրանում է հենց նրա հաջողության գրավականը: Այո, հենց առաջին հայացքից նրա մասին կասես. «Սա՝ արտիստուհի է»:

Հետագայում, ծանոթանալով Տ. Տ. Սազանդարյանի ստեղծագործության հետ, ես համոզվեցի այն բանում, որ չեմ սխալվել իմ առաջին տպավորություններում: Չափի զգացում և ճաշակ՝ ահա նրա գեղարվեստական կուլտուրայի հիմնական հատկանիշը: Այո, իհարկե, ձայնը, երաժշտականությունը, անշուշտ նաև տեմպերամենտը... Հնարավո՞ր է, արդյոք, թվարկել տաղանդի և վարպետության բոլոր բաղկացուցիչները: Բայց արվեստում թանկ է գնահատվում բնական տվյալների կազմակերպումը, դրանց տիրապետումը:

Տ. Տ. Սազանդարյանն այն արտիստուհիներից չէ, ովքեր անհոգ ապրում են, ապավինելով իրենց ընդունակություններին: Բոլոր արտիստների նման նրա մոտ կարող են լինել և՛ անհաջողություններ, և՛ տապալումներ, կարող են լինել ավելի կամ պակաս բարձր գեղարվեստական նվաճումներ: Սակայն ստեղծագործության գիտակցական ըմբռնումը հաջողության գրավական է ոչ միայն այսօրվա և ոչ միայն Սազանդարյանի համար, այլև նպաստում է առհասարակ ստեղծագործական կյանքին, թատրոնի պրոֆեսիոնալ վիճակին, ազգի գեղարվեստական նվաճումներին:

Այդ պատճառով էլ Սազանդարյանի անունը տրվում է անմիջապես, երբ խոսք է բացվում հայ ժամանակակից օպերային արվեստի մակարդակի մասին: Այդ անունը՝ հայ օպերային թատրոնի մակարդակն է, դա այդ մակարդակի բարձրությունը որոշող չափ է, տիպական երևույթ հայ օպերային արվեստի պատմության մեջ, դա էտալոն է և իսկություն:

Ահա այսպես է անհատը հայտնվում արվեստում: Ավելին, այդ արվեստագետը դառնում է ոչ միայն գեղարվեստի անհատ, այլև հասարակության անհատ: Այդպես ծնվում է նաև յուրաքանչյուր բեմական երևույթի պատասխանատվությունը, հասարակական գործունեության մեջ ակտիվ լինելու զգացումը: Իսկ վերջինը՝ նույնպես գեղարվեստական տաղանդի հատկանիշ է, որովհետև դառնում է պահանջ, անհրաժեշտություն:

Որևէ արտիստի գեղեցիկ ելույթները դեռևս երևույթ չեն արվեստում, դա միայն մասնակի հաջողություն է: Սազանդարյանը մեր երկրի բազմազգ օպերային արվեստում երևույթ է, որովհետև նրա ողջ կյանքը գործունեություն է հայ օպերային արվեստի բարձր սկզբունքների հաստատման օգտին:

Անհատի մի յուրահատկություն ևս. դա ուշադրության կենտրոնում լինելն է: Սա, իհարկե, հեղինակության, գեղարվեստական, մարդկային, քաղաքացիական հեղինակության արդյունք է:

Սազանդարյանը դրա շնորհիվ է, որ գոյություն ունի օպերային, վոկալ արվեստում անգամ այն ժամանակ, երբ չի երգում, չի մասնակցում ներկայացումներին, երբ միայն ունկնդրում է կամ ընկալում, գնահատում, քննարկում: Գեղարվեստական կոնկրետ նվաճումների ծանրակշռությունը դրսևորվում է նոր որակով՝ դա արվեստում ճշմարիտի հետապնդումն է, շրջապատի հանդեպ խիստ պահանջկոտությունը, որոնք և առաջ են մղում արվեստը: Փորձն ընդհանրացումներ է բերում, ձեռքբերումները ուղենշում են հեռանկարները: Կյանքը շարունակվում է նույն թափով, ինչ որ առաջ: Սիրած արվեստին ծառայելու պատրաստականությունը չի թուլացել, չի էլ կարող թուլանալ: Դա ոչ թե արտիստուհու կյանքին հարակից պարտականություն է, այլ նրա միսն ու արյունը: Կարծում եմ, հենց դրանով է Տաթևիկ Տիգրանովնան երջանիկ:

ԲՈՐԻՍ ՊՈԿՐՈՎՍԿԻ
1976

## ՆՐԱ ԱՐՎԵՍՏԻ ԼՈՒՅՍԸ

Յուրաքանչյուր մարդու կյանքում լինում են հետաքրքիր և անմոռաց հանդիպումներ: Ինձ համար առանձնապես թանկ են հանդիպումները մեծ տաղանդով օժտված երաժիշտների հետ: Նրանց արվեստը իմ հիշողության մեջ անջնջելի հետք է թողնում և հաստատորեն տիրում իմ սրտին:

Հենց այդպես ինձ գերեց Տաթևիկ Տիգրանի Սազանդարյանի արվեստը:

Քառասունական թվականներին Տ. Սազանդարյանը հաճախ էր գալիս Թբիլիսի հյուրախաղերի: Լավ եմ հիշում նրան Ալմաստի դերերգը կատարելիս Ա. Սպենդիարյանի համանուն օպերայում: Երիտասարդ երգչուհին անմիջապես գերեց մեզ ձայնի արտակարգ գեղեցիկ տեմբրով և արտիստականությամբ: Անհավատալի էր, որ վոկալ-բեմական այդ մարդ-կերպարով Տ. Սազանդարյանը հենց նոր է անցել օպերային թատրոնի շեմից:

Այն ժամանակից անցել է ավելի քան երեք տասնամյակ:

Հիշողությանս մեջ թերթելով Տ. Սազանդարյանի խաղացանկի և իր բազմաթիվ ելույթների էջերը, քանիերորդ անգամ համոզվում եմ, թե երգչուհին ինչպիսի՛ բացառիկ լայն դիապազոն ունի, վոկալ հազվագյուտ տաղանդ՝ բազմապատկված վարպետության, անթերի ճաշակի և կատարման մեծ տեխնիկայի ձեռքբերումներով:

Տ. Սազանդարյանի ստեղծած հիասքանչ բեմական կերպարների մեծ քանակի մեջ առանձնապես հիշում եմ Կարմենի և Ամերիսի կերպարները, որոնք պատկանում են Տաթևիկ Տիգրանովնայի ստեղծագործական ակնբախ նվաճումների թվին:

Չափազանց հետաքրքիր է նաև երգչուհու համերգային ցանկը՝ Ա. Պուշկինի, Ա. Իսահակյանի բանաստեղծությունների տեքստերով գրված, ինչպես և ժամանակակից կոմպոզիտորների ստեղծագործություններից կազմված թեմատիկ ծրագրերով:

Տաթևիկ Տիգրանովնան հայկական ժողովրդական երգերի հիանալի մեկնաբան է: Յուրաքանչյուր երգի համար գտնելով իր «զգեստը» և արտահայտչականության մեթոդը, նա հիասքանչ պահպանում է հայկական ժողովրդական երաժշտության անկրկնելի յուրօրինակությունը և ազգային բույրը:

Ես բախտ եմ ունեցել բազմիցս հանդիպելու Տաթևիկ Տիգրանովնայի հետ վոկալիստների մրցույթներում: Հենց այդ ժամանակ Տ. Սազանդարյանին ես ճանաչեցի ոչ միայն որպես հիասքանչ երգչուհու, այլև հիասքանչ մանկավարժի, որը երիտասարդ երգիչների դաստիարակմանը վերաբերվում է որպես իր սեփական գործին:

Սակայն սա դեռ բոլորը չէ: Տաթևիկ Տիգրանովնան հիանալի ու նրբանկատ, կարեկցող ջերմություն և հմայք ճառագող մարդ է:

Այո՛... Տ. Սազանդարյանի արվեստի հետ իմ ծանոթությունից անցել են ավելի քան երեսուն տարիներ, բայց ինձ թվում է, որ Տաթևիկ Տիգրանովնան այսօր էլ այնպես երիտասարդ է և գեղեցիկ, ինչպես քառասանական թվականներին, որովհետև նույնքան ուժեղ է նրա սիրահարվածությունը արվեստին, նույնքան մեծ է նրա շահագրգռվածությունը սիրած ասպարեզում:

60-ամյակի նախաշեմին ուզում եմ գրկել թանկագին Տաթևիկ Տիգրանովնային՝ ինչպես մեր հանդիպումների ժամանակ, և ցանկանալ նրան մեծ երջանկություն ի ուրախություն մեզ՝ նրան նվիրված բարեկամներիս:

ՍՈՒԼԽԱՆ ՑԻՆՑԱՁԵ
1976

# ՔՆՔՈՒՇ ՈՒ ԹԱԽԾԱԳՈՐՈՎ ՁԱՅՆԸ

Տաթևիկ Սազանդարյանի երգեցողությունն ինձ վիճակվել է լսել միայն ձայնագրությամբ, բայց նշանավոր հայ երգչուհու ռադիոհամերգներից մեկը ես հիշում եմ մինչև այժմ: Ես տակավին երիտասարդ էի, շատ էի սիրում երաժշտություն, սկսել էի իմ մեջ զգալ ձայնը և ագահորեն ըմբոշխնել երաժշտական տպավորությունները: Լինելով ռազմա-ծովային ուսումնարանի սան, մի անգամ ամառային ճամբարում ռադիոբարձրախոսով լսեցի զարմանալի գեղեցկության մի ձայն: Երգում էր Տաթևիկ Սազանդարյանը: Տոթ, արևոտ օր էր, բնության հանդիսավոր լռության մեջ երգչուհու ձայնը՝ լիքը, ախորժալուր, ասես միահյուսվում էր բնության ներդաշնակությանը: Ես դեռ երբեք չէի լսել Ռուբինշտեյնի «Գիշերվա» նման կատարում, դա իրոք որ «քնքուշ ու թախծագորով... ձայն» էր, հոգեպարար ու հոգեզմայլ ձայն: Այն ժամանակ ես մտածեցի. «Եթե ես սովորեմ այսպե՛ս երգել...»: Տաթևիկ Տիգրանովնայի երգն իմ մեջ ամրացրեց երգիչ դառնալու մտադրությունս:

Մի քանի տարի անց ինձ վիճակվեց հանդիպել Տաթևիկ Սազանդարյանի հետ իբրև այն վոկալ մրցույթների ժյուրիների անդամ, որոնց ես ևս մասնակցում էի: Եվ մի բան, որ իսկույն նկատեցի երիտասարդ երգիչների հետ նրա զրույցների ժամանակ, դա նրա բարյացակամությունն էր, ցանկությունը՝ քաջալերել, սփոփել, օգնել ճիշտ կողմնորոշվելու ստեղծագործական կյանքում:

Վերջին ժամանակներս ես մի քանի անգամ առիթ ունեցա Տ. Սազանդարյանի հետ միասին, մրցույթային ժյուրիների կազմում ունկնդրել երգիչների, և ինձ ապշեցնում էին նրա ստույգ գնահատականները, նրա մտապաշարը, խոսքի հարստությունն ու ցայտունությունը, անսահման հմայքը: Ջերմ հետաքրքրությունը յուրաքանչյուր երիտասարդ վոկալիստի ստեղծագործական ճակատագրի հանդեպ, և արտիստական ու մանկավարժական մեծ փորձը Տաթևիկ Սազանդարյանին մանկավարժների ու արտիստների շրջանում վիթխարի հեղինակություն էին ապահովում:

Տաթևիկ Սազանդարյանի հետ ամեն հանդիպում քո մեջ թողնում է զարմանալի գեղեցկության ու հազվադեպ օժտվածության տեր մարդու հետ շփվելու հրճվագին զգացում:

ԵՎԳԵՆԻ ՆԵՍՏԵՐԵՆԿՈ
1976

## ԱՄԵՆԱԲԱՐՁՐ ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼԻԶՄԸ

Առաջին դերը, որում ես տեսա Տաթևիկ Սազանդարյանին, նրա Կարմենն էր. դա այն ժամանակ էր, երբ նա արդեն ճանաչված վարպետ էր, իսկ ես՝ սկսնակ երգչուհի, թեև արդեն երգում էի Կարմեն: Հիշում եմ, թե ինչպես ինձ ապշեցրեց մեծ արտիստուհու արվեստի բնականությունը:

Տաթևիկ Սազանդարյանն ինձ համար արտիստական բարձրագույն նրբագեղության օրինակ է: Ես ուրախ եմ, որ ստեղծագործական ճակատագիրը մերձեցրել է ինձ հայ ժողովրդի մեծ արտիստուհու հետ: Ուրախ եմ, որ բախտ եմ ունեցել շփվելու նրա հետ բեմում և կյանքում, որ բազմիցս զգացել եմ նրա հազվագյուտ հյուրընկալությունը:

Եվ այժմ էլ, վոկալ մրցույթների ժյուրիների կազմում նրա հետ գործելիս, ես վերստին մեծ բավականություն եմ ստանում՝ կողքիս տեսնելով նրան, նրա խելամտությունը, նրա անբասիր ճաշակը, ազնվությունը, բարյացակամությունը և, իհարկե, ամենաբարձր պրոֆեսիոնալիզմը:

ՈՒՐՎԵ ՏԱՈՒՏՍ
1976

## ՉԳԵՐԱԶԱՆՑՎԱԾ ԱԼՄԱՍՏ

Տաթևիկ Սազանդարյանի անունը իր տեղն ունի սովետական երաժշտական արվեստի ականավոր ներկայացուցիչների շարքում: Ուժեղ, արտահայտիչ, վառ տեմբրով անհատական ձայն, լայն վոկալ կուլտուրա ունեցող երգչուհին իր մեջ բացառիկ երաժշտական օժտվածությունը զուգակցում է բեմական մեծ տաղանդի և իսկական արտիստիզմի հետ:

Տ. Սազանդարյանի կատարողական վարպետությունը բազմազան է և ընդգրկում է վոկալ արվեստի տարբեր բնագավառները: Բայց նրա իսկական տարերքը եղավ օպերան: Հենց այստեղ առանձնակի ուժով և լրիվ չափերով բացահայտվեցին երգչուհու և

արտիստուհու տաղանդի բազմաթիվ կողմերը, վոկալ և. բեմական մարմնավորման նրա հիասքանչ օժտվածությունը: Դրա փայլուն վկայությունն է նրա ստեղծած օպերային կերպարների մի ամբողջ պատկերասրահ (երեսունից ավելի): Եվ նրանցից յուրաքանչյուրը մարդկային կենդանի բնավորություն է, իր ողջ սոցիալական, պատմական, կենցաղային, հոգեբանական կոնկրետությամբ, իր աշխարհայացքով, իր բնավորությամբ, եռանդով, բարոյականությամբ: Բավական է նշել երգչուհու ստեղծած օպերային մի քանի դերերգերը, որպեսզի պատկերացվի նրանց նշանակալիությունը և իրար նման չլինելը. Կարմեն (Բիզե «Կարմեն») և Դալիլա (Սեն-Սանս «Սամսոն և Դալիլա»), Լյուբաշա (Ռիմսկի-Կորսակով «Թագավորի հարսնացուն») և Իոկաստա (Ստրավինսկի «Էդիպ արքա»), Օլգա (Չայկովսկի «Եվգենի Օնեգին») և Ուլյանա Գրոմովա (Մեյտուս «Երիտասարդ գվարդիա»)...

Տ. Սազանդարյանը մեծ դեր է խաղացել հայ ազգային օպերային խաղացանկի զարգացման գործում: Նա հերոսուհիների առաջին դերակատարուհին է եղել հայ կոմպոզիտորների օպերաների մեծ մասում. Փառանձեմ՝ «Արշակ Երկրորդում», Թամար՝ «Դավիթ Բեկում», Նազելի՝ «Հերոսուհին» օպերայում, Աննա՝ «Սայաթ-Նովայում», Շուշան՝ «Արծվաբերդում», Բերբերո՝ «Արևի ցոլքերում» և այլն:

Բոլոր նրանք, ովքեր Տ. Սազանդարյանին տեսել են այդ դերերում, երբեք չեն մոռանա նրա վառ կատարումը, յուրաքանչյուր դերերգի անհատական մեկնաբանման անկրկնելիությունը: Այս առումով նա իսկապես ստեղծել է իր ավանդները:

Պատրաստելով այս կամ այն դերը, Տ. Սազանդարյանը բառացիորեն «մերվում» էր նրան, ուսումնասիրում էր նրա հետ կապված ամեն բան, պատմական դարաշրջանը (կենցաղը, բարքերը, զգեստները և այլն), գրական սկզբնաղբյուրը, լիբրետոն, կոմպոզիտորի ստեղծագործությունն ընդհանրապես, օպերայի ստեղծման և բեմական կյանքի պատմությունը: «Վոկալիստի խնդիրն օպերայում ես պատկերացնում եմ անբաժան դրամատուրգիայից և այն ամենից, ինչը կապված է երաժշտական պարտիտուրի հետ» – ասում է նա: Տաթևիկ Տիգրանովնան պատկանում է օպերային այն երգչուհիների թվին, որոնք հստակ գիտեն ոչ միայն իրենց դերերգը, այլ օպերան ամբողջովին, յուրաքանչյուր գիծ պարտիտուրում: Եվ դա նրան հնարավորություն է տալիս կերպարը ծեփելու բուն դրամատուրգիայի ինտոնացիայից, ներկայացման ամբողջական կոնցեպցիայից ելնելով:

Վոկալ վարպետություն, բեմական վարք, դիմախաղ, ժեստ, շարժումների պլաստիկա՝ ամեն ինչ ենթարկվում է գլխավոր նպատակին՝ կերպարի ներքին դրամատուրգիական բովանդակության բացահայտմանը. իր զարգացման մեջ, մանրամասներում և ամբողջի կազմավորման մեջ: Եթե այս տերմինը գործածելու լինենք, ապա ես կասեի, որ նա ամենահաջողված դերերգերում հասնում էր իսկական երաժշտական-բեմական սիմֆոնիզմի: Լրիվ չափով դա դրսևորվեց նրա Ալմաստում: Կարծում եմ, չեմ սխալվի, եթե ասեմ, որ այդ դերի ավելի լավ կատարող երաժշտա-բեմական արվեստի պատմությունը դեռևս չգիտի: Չէ՞ որ Ա. Սպենդիարյանի հիասքանչ «Ալմաստ» օպերայի Թմկաբերդի գեղեցիկ և նենգ իշխանուհու կերպարը օպերային գրականության մեջ ամենադժվարներից մեկն է բոլոր առումներով: Առաջին անգամ այս օպերան տեսել եմ Մոսկվայում, 1939 թվականին, ՍՍՀՄ Մեծ թատրոնի բեմում հայ երաժշտության տասնօրյակի ժամանակ: Ալմաստի դերում հանդես եկավ դեռես շատ ջահել, քսաներեքամյա Տաթևիկ Սազանդարյանը, որը զարմացրեց բոլորին ոչ միայն ձայնի ուժով և արտահայտչականությամբ, իր արտաքին կերպարի գեղեցկությամբ ու ճկունությամբ, բացառիկ երաժշտականությամբ և բեմական վարքի համոզչականությամբ, բայց, ինչը բոլորովին անսպասելի էր, իր հոգեկան հարստությամբ, հոգեբանական խորությամբ և նրբազգացությամբ:

Տ. Սազանդարյանի արտիստական ճակատագիրը հենց առաջին քայլերից դասավորվել է արտակարգ երջանիկ և հետաքրքիր, նա անմիջապես իր մասին հայտ է ներկայացրել որպես մեծ տաղանդի և անկրկնելի անհատականության տեր օպերային երգչուհու: Այն ժամանակ արդեն կարողացավ տպավորիչ մեծ ուժով բացահայտել և հաղորդել Ալմաստի բարդ, սուր հակասություններով լեցուն ապրումների աշխարհը և ողբերգական ճակատագիրը: Սեր հանդեպ Թաթուլը և դեպի Նադիր շահի գահն ունեցած անկասելի ձգտում, իշխանասիրություն, փառասիրություն, որ հասցրին դավաճանության, անարգանք, զղջում, մահ... ինչպիսի՛ ուժեղ հակադրություններ, թռիչքներ և անկումներ, ինչպիսի՛ բարդ «հոգու դիալեկտիկա»: Եվ գործողության զարգացման ընթացքում ինչպե՞ս էին փոփոխվում ոչ միայն արտիստուհու ողջ կերպարը, նրա դիմախաղը, ժեստերը ու բեմական վարքը, այլև նրա ձայնի հնչողության բնույթը, որ տարբեր երանգներ էր ընդունում՝ մեկ քնքույշ, բանաստեղծական, մեկ գայթակղող, մեկ տագնապալի դրամատիկական, թախծոտ,

հասցված հուսահատության ճիչի կամ ցասումնալի մերկացնող: Հիշում եմ, մասնավորապես, թե իսկական արտիստիզմի ինչպիսի փայլով Տ. Սազանդարյանն անցկացրեց կուլմինացիոն տեսարանը օպերայի երրորդ գործողությունում՝ նշանավոր «Ալմաստի պարը»: Իսկ զղջման, վիրավորված արժանապատվության, Նադիր շահից վրեժ լուծելու և նրան ոչնչացնելու ինչպիսի՛ խորը զգացումով էր ներթափանցված ներկայացման վերջին տեսարանը: Իսկ երկրորդ գործողությունում Աշուղի և «Ջան գյուլումի» տեսարանները, իսկ դուետը Թաթուլի հետ, իսկ 3-րդ գործողության վերջում խորը ողբերգական տեսարանը, երբ Ալմաստը մոմը ձեռքին, գաղտագողի մտնում է, որպեսզի թշնամիների առաջ Թմկաբերդի դարպասները բացի... Իսկ դա չէ՞ որ Տաթևիկ Սազանդարյանի ստեղծագործական ուղու սկիզբն էր, իսկ հետագայում քանի՛ անգամներ նա հանդես եկավ այդ դերերգով: Եվ ամեն տարի նոր որոնումներ, դերի նոր եզրերի, հուզական նոր մանրամասների, դրամատուրգիական նոր շեշտադրումների հայտնաբերում: Տաղանդավոր երգչուհին Ալմաստի դերը հարստացրեց ոչ միայն նրա վրա տարած աշխատանքով ու խոհերով, այլև ուրիշ դերերի վրա կատարած իր աշխատանքի ողջ երաժշտաբեմական փորձով: Այդպես հղկվելով և հարստանալով, Տ. Սազանդարյանի սիրած այս դերը ձեռք բերեց դասական կատարելության գծեր: Անձամբ ինձ, Սպենդիարյանի ստեղծագործության և հայ օպերայի ադամանդ «Ալմաստի» վրա տարած իմ երկարամյա ուսումնասիրման ընթացքում Տաթևիկ Սազանդարյանն Ալմաստի իր դերակատարմամբ օգնեց շատ բան հասկանալու և այդ անսովոր «հանելուկային» դերը իմաստավորելու:

Տ. Սազանդարյանը մեծ ուշադրություն է դարձնում և կամերային երաժշտությանը: Նրա յուրաքանչյուր համերգային ելույթ հանրապետության երաժշտական կյանքում նշանակալից երևույթ էր դառնում:

Միշտ հրապուրում էր հետաքրքիր, բովանդակալից և շատ բազմազան ծրագիրը: Ժողովրդական երգեր՝ հատկապես հայկական, ռոմանսներ, հայ, ռուս, արևմտաեվրոպական կոմպոզիտորների վոկալ ցիկլեր, թեմատիկ համերգներ... Եվ երգչուհին միշտ գտնում է անհրաժեշտ արտահայտչամիջոցներ, գույներ, ինտոնացիաների եղանակներ, որպեսզի հաղորդի կատարվող ստեղծագործության կերպարային բովանդակությունը, բնույթը, ոճը: Առանձնահատուկ ոգևորությամբ և ոճի զգացողությամբ է նա կատարում հայ հեղինակներ Կոմիտասի, Սպենդիարյանի, Ռոմանոս Մելիքյանի, Հարո Ստեփանյանի, Ղ. Սարյանի, Ա. Հարությունյանի և

այլոց ստեղծագործությունները: Ըստ որում, հայ կոմպոզիտորների վոկալ շատ ստեղծագործությունների առաջին կատարող հանդիսանալով, ըստ էության որոշում է նրանց համերգային հետագա ճակատագիրը: Ընդհանրապես դժվար է գերագնահատել նրա հսկայական դերը սովետական (առանձնապես հայկական) վոկալ երաժշտության պրոպագանդման գործում:

Ժամանակի ընթացքում դրսևորվեց Տ. Սազանդարյանի մի արժեքավոր կոչումը ևս: Շատ ուժ, ուշադրություն և նվիրվածություն է նա տալիս վոկալ մանկավարժությանը, երիտասարդ երգիչների դաստիարակմանը: Կյանքի և մասնագիտական հարուստ փորձը, բարձր վարպետությունը, լուրջ աշխատանքը թույլ են տվել նրան հասնելու լուրջ արդյունքների և այս ասպարեզում: Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր Տ. Տ. Սազանդարյանի դասարանից դուրս են եկել ոչ քիչ օժտված, լավ պատրաստված երիտասարդ վոկալիստներ:

Այս ամենին պետք է նաև մի քանի խոսք ավելացնել տաղանդավոր, խելացի, արտիստիկ, բազմակողմանիորեն շնորհված, եռանդուն Տաթևիկ Տիգրանովնայի անձի մասին: Նա մշտապես շարժման, նորի որոնման մեջ է: Նրան՝ երաժշտական արվեստի ականավոր գործչին, հատուկ է հասարակական ինքնագիտակցության քաղաքացիական բարձր զգացումը: Նա ակտիվ մասնակցում է հանրապետության հասարակական կյանքին, ընտրվել է ՍՍՀՄ Գերագույն սովետի, Երևանի քաղսովետի դեպուտատ, մշտապես մրցանակաբաշխությունների ժյուրիների, տարբեր հանձնաժողովների մասնակիցն է, ելույթ է ունենում կոնֆերանսներում, համագումարներում, ռադիոյով և հեռուստատեսությամբ: Արտիստն ու քաղաքացին, արվեստն ու կյանքը նրա հասկացողությամբ անբաժանելի երևույթներ են:

ԳԵՈՐԳԻ ՏԻԳՐԱՆՈՎ
1977

Սա եղել է երեսնական թվականների կեսերին, Մոսկվայում: Ես սովորում էի Մոսկվայի կոնսերվատորիայում և միաժամանակ որպես կոնցերտմայստեր աշխատում էի Սովետական Հայաստանի Մշակույթի տանը: Այս հարմարավետ տանը հավաքվում, պարապում և համերգներով ելույթ էին ունենում հայաստանյան երաժիշտ-թոշակառուները, որոնց մեջ իր երաժշտականությամբ, օժտվածությամբ և մարդկային հմայքով աչքի էր ընկնում երիտասարդ, կենսուրախ, արտակարգ աշխատասեր, սովորելու միջոցով հնարավորին չափ շատ գիտելիքների ամբարելու, վոկալ վարպետության բոլոր գաղտնիքներին առավել խորը տիրապետելու ցանկությամբ լեցուն Տաթևիկ Սազանդարյանը:

Մենք պարապում էինք գրեթե ամեն օր, մի քանի ժամ: Եվ, պետք է ասել, աշխատում էինք հսկայական ոգևորությամբ ու սիրով:

Տաթևիկը շատ ընդունակ էր և չնայած այն բանին, որ նա իր վառ տաղանդի շնորհիվ հեշտությամբ և արագ էր տիրապետում նոր նյութին, նա արտակարգ պահանջկոտ էր իր հանդեպ և չէր հանգստանում մինչև կատարման ենթակա ստեղծագործությունը չհասցներ լրիվ կատարելության: Ունենալով առաջնակարգ, բացառիկ գեղեցիկ, բազմերանգ տեմբրի և մեծ երաժշտականության ձայն, նա արդեն այն երիտասարդ տարիներին իր արտիստական տաղանդով գերում էր ունկնդիրներին:

Մշակույթի տանը հաճախ էին համերգներ կազմակերպվում: հրավիրվում էին Մոսկվայի թատրոնի արտիստները և յուրաքանչյուր համերգին մասնակցում էր նաև Տաթևիկ Սազանդարյանը: Նրա գերազանց վոկալ և կատարողական տվյալները, բեմական հմայքը, երիտասարդական ավյունը մշտապես արժանանում էին հասարակության հիացական վերաբերմունքին:

Այն ժամանակ արդեն, դեռևս բոլորովին երիտասարդ, նա ապրում էր լիարյուն ստեղծագործական կյանքով: Իսկ չէ որ նա 17 տարեկանից ավել չէր:

Իր այդ սիրահարվածությունը երաժշտությանը՝ Տաթևիկ Սազանդարյանը, այժմ փառաբանված երգչուհին, ՍՍՀՄ ժողովրդական արտիստուհին, տարել է իր փայլուն արտիստական կյանքի շատ ու շատ տարիների միջով:

Մոսկվայից մեկնելուց հետո մեր կապը Տաթևիկ Տիգրանովնայի հետ չկտրվեց: Մենք հաճախ հանդիպում էինք մրցույթներին,

համամիութենական վոկալ կոնֆերանսներին, տան պայմաններում: Նման շատ հաճելի և ուրախալի հանդիպումների ժամանակ մենք շատ բաների մասին էինք խոսում, հիշում անցյալը, կարծիքներ էինք փոխանակում երգարվեստի վերաբերյալ:

Եվ միշտ զգում էի, զգում եմ և հիմա, Տաթևիկ Տիգրանովնան անդադար այրվում էր, մշտապես ձգտում էր որքան կարելի է շատ բան անել վոկալ արվեստի և մանկավարժության զարգացման համար:

Տաթևիկ Տիգրանովնան միշտ մեր երկրի երաժշտական կյանքի ոլորտում է, նա այն ամենի ակտիվ նախաձեռնողն է, ինչ նպաստում է երաժշտական կուլտուրայի բարգավաճմանը, ժյուրիների անփոփոխ անդամ է, իսկ շատ դեպքերում էլ վոկալի մրցույթների նախագահ:

Առանձնապես պետք է նշել նրա մեծ շահագրգռվածությունը ստեղծագործական երիտասարդության պրոֆեսիոնալ մակարդակի բարձրացման գործում:

Թբիլիսիի օպերային արվեստի սիրահարները լավ են հիշում Տաթևիկ Սազանդարյանին՝ Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնի թբիլիսյան հյուրախաղերի ժամանակ:

Պրոֆեսիոնալ բարձր կուլտուրան, նրբին արտիստայնությունը, բեմական վերամարմնավորման բացառիկ վարպետությունը, հմայիչ կանացիությունը, բնածին նրբագեղությունը, հորդացող եռանդը և այս ամենը՝ զուգակցված առաջնակարգ վոկալ վարպետության և վիրտուոզ վոկալ տեխնիկայի հետ, հանդիսականներին պատճառում էին հուզիչ ուրախություն և իսկական գեղագիտական հաճույք: Ոչ պակաս ուժեղ տպավորություն է թողնում ռոմանսների և հայկական ժողովրդական երգերի կատարումը, որոնք նա մատուցում է արտասովոր ջերմությամբ ու վարպետությամբ:

Թբիլիսիում նա շատ ընկերներ ունի և իր փայլուն տաղանդի շատ երկրպագուներ:

Տաթևիկ Սազանդարյանն այժմ իր ողջ ուժերը, իր հարուստ գիտելիքներն ու փորձը նվիրաբերում է երիտասարդ վոկալիստների դաստիարակման շնորհակալ գործին: Այս պատասխանատու և դժվարին ասպարեզում ևս նա իրեն դրսևորում է որպես հիասքանչ և խորհող մանկավարժ: Նրա աշակերտներն իրենց պրոֆեսորից ընդօրինակում են բարձր պատասխանատվության և պահանջկոտության զգացում իրենց հանդեպ, որը միշտ էլ Սազանդարյանի տարբերիչ հատկությունն է եղել անցյալում և այսօր: Հանրահայտ է

Սազանդարյանի արտիստական, մանկավարժական և հասարակական գործունեությունը, նրա անսպառ եռանդը, զարմանալի աշխատասիրությունը և չթուլացող կենսասիրությունը: Ամբողջ սրտով Տաթևիկ Տիգրանովնային ցանկանում ենք ստեղծագործական երկարակեցություն և հավերժ երիտասարդի սիրահարվածություն իր հիասքանչ արվեստին:

Մ. ԿԱՄՈԵՎԱ
1977

## ԱՅԴՊԻՍԻ ՏԱԹԵՎԻԿԻՆ ԵՄ ՍԻՐՈՒՄ

Առաջին իսկ հանդիպման ժամանակ մենք բարեկամացանք: Նա ինձ գրավեց անմիջապես: Իմ առջև արտասովոր քնքույշ, հմայիչ կին էր, նուրբ ու ոգեշունչ դեմքով: Նա այնքան հմայիչ էր, այնքան առինքնող պարզություն ուներ, որ իսկույն ինձ մտերիմ դարձավ, կարծես նրան վաղուց, շատ վաղուց գիտեի: Նա ամբողջովին ներթափանցված էր լիաթոք կենսաշնչով:

Ցավոք, բեմում քիչ եմ տեսել Տաթևիկ Սազանդարյանին՝ երկու ներկայացման մեջ և համերգում, բայց դա բավական էր նրա ձայնի գեղեցկությունը, տաղանդի ուժը զգալու համար: Նա հանդիսականին հմայում էր իր բռնկուն եռանդով, կատարողական բարձր տեխնիկայով, քնարականությամբ հագեցված դրամատիզմով, ունկնդիրներին պարգևում էսթետիկական հաճույք, հմայում նրանց հոգին, ջերմացնում իր հիասքանչ արվեստով:

Տաթևիկն առաջին մեծության աստղ է, դրա համար էլ նա մեծ պատասխանատվություն է զգում հանդիսականների, ժողովրդի, իր դաստիարակած կադրերի առջև:

Սովետական Միության ժողովրդական արտիստուհի Տաթևիկ Սազանդարյանն օժտված է հայ կանանց հատուկ լավագույն, ազգային հատկանիշներով, հոգեկան գեղեցկությամբ, վեհությամբ, սիրելի հայրենիքի հանդեպ նվիրվածությամբ: Այդպես նրան գիտեմ, որպես այդպիսին էլ նրան սիրում եմ:

ՎԵՐԻԿՈ ԱՆՋԱՓԱՐԻՁԵ
1977

# ԱՄԲՈՂՋ ՍՐՏՈՎ

Որքան էլ ցավալի է, բայց ես չեմ լսել Տաթևիկ Սազանդարյանին երգելիս: Սակայն ես շատ անգամ եմ առիթ ունեցել հիացական կարծիքներ լսելու նրա արվեստի մասին: Բոլոր նրանք, ովքեր բախտ են ունեցել ներկա գտնվել այդ հրաշալի երգչուհի-արտիստուհու մասնակցությամբ համերգներին կամ օպերային ներկայացումներին, միահամուռ դրվատում են նրա արտիստիզմը և վառ, ինքնատիպ գեղարվեստական տեմպերամենտը:

Ինձ շատ են պատմել Տաթևիկ Սազանդարյանի կամերային գեղեցիկ կատարումների, նրա ստեղծած բեմական հոյակապ կերպարների՝ Կարմենի, Ազուչենայի, Ամներիսի և շատ ուրիշների մասին:

Ես լավ եմ ճանաչում Տաթևիկ Տիգրանովնային իբրև բանիմաց մանկավարժի: Պրոֆեսոր Սազանդարյանի հետ ինձ քանիցս վիճակվել է աշխատել համամիութենական և միջազգային վոկալ մրցույթների ժյուրիներում: Նրա մանկավարժական քանքարն իր գեղեցիկ դրսևորումն է գտել նրա աշակերտների մեջ, որոնց կատարումը միշտ էլ աչքի է ընկնում ոճակած ճշգրտությամբ, անկեղծ հուզականությամբ, տեխնիկական ազատությամբ:

Ես խորապես հարգում եմ Տաթևիկ Սազանդարյանի մարդկային հատկանիշները՝ նրա պարզությունը, անսահման բարյացակամությունը, նրա ճշմարիտ, խորունկ ինտելիգենտությունը: Գիտեմ, թե որքան մեծ ժողովրդականություն է վայելում այդ երգչուհին: Ես առիթ եմ ունեցել փողոցում արտիստուհուն հանդիպած մարդկանց աչքերում նկատելու այն անսահման համակրանքը, երախտագիտությունը և բարեհաճությունը, որ տածում են նրանք սիրելի արտիստուհու հանդեպ: Ինձ հիացմունք է պատճառում այդ ականավոր երգչուհու բնավորության կայունությունը. նա հավասարապես ուշադիր և սիրալիր է թե՛ դեպի ժողովրդական արտիստը, և թե՛ բեմի բանվորը:

Ամբողջ հոգով մաղթում եմ սիրելի Տաթևիկ Տիգրանովնային ամենալավ բաները՝ ստեղծագործական բազում ուրախություններ, առողջություն և երջանկություն:

Սրտանց՝

ՄԱՐԻԱ ԲԻԵՇՈՒ
1978

Հայ հիասքանչ երգչուհի Տաթևիկ Տիգրանի Սազանդարյանը լայնորեն հայտնի է մեր երկրում: Վրաց երաժշտական հասարակայնությունը բարձր է գնահատում նրա արտիստական վառ տաղանդը, կատարողական բարձր կուլտուրան և մանկավարժական մեծ ծառայությունները:

Նրա մասին մեծ հարգանքով և սիրով էին արտահայտվում իմ ծնողները՝ վրաց հայտնի երգիչներ՝ Նադեժդա Աֆանասևնա Ցոման և Պյոտր Վարլամովիչ Ամիրանաշվիլին: Նրանց մերձեցնում էր արտիստական ճակատագիրը և հայրենասիրական բոցավառ զգացումը հարազատ արվեստի հանդեպ:

Հենց նրանցից էլ առաջին անգամ լսեցի Տ. Սազանդարյանի անունը և համակվեցի նրա հանդեպ հետաքրքրությամբ:

Մեր անմիջական ծանոթությունը տեղի է ունեցել ավելի ուշ, 1960 թ. Մոսկվայում կայանալիք վոկալիստների՝ Մ. Ի. Գլինկայի անվան առաջին համամիութենական մրցույթում, ուր ես, սկսնակ երգչուհիս, փորձում էի ստեղծագործական ուժերս: Մինչև այսօր հիշում եմ նրա օգնությունը, ուշադրությունը, ջերմությունը, որ նա դրսևորում էր երիտասարդ մրցակցողների հանդեպ:

Հիշում եմ, թե ինչպես երրորդ փուլից հետո նա մտավ ինձ մոտ կուլիսների ետև և ուրախ ասաց. «Մեդեա, դու պատվով բռնեցիր քո քննությունը»:

Հենց այն ժամանակ սկսվեց մեր բարեկամությունը, որը շարունակվում է մինչև հիմա: Մենք այժմ միասին ենք մասնակցում վոկալիստների Գլինկայի անվան համամիութենական մրցույթի աշխատանքներին: Մեզ կապում են ոչ միայն մասնագիտական հետաքրքրությունները, այլև անկեղծ բարեկամությունը: Հանձին նրա ունեմ իմաստուն ուսուցչի, որի խորհուրդները ես միշտ լսում եմ մեծ հետաքրքրությամբ և ուշադրությամբ: Նրա մեջ հիանալիորեն զուգակցվում են հմայքը, սկզբունքայնությունը, դատելու ճկունությունը: Նա ինձ մշտապես գերում է ներքին կուլտուրայով, իսկական ինտելիգենտությամբ և բարձր ճաշակով:

Իր փառապանծ հոբելյանի օրը Տաթևիկ Տիգրանովնային ցանկանում եմ քաջառողջություն, հետագա հաջողություններ մանկավարժական արդյունավետ աշխատանքում՝ ի բարօրություն հարազատ ժողովրդի և նրա արվեստի:

Տ. Տ. Սազանդարյանը վոկալի սովետական դպրոցի բոլոր ներկայացուցիչներիս համար օրինակ է հանդիսանում:

ՄԵԴԵԱ ԱՄԻՐԱՆԱՇՎԻԼԻ
1978

## ՆՈՐ ՏԻՊԻ ԵՐԳՉՈՒՀԻ

Տաթևիկ Սազանդարյանի հետ իմ անդրանիկ ստեղծագործական հանդիպումը կայացավ 1937-ին, երբ ես Մոսկվայում կայանալիք հայ արվեստի տասնօրյակին պատրաստվելու և մասնակցելու համար եկա Երևան:

Թատրոնում աշխատելու առաջին իսկ օրերից իմ ուշադրությունը գրավեց այդ երիտասարդ երգչուհին, որ ուներ վառ գեղեցկության բարձրաթռվիչ մեցցո-սոպրանո, որ ազատորեն կտրում-անցնում էր նվագախումբը և իրեն ենթարկում օպերային թատրոնի դահլիճը:

Մի քանի համատեղ փորձերից հետո ինձ համար պարզ դարձավ, որ Ալ. Սպենդիարյանի անվան թատրոնը հանձին Տ. Սազանդարյանի ունի ոչ միայն գերազանց վոկալիստի, այլև մի արտիստուհու, որը յուրաքանչյուր նոր օպերային կերպարի մերձենալիս, արդեն իսկ դրսևորում է այնպիսի շռայլ գծեր, որոնք հետո բնորոշ էին դառնալու նոր տիպի երգիչ արտիստների կատարողականի համար:

Սազանդարյանին հաջողվում էր խուսափել օպերային շտամպներից, ավելին, յուրաքանչյուր նոր դերերգում նա խաղընկերներին ու հանդիսականներին բառացիորեն ապշեցնում էր այն թեթևությամբ, որով հաղթահարում էր վոկալ և բեմական դժվարությունները:

Ինչ խոսք, օպերան երգչին ընձեռում է իր կատարողական տաղանդը դրսևորելու վիթխարի հնարավորություններ: Եվ ահա այստեղ է, որ անբասիր ճաշակը, վառ օժտվածությունը և անխոնջ աշխատասիրությունը օգնում էին նրան ստեղծելու անմոռաց կերպարներ:

Կերպար ստեղծելու գլխավոր միջոցից՝ երաժշտությունից բացի,

բեմական ստեղծագործության մեջ հերոսի բնութագրման համար անչափ կարևոր են դերի արտաքին նկարագիրը, արտիստի պահվածքը բեմում, նրա շարժումների պլաստիկան, դիմահարդարումը, զգեստը:

Այդ ամենը զարմանալիորեն միահյուսվում էին և կենդանություն տալիս Տաթևիկ Սազանդարյանի օպերային դերերին, քանի որ նրա բեմական կարողություններն արտակարգ բարձր էին:

Երգչուհուն միշտ էլ գրավում էին օպերային երաժշտության փիլիսոփայական խորքը, իր հերոսուհիների էության բազմապլանայնությունը: Որքա՜ն լավ էր նա կարողանում վերանձնավորվել այնպիսի տարբեր ու նշանակալի կերպարներում, ինչպիսիք են Ալմաստը, Կարմենը, Փառանձեմը, Լյուբաշան: Իր ստեղծագործության ծաղկման շրջանում Տ. Սազանդարյանը այդ և շատ ուրիշ դերերում իր նմանը՝ Սպենդիարյանի անվան թատրոնի բեմում չուներ:

Հիշողությանս մեջ ընդմիշտ մնացել է անմոռաց այն ժամանակը, երբ թատերախումբը մեծ ոգևորությամբ պատրաստում էր «Ալմաստը», որտեղ Տ. Սազանդարյանի կողմից գլխավոր հերոսուհու դերի կատարումը հետագայում դարձավ մանրակրկիտ ուսումնասիրության ու ընդօրինակման առարկա:

Տ. Սազանդարյանի, իբրև օպերային երգչուհու, աճի մեջ վիթխարի դեր խաղացին այնպիսի խոշոր դիրիժորներ, ինչպիսիք են Թավրիզյանը, Բուդաղյանը, Չարեքյանը, իսկ նշանավոր ռեժիսորներ Ռ. Սիմոնովի, Ա. Բուրջալյանի, Վ. Աճեմյանի, Ա. Գուլակյանի և Հ. Ղափլանյանի ղեկավարությամբ կերտած դերերը զարգացնում ու հղկում էին նրա հազվագյուտ տաղանդը:

Օպերային թատրոնում կատարած աշխատանքին զուգընթաց Տ. Սազանդարյանը մեծ ուշադրություն էր նվիրում կամերային երաժշտությանը և հատկապես հայ ժողովրդական երգին: Այդ խնդրում վճռորոշը արտիստուհու կողմից հեղինակային մտահղացման ըմբռնումն է, գլխավորը որսալու և ունկնդիրներին սեփական մեկնաբանությունը հասցնելու կարողությունը:

Տաթևիկ Սազանդարյանի համար ստեղծագործական պրոցեսը երբեք կանգ չի առնում, և նա իր դերերում տարեցտարի հայտնաբերում է նորանոր գույներ: Իսկ ինչպիսի հոգեվին ջերմությամբ, ինչպիսի ցավ ու հրճվանքով են երգչուհու կատարմամբ հնչում մեր անկրկնելի ժողովրդական երգերը:

Տաթևիկ Սազանդարյանը երևույթ է սովետական արվեստում:

Եվ նա իրավամբ է կրում ՍՍՀՄ ժողովրդական արտիստի, պետական մրցանակի դափնեկրի բարձր կոչումը:

Այժմ երգչուհին ղեկավարում է Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի ամբիոնը և մեծ հաջողությամբ պարապում երիտասարդ վոկալիստների հետ, որոնցից շատերն իրենց լավ են դրսևորել համամիութենական և միջազգային մրցույթներում...

...Լավ կլիներ, որ մեր երիտասարդ վոկալիստներն ուսումնասիրեն հրաշալի երգչուհու բարդ ու շատ հետաքրքիր ստեղծագործական ուղին:

ՊԱՎԵԼ ԼԻՍԻՑԻԱՆ
1978

## ԳԵՐՈՂ ԱԼՄԱՍՏ

Սազանդարյանի հետ առաջին անգամ հանդիպել եմ 1939 թ., Մոսկվայում, Մեծ թատրոնի ֆիլիալում, լսելով նրան Ալ. Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայում: Հայաստանցի հյուրերը ներկայացնում էին այդ օպերան՝ Սպենդիարյանի անվան օպերային թատրոնի հիասքանչ բեմադրությամբ:

Ինչպես լինում էր Սովետական Միության ազգային հանրապետությունների տասնօրյակների ներկայացումներին, բոլորը համակված էին բարձր տրամադրությամբ: Օպերային արվեստի երկրպագուները ցանկանում էին ծանոթանալ ականավոր ստեղծագործությունների և կատարողների հետ: Ալմաստի դերում Տ. Սազանդարյանի հանդես գալը ինձ վրա արտասովոր տպավորություն թողեց, երբ, ասես, երևաց հեքիաթային գեղեցկուհին հազար ու մեկ գիշերներից՝ Թաթուլ իշխանի կինը: Իշխանուհի Ալմաստը արտակարգ գերող էր: Նա ամբողջովին շնչում էր արևելյան քնքշանքով: Գրավիչ էին զգեստը, շարժումները, պարը: Դժվարին վոկալ դերերգը կատարվեց փայլուն:

Ես նրան այժմ էլ, շատ տարիներ անց, տեսնում ու պատկերացնում եմ առաջվա պես և ստանում մեծ հաճույք: Ուրիշ Ալմաստ ես չեմ կարող պատկերացնել:

Հետագայում հազվադեպ եմ լսել Տաթևիկ Տիգրանովնային, որովհետև աշխատում և ապրում էի Մոսկվայում, իսկ նա Երևանում, երկուսս էլ զբաղված էինք թատրոնի պատասխանատու խաղացանկում ու հասարակական աշխատանքով և հաճախակի հանդիպումների համար ժամանակ չունեինք: Բայց և այնպես ինձ հաջողվում էր լսել նրան համերգների ժամանակ և նրա երգելը միշտ էլ ինձ գեղագիտական հաճույք էր պատճառում:

Նա միշտ ձևի մեջ էր, նրա հիասքանչ տաք ձայնը հավասար և գեղեցիկ էր հնչում բոլոր ռեգիստրներում: Տ. Տ. Սազանդարյանի ողջ կյանքը մայրենի արվեստին ծառայելու փայլուն օրինակ է: Ականավոր վոկալիստ լինելով հանդերձ, նա իր հարուստ փորձը մեծ հաջողությամբ հաղորդում է երիտասարդ սերնդին, ունենալով այդ բնագավառում լավ ցուցանիշներ: Նրա աշակերտուհիները մեծ հաջողությամբ հանդես են գալիս վոկալիստ-կատարողների մրցույթներում, ցույց տալով իրենց ուսուցչի ներդրումը:

Տ. Տ. Սազանդարյանը գործուն մասնակցություն է հանդես բերում տարբեր մրցույթներում, հանդիսանալով ժյուրիի անդամ:

Այդ ողջ հսկայական աշխատանքը քիչ ուժեր չի պահանջում, դրա համար էլ ես ամբողջ սրտով կամենում եմ իմ սիրելի բարեկամին ու արվեստակից ընկերոջը քաջառողջություն, երկար տարիների ստեղծագործական հաջողություններ:

ՎԵՐԱ ԴԱՎԻԴՈՎԱ
1978

## ՆՐԱՆ ՍԻՐՈՒՄ ԵՆ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

ՍՍՀՄ ժողովրդական արտիստուհի, պետական մրցանակի դափնեկիր Տաթևիկ Սազանդարյանի արվեստի հետ ես ծանոթ եմ երեսուն տարուց ի վեր: Հրաշալի մեցցո-սոպրանոն, անբասիր պրոֆեսիոնալիզմը, ընդարձակ երգացանկը նրան բերել են ականավոր երգչուհու համարում: Նրան գիտեն, հարգում և գնահատում են Վրաստանում:

Նրա գործունեությունը լայնորեն լուսաբանվել է մամուլում: Նրա արվեստին ծանոթ են ոչ միայն մեր, այլև արտասահմանյան երկրների հանդիսականները:

Տ. Սազանդարյանը՝ լինելով ակտիվ հասարակական գործիչ, մասնակցում է նաև վոկալիստների միջազգային, համամիութենական, միջհանրապետական մրցույթներին՝ որպես ժյուրիի անդամ, միջազգային կոնֆերանսներին, աշխարհի տարբեր երկրների հետ բարեկամության ընկերությունների աշխատանքին: Նա ընտրվել է ՍՍՀՄ Գերագույն սովետի դեպուտատ:

Համակողմանի և արգասավոր է Տ. Սազանդարյանի գործունեությունը:

Հայ երգչուհին չի սահմանափակվում սոսկ բեմական ասպարեզով, նա հաճախակի հանդես է գալիս պարբերական մամուլում, ռադիոյով և հեռուստատեսությամբ, գրում տեսական հոդվածներ և արժեքավոր հուշեր:

Տ. Սազանդարյանն իր աշխատանքը օպերային թատրոնում հաջողությամբ, մեծ սիրով ու եռանդով համատեղել է մանկավարժական գործունեությամբ: Նրա սաները մասնակցում են պատասխանատու մրցույթների և հասնում լավ արդյունքների:

ՕԹԱՐ ԹԱԲԹԱԲԻՇՎԻԼԻ
1978

## ՄԵՐ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՀՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Տակավին երիտասարդ Սազանդարյանը երաժշտական աշխարհ մուտք գործեց իբրև հասուն վարպետ: Ես այդ տպավորությունը ստացա այն օրից ի վեր, ինչ նրան տեսա առաջին անգամ, 1939 թվականին, հայ արվեստի տասնօրյակին, Ալմաստի դերում:

Թե վոկալ և թե բեմական իմաստով Ալմաստը օպերային

գրականության ամենաբարդ հոգեբանական կառուցվածք ունեցող կանացի կերպարներից է: Թող ինձ ներվի, բայց Սազանդարյանի ստեղծած Ալմաստը համաշխարհային օպերային արվեստի այդ նշանավոր երկի դասական համարում ստացած հերոսուհու ամենակատարյալ մարմնավորումն է: Այդ մասին շատ կարելի է խոսել, բայց իմ կարծիքով պիտի նշվի ամենակարևորը, թե ո՞րն է Ալմաստ-Սազանդարյանի անկրկնելի հմայքի գաղտնիքը: Սազանդարյանի առաջին մուտքից ներկայացման ամբողջ մթնոլորտը համակվում էր ոչ միայն նրա կերպարի շնչով, այլ դերասանուհին մեզ անմիջապես գրավում էր հերոսուհու արքայական պահվածքով և հպարտ գեղեցկությամբ: Դուք նախօրոք, Թումանյանի պոեմի ընթերցումից արդեն գիտեիք, որ Ալմաստը դավաճան է, սակայն նույնիսկ այդ իրողությունը ձեզ չէր խանգարում, որ դուք հմայված ու ամբողջովին կլանված դիտեիք Սազանդարյանի ստեղծած Ալմաստին, հրճվեիք նրանով, սիրեիք նրան, հասկանայիք նրա դժբախտության ակունքները, նրա հետ միասին վերապրեիք նրա ուրախությունն ու սերը, նրա դրաման, նրա ողբերգությունը:

Ես կարծում եմ, որ հենց այդպիսի Ալմաստ է երազել Սպենդիարյանը, որովհետև այդ կերպարի շնորհիվ է, որ պիտի առաջ գնա այդ ստեղծագործության դրամատիկ լարումը, նրա սյուժետային գծի բուն զարգացումը:

Ալմաստը Տաթևիկ Սազանդարյանի բարձրագույն ու փայլուն հաջողություններից մեկն է: Սազանդարյանի կատարողական արվեստն ընդգծված է իր գունեղությամբ, իրեն հատուկ մաներայով, որովհետև դրա շնորհիվ նրա կատարած յուրաքանչյուր երգ առանձնահատուկ գծեր է ձեռք բերում: Ես ինքս այդ զարմանալի ու հաճելի զգացումն ապրել եմ, երբ լսելով քո իսկ գրած երաժշտությունը, հանկարծ տեսնում ես, թե ինչպես Տաթևիկ Սազանդարյանը քո ստեղծագործությունը կատարելիս ներմուծում էր ինչ-որ սեփական ինտոնացիաներ, սեփական մելիզմներ, որոնք ոչ նոտաների մեջ կան, ոչ էլ հնարավոր է նոտաներով արտահայտել, իսկ հենց դրա շնորհիվ երգն ավելի խորը ու արտահայտիչ է դառնում:

Տաթևիկ Սազանդարյանը երգում էր ազգային ստեղծագործություններ: Նա խորապես ազգային երգչուհի է, իսկ երբ կատարում էր ռուսական և արևմտաեվրոպական կոմպոզիտորների երգերը, նա արդեն եվրոպական մշակույթին տիրապետող վարպետ

էր դառնում: Սազանդարյանը, իրավամբ, մեր երաժշտական արվեստի հպարտությունն է:

Ինձ թվում է, նա հայ մշակույթի ամենաերջանիկ ներկայացուցիչներից մեկն է: Այդ երջանկության աղբյուրը ոչ միայն համընդհանուր ճանաչումը, հարգանքը և սերն է, որ իրավամբ վայելում է նա, այլ արտիստական անհատականության բացառիկ ձիրքը, մեծ տաղանդը: Չէ՞ որ շատ ու շատ տաղանդավոր դերասաններ շատ հաճախ զուրկ են այն շնորհքից, որ առաջին իսկ մուտքից (անկախ նրանից, թե դա ներկայացման որ տեսարանում է կատարվում կամ նա ինչպիսի դերով է հանդես գալիս այդ օրը) կարողանան միանգամից, մագնիսի նման քաշել և տանել ամբողջ դահլիճի ուշադրությունն իրենց կողմը, և այդ բարձր լարվածության վիճակում էլ պահեն հանդիսականին, մինչև բեմից հեռանալը:

Սա իհարկե բնատուր ու հազվագյուտ շնորհք է: Եվ ես մի անգամ էլ ուզում եմ կրկնել, որ չնայած դրան, նա իր վարպետությունը կատարելագործել է ամբողջ կյանքի ընթացքում: Մինչդեռ ես հիշում եմ իմ առաջին տպավորությունը, ըստ որի նա դեռ այն ժամանակ բեմ ելավ որպես հասուն վարպետ:

Իմ կարծիքով Տ. Սազանդարյանից շատ բան կարելի է սովորել: Բայց մյուս կողմից էլ պիտի շեշտել, որ ընդօրինակել նրան չի կարելի, որովհետև դրա համար պիտի հենց Տաթևիկ Սազանդարյան ծնվես:

Ես այստեղ չեմ խոսում նրա ակտիվ հասարակական գործունեության մասին, երիտասարդ սերնդին դաստիարակելու հիանալի ունակությունների մասին: Ես միայն ուզում եմ մեկ անգամ ևս շեշտել, որ ես միշտ մեծ ուրախությամբ ու երախտագիտությամբ եմ մտաբերում իմ բոլոր ստեղծագործական հանդիպումները հռչակավոր հայ երգչուհի և դերասանուհի Տաթևիկ Սազանդարյանի հետ:

ԷԴՎԱՐԴ ՄԻՐԶՈՅԱՆ
1979

## ՄԵԾ ՍԻՐՈՎ

1967 թվական... Տ. Գ. Շևչենկոյի անվան օպերայի և բալետի թատրոնը նշում էր իր 100-ամյակը: Բեմ է բարձրանում սլացիկ, գեղեցիկ մի կին և հայ ժողովրդի անունից դիմում հոբելյարներին ողջույնի խոսքով: Նրա ելույթը առլեցուն էր այնպիսի անկեղծ ջերմությամբ և սիրով ուկրաինական ժողովրդի հանդեպ, որ թվաց արևային Հայաստանից ճառագայթներ թափանցեցին թատրոնի դահլիճ, լուսավորելով ու ջերմացնելով հանդիսանքի բոլոր ներկաներին:

Դա Տաթևիկ Տիգրանի Սազանդարյանն էր:

Այդ զարմանալի մարդու հետ մոտիկից ծանոթանալ և շփվել ինձ առիթ ներկայացավ վոկալի ամենատարբեր մրցույթներում և ստուգատեսներում, ժյուրիի սեղանի շուրջ նստելիս:

Տաթևիկ Տիգրանովնան միշտ մասնագիտորեն և ճշգրիտ հայտնում էր իր կարծիքը, հանդես էր բերում խստապահանջություն, մանրամասնորեն վերլուծելով երիտասարդ երգիչների բոլոր առավելություններն ու թերությունները: Երիտասարդությանը նա վերաբերվում էր բացառիկ բարյացակամությամբ և մեծ սիրով:

Անձնական շփումները Տաթևիկ Տիգրանովնայի հետ ինձ բազմիցս հսկայական ուրախություն են պատճառել: Նա հիանալի երաժիշտ է, հմայիչ մարդ, իսկ հանդիպումները նման մարդկանց հետ միշտ էլ հարստացնում են մեզ:

ԵԼԻԶԱՎԵՏԱ ՉԱՎԴԱՐ
1979

## ԱՆԿՐԿՆԵԼԻ ԱՐՎԵՍՏ

ՍՍՀՄ ժողովրդական արտիստուհի Տաթևիկ Սազանդարյանը մեր ժամանակի ականավոր երգչուհին է: Տ. Սազանդարյանի ստեղծագործական նկարագրում հիմնականը մեծ երաժշտի և իր մասնագիտական արվեստի գաղտնիքներին կատարելապես տիրապետող զարմանալի երգչուհու նուրբ և ներդաշնակ համատեղումն է:

Երեսունհինգ տարուց ավելի է, ինչ Տ. Սազանդարյանի անկրկնելի ձայնը հնչում է Երևանի Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնի բեմից և այդ ժամանակամիջոցում նա բազմաթիվ անմոռանալի կերպարներ է ստեղծել ամենատարբեր ժամանակների ու ոճերի կոմպոզիտորների օպերաներում:

Տ. Սազանդարյանը հավասար հաջողությամբ ելույթ է ունենում նաև համերգային ծրագրերով՝ ինչպես Սովետական Միությունում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Եվ նրա անունը լայնորեն հայտնի է դարձել բազմաթիվ երկրներում՝ որպես մեծ արտիստուհու, որն արժանապատվությամբ ներկայացնում է աշխարհին մեր արվեստը:

Ստեղծագործական աշխատանքների հետ միաժամանակ, Տ. Սազանդարյանը միշտ կարողացել է ակտիվորեն զբաղվել նաև հասարակական գործունեությամբ, բազմիցս գրավելով ընտրական բարձր դիրքեր: Իր հարուստ արտիստական փորձը նա հաջողությամբ հաղորդում է երիտասարդ սերնդին, որովհետև մանկավարժությանը նույնպես վերաբերվում է գեղարվեստական բարձր պահանջկոտության դիրքերից: Չենք կարող ժխտել, որ Տ. Սազանդարյանի բարձր արվեստը և հիանալի ձիրքերը իրոք մեծ ազդեցություն են գործել սովետական վոկալ դպրոցի զարգացման ընթացքի վրա:

ԶԱՐՈՒՀԻ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ
1980

## ՀՄԱՅՔ, ԱՐՏԻՍՏԻԶՄ

Վերհիշում եմ 1940 թվականը:

Հայֆիլհարմոնիայի դահլիճում, Երեանում, կայացավ վրացական երաժշտության համերգ, որին մասնակցում էին երգիչներ Դ. Անդգուլաձեն, Պ. Ամիրանաշվիլին, դիրիժոր Ծ. Ազմայփարաշվիլին և ես: Համերգն անցավ մեծ հաջողությամբ, մեզ շատ ջերմորեն ընդունեցին:

Համերգից հետո ընդունելություն էր կազմակերպվել, և ահա այնտեղ ես առաջին անգամ հանդիպեցի ջահել, թուխ, շատ զվարթ ու հմայիչ մի աղջկա, որը սեղանի շուրջ հիանալի երգում էր, բառացիորեն բոլորիս թովում հայկական ժողովրդական աննման երգերով:

Ինչպես հետո իմացանք, Տաթևիկ Սազանդարյանն էր:

Գուցե հենց նրա համար, որ երկուսս էլ ջահել էինք, ուրախ, կենսախինդ և բնավորությամբ շատ նման, մենք շատ շուտով դարձանք մեծ բարեկամներ:

Դրանից հետո Տաթևիկի հետ ես հաճախ եմ հանդիպել համատեղ համերգներում՝ Մոսկվայում, Թբիլիսիում, նրա հարազատ քաղաքի ներկայացումներում, իսկ ավելի ուշ՝ վոկալիստների բազմաթիվ մրցույթներում: Տաթևիկը հաճախ էր հյուրախաղերի գալիս մեզ մոտ, երգում էր ներկայացումներում, մենահամերգներ տալիս: Գեղեցիկ, փափուկ տեմբրի ձայնը և բեմական թովիչ հմայքը նրան միշտ էլ վիթխարի հաջողություն էին բերում: Տաթևիկ Սազանդարյանի կերտած բեմական կերպարները՝ Կարմեն, Ամներիս և այլն, ապշեցնում էին ոչ միայն վոկալ և արտիստական տեխնիկայի կատարելությամբ, այլև ինքնօրինակ մեկնաբանությամբ:

Իրար չնմանվող, տարբեր, բայց միշտ վառ ու նշանակալի այդ բոլոր կերպարների արարիչը Սազանդարյանի անհատականությունն էր. ոչ թե սոսկ գեղեցիկ ձայն ունեցող լավ արտիստուհի, այլ խելացի, խորունկ, կյանքը մի առանձին հայացքով տեսնող մարդ, որ հենց դրա շնորհիվ ընդունակ է իր ստեղծագործության մեջ անելու մեծ, բարձր ընդհանրացումներ:

Թեթև ու շարժուն, Սազանդարյանը հոյակապ տիրապետում էր իր մարմնին, և դա միշտ օգնում էր նրան ստեղծելու դերի սքանչելի պլաստիկ նկարագիր:

1970-ին Երևանում անցկացվող անդրկովկասյան երկրորդ մրցույթի ժյուրիի անդամ էի: Ժամանման օրը մեզ հրավիրեցին օպերային թատրոն, որտեղ ներկայացվում էր կոմպոզիտոր Տիգրանյանի «Դավիթ Բեկ» օպերան:

Այդ երեկո բոլորս մեծ հիացմունքով լսեցինք ողջ ներկայացումը, իսկ անձամբ իմ աչքերին միշտ արցունքներ էին:

Ես վերհիշում էի արտիստուհու անցած փայլուն ուղին, հիանում նրա սքանչելի մեցցոյի երիտասարդ, թարմ հնչողությամբ, զարմանում նրա անսպառ տեմպերամենտով:

Եվ կրկին անգամ գլուխս խոնարհեցի խելոք, նուրբ, իր հանդեպ

խստապահանջ արտիստուհու առջև, որն ուժերի լիակատար ծաղկման շրջանում կարող էր այդպես հպարտ և այդքան գեղեցիկ հեռանալ բեմից՝ իր բազմաթիվ երկրպագուների հիշողության մեջ ընդմիշտ մնալով երիտասարդ ու գերող:

Տաթևիկ Սազանդարյան-երգչուհին պահպանեց հրաշալի արտիստուհու և հոյակապ երգչուհու իր փառքը:

Դրանով նրա ստեղծագործական կյանքը չավարտվեց: Տաթևիկ Սազանդարյանը Երևանի կոնսերվատորիայի հիանայի մանկավարժներից է:

Եվ մի՞թե յուրաքանչյուր ճշմարիտ արվեստագետի համար հենց դա չէ բարձրագույն երջանկությունը:

ՆԱԴԵԺԴԱ ԽԱՌԱՋԵ
1980

## ՆՐԱ ՀԵՏ ԾԱՆՈԹ ԵՄ ՎԱՂՈՒՑ

Տաթևիկ Տիգրանովնայի հետ ես ծանոթացել եմ վաղուց, Մոսկվայում, վոկալիստների Մուսորգսկու անվան համամիութենական մրցույթում, որի ժյուրիի անդամներն էինք: Մենք անմիջապես մտերմացանք, կարծես վաղուցվա ծանոթներ լինեինք: Տաթևիկի հետ մեր հաճելի ծանոթությունը շարունակվում է և հիմա: Երևանի իմ բարեկամուհուն ես սիրում եմ նրա պարզության, հոգեհարազատության և ճկուն մտքի համար:

Տաթևիկի հետ մենք ընդհանուր հայացքներ ունենք շատ հարցերի վերաբերյալ: Նրա հետ հանդիպելիս մենք միշտ մտքեր ենք փոխանակում վոկալ դպրոցների, ինչպես և բնույթով տարբեր վոկալ-կերպարների մասին. չէ՞ որ երկուսիս ձայնն էլ մեցցո-սոպրանո է:

Մրցույթների ժյուրիի քննարկումների ժամանակ Տաթևիկի ելույթները միշտ էլ լավ մտածված են, տրամաբանված և բարյացակամ, զգացվում է, որ նա նրբորեն գիտի վոկալ-բեմական արվեստը:

Տրամաբանական է, բնական և գեղեցիկ, որ ՍՍՀՄ ժողովրդական արտիստուհի Տաթևիկ Սազանդարյանը 1961 թվականից սկսած աշխատում է Երևանի կոնսերվատորիայում որպես

մանկավարժ-վոկալիստ: Էլ ո՞վ, եթե ոչ նա, պետք է իր հսկայական վոկալ բեմական փորձը հաղորդի երիտասարդությանը: Տաթևիկ Տիգրանովնան ոչ միայն կարող է աշակերտին պատմել վոկալ դպրոցի, վոկալ բեմական կերպարի մասին, այլև ցույց կտա, թե ինչպես պետք է երգել, ինչ հնչեղություն է պետք այս կամ այն երաժշտական ստեղծագործության մեջ, կամ թե՝ ելնելով տվյալ կերպարի ներքին վիճակից, ինչպես ստեղծել ճշմարտացի, արտահայտիչ բեմական կերպար:

Իմ սիրելի ընկերուհի Տաթևիկին ուզում եմ ցանկանալ քաջառողջություն, ստեղծագործական ուրախություններ և ուժ՝ մեր երիտասարդ սերնդին դաստիարակելու համար:

Հայ և ուկրաինացի ժողովուրդների վաղեմի բարեկամությունը հսկայական օգուտ է բերում երկու ժողովուրդներին: Այդ բարեկամությունը հարստացնում և լրացնում է մեկը մյուսին, ինչպես գրականության ու արվեստի, այնպես էլ մեր մեծ բազմազգ հայրենիքի կյանքի բոլոր ոլորտներում:

ԼԵՈՆԻԴ ՌՈՒԴԵՆԿՈ
1980

## ԻԾԽԱՆՈՒՀՈՒ ՔՆՔՈՒԾ ԿԵՐՊԱՐԸ

ՍՍՀՄ ժողովրդական արտիստուհի Տաթևիկ Տիգրանի Սազանդարյանի հետ ես ծանոթացել եմ 1937 թվականի ամռանը, Ստեփանավանի հանգստյան տանը:

Ինչպես սովորաբար լինում է՝ հանգստյան տներում երեկոներ են կազմակերպվում: Այդպիսի երեկոներից մեկի ժամանակ Սազանդարյանին խնդրել էին երգել: Պարզվել էր՝ նվագակցող չկա: Ի՞նչ անել: Ես այդ հեռավոր ամռանը նույնպես գնացել էի Ստեփանավան՝ տատիս մոտ հանգստանալու: Հանգստյան տանը ինչ որ մեկը հիշել էր ինձ և իսկույն որոշել էին, որ ես կարող եմ օգտակար լինել իրենց հանպատրաստից միջոցառմանը: Հանգստյան տանը ինձ ծանոթացրին երիտասարդ, գեղեցիկ արտաքինով, հետաքրքիր մի աղջկա հետ: Կարծեցի նա էլ է

հանգստացող՝ սովորական տնային տնտեսուհի, ինչպիսիք շատ կային հանգստյան տանը: Սկսվեց մեր փորձը, և երբ նա երգեց՝ ես մնացի ապշած, այդ ի՞նչ ձայն էր: Ես Երևանի կոնսերվատորիայի երկրորդ կուրսի ուսանող էի և, բնականաբար, իսկույն հասկացա, որ այս երգչուհին արտակարգ երևույթ է: Եվ հենց այդտեղ էլ իմացա, որ Սազանդարյանը հրավիրված է Մոսկվայից Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական թատրոնում երգելու:

Երեք տասնամյակում թե՛ եվրոպական, թե՛ ռուսական, թե՛ հայկական դասական օպերաների անմոռաց դերերգերի մի ամբողջ պատկերասրահ ստեղծած Տաթևիկ Սազանդարյանի մասին շատ է գրվել և ըստ էության ես ոչինչ չեմ ավելացնի նրան՝ որպես երգչուհու և վարպետ դերասանի տված գնահատականներին: Այո, դա իրոք սքանչելի է՝ փայլուն երգչուհու և փայլուն դերասանի ներդաշնակ միասնությունը, որը նրա հաջողության ամենամեծ նախապայմանն է:

Նոր դերի վրա աշխատեր, թե սովորական մի երգ պատրաստեր՝ միևնույն է, նա միշտ պահանջկոտ էր իր նկատմամբ, և իր աշխատանքին վերաբերվում էր պատասխանատվության այնպիսի մեծ զգացումով, ինչպիսին որ պետք է ունենա յուրաքանչյուր իրեն հարգող արվեստագետ:

Ի երջանկություն ինչպես հայ կոմպոզիտորների, այնպես էլ նրա մեծ տաղանդի երկրպագուների, Տաթևիկ Սազանդարյանը չսահմանափակվեց օպերային բեմով, նա հայ կոմպոզիտորների երգերի ու ռոմանսների առաջին և անկրկնելի կատարողն էր:

Բավական է հիշել Աշոտ Սաթյանի երգերի կատարումները, որպեսզի լիիրավ իրավունքով երգչուհուն անվանենք կոմպոզիտորին համահեղինակ՝ նկատի ունենալով այդ երգերի յուրահատկությունը, բույրը, կոլորիտը, որոնք հիանալիորեն վերարտադրում և խորացնում էր միայն ու միայն Տաթևիկ Սազանդարյանը:

Իսկ ինչպիսի՜ զգացմունքայնությամբ, անկրկնելի տխրությամբ է հնչում Գայանեի արիան «Դավիթ Բեկ» օրատորիայում:

1954 թ. գարնանը բանաստեղծ Հ. Ղուկասյանի համահեղինակությամբ ես գրեցի «Երգիր ինձ համար» երգը՝ հատկապես Տաթևիկ Սազանդարյանի ձայնի համար: Այդ օրերին իր ընտրողների հետ հանդիպելու համար Երևան էր ժամանել Ա. Միկոյանը, հենց այդ առթիվ կազմակերպված երեկոյին էլ առաջին անգամ հնչեց երգը՝ սիմֆոնիկ նվագախմբի մասնակցությամբ, որի դիրիժորն էր Նիյազին: Երգը մեծ հաջողություն ունեցավ շնորհիվ հիասքանչ կատարման: Սազանդարյանը երգի մեջ դրեց իր իսկ երանգները,

որոնք ավելի հարստացրին ստեղծագործությունը: Անաստաս Միկոյանը համերգից հետո ջերմորեն շնորհավորեց Սազանդարյանին և Նիյազուն:

Իմ երազանքն էր ստեղծել օպերա Սայաթ-Նովայի մասին և այդ միտքը տարիներ շարունակ ինձ հանգիստ չէր տալիս: Օպերայի վրա աշխատել սկսեցի 1963 թվականի գարնանը՝ Հ. Խանջյանի հեղինակցությամբ: Եվ արդեն նույն տարվա ամռանը առաջին գործողությունը պատրաստ էր: Ես այն ցույց տվի Դ. Շոստակովիչին, որ այդ տարի եկել էր իր հանգիստը անցկացնելու Դիլիջանում: Իսկ այդ տարվա աշնանը տոնվում էր Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակը և ինձ առաջարկվեց հոբելյանական երեկոյին կատարել օպերայի առաջին գործողությունը, դրան կտրականապես դեմ էր Դ. Շոստակովիչը և ինձ նախապես զգուշացրել էր, ասելով.

— Կոտիկ ջան, թանկագինս, դա նույնն է, եթե կարդաս որևէ գրքի առաջին գլուխը, ընդհատես այն, չիմանալով ինչ է լինելու վերջը:

Ես չլսեցի այդ նշանավոր մարդու իմաստուն խորհուրդը, համաձայնվեցի 1-ին գործողության կատարմանը և... կատարումը հաջողություն չունեցավ... Հիշում եմ, որ մեկ գործողության կատարմանը դեմ էր նաև Սազանդարյանը: Երկու տարի ես ձեռք չտվի օպերային և միայն 1965 թվականին շարունակեցի աշխատանքը, բայց... նորից սկսեցի 1-ին գործողությունից:

Այո, ես իրոք ոգևորությամբ էի աշխատում և օպերան ավարտեցի 1968 թվականի ուշ աշնանը: Այդ շատ աշխատատար երկի ստեղծման գործում, Աննայի կերպարի որոնման հարցում ինձ օգնեց և Տաթևիկ Սազանդարյանը՝ բեմի վարպետի և փորձառու երգչուհու իր խորհուրդներով:

Օպերայի պրեմիերան տեղի ունեցավ 1969 թվականի մայիսի 11-ին. Աննայի դերերգը կատարեց Տաթևիկ Սազանդարյանը՝ ստեղծելով իշխանուհու նրբին կերպար, որը քնքշորեն սիրում է պոետ-երգչին: Ժողովրդական խոսք է՝ «Ամեն ինչ ենթարկվում է բնությանը և նրանից դուրս ոչինչ չկա»: Ստեղծելով Աննայի կերպարը, Սազանդարյանն ապացուցեց հակառակը:

Ինձ, որպես կոմպոզիտորի, մեծ բավականություն է պատճառում գրել այս բոլորի մասին, քանի որ իմ ստեղծագործական կյանքում ես շփվել եմ մեր ժամանակի մեծագույն երգչուհու հետ:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

1981

## ՄՈՏ ՈՒ ՀԱՐԱԶԱՏ

Մեր նշանավոր երգչուհի Տաթևիկ Տիգրանի Սազանդարյանի ստեղծագործությունը ինձ շատ մոտ է ու հարազատ:

Նրա ձայնի յուրատեսակ անկրկնելի տեմբրը, դերասանական փայլուն տվյալները, մշտապես պարապելու, ձայնը մշակելու հազվադեպ կարողությունը, դեպի նպատակ ընթանալու հաստատակամությունը՝ ահա արտիստուհու հաջողության գլխավոր նախապայմանները:

Օպերային բեմում ստեղծած նրա հայ կնոջ կերպարների պատկերասրահը և հատկապես Ալմաստն ու Փառանձեմը, որոնք արտիստուհին ստեղծել է դեռ երիտասարդ տարիներին, առանձնանում են տաղանդի լիարժեք հասունությամբ, կերպարի մեկնության մեծ հումանիզմով և ձայնային ու դերասանական բարձր որակով: Անկասկած նման կերպարների շարքին է պատկանում և Թամարը:

Վերը հիշատակված կերպարները, համաշխարհային դասական գործերի հերոսուհիները՝ առանձնապես իմ մտապատկերում վառ մնացած Կարմենը, իսկ ավելի ուշ նաև Իոկաստան երգչուհու ստեղծագործության փայլուն գագաթներն են:

Հայկական օպերային գլուխգործոցներ ստեղծելու մեջ Տաթևիկ Սազանդարյանի ներդրումը իրոք անգնահատելի է:

Ամենուր է Տաթևիկ Սազանդարյանը յուրակերպ ու անկրկնելի:

Բախտավորություն է հայ օպերային արվեստի պատմության համար, որ երգչուհու լավագույն ստեղծագործությունների շատ մասը ձայնասկավառակի վրա են վերցված և մեր երգիչների երիտասարդ սերունդը հնարավորություն ունի ծանոթանալու և ուսումնասիրելու Տ. Սազանդարյանի արվեստը: Իհարկե, նոր սերունդը կարող է ոչ միայն ընդունել և աշխատել երգչուհու արվեստի սկզբունքներով, այլև, շատ հնարավոր է, որ քննադատաբար մոտենա նրա ստեղծագործությանը: Բայց այն փաստը, որ նա ստեղծել է մնայուն գեղարվեստական, մեծարժեք գործեր՝ այս բանի կողքով հենց այնպես անցնել հնարավոր չէ: Անմոռաց է երգչուհու ներդրումը Հ. Ստեփանյանի և Ան. Տեր-Ղևոնդյանի ռոմանսների մեկնության գործում, Աշ. Սաթյանի և Վ. Կոտոյանի երգերի, Ալ. Հարությունյանի տարբեր ժանրերի վոկալ ստեղծագործությունների և բազմաթիվ այլ երկերի ժողովրդականացման խնդրում:

Նշանավոր երգչուհու ստեղծագործության պայծառ էջերն են կազմում հանճարեղ Սայաթ-Նովայի երգերի կատարումները:

Այժմ Սազանդարյանը մեր կոնսերվատորիայի պրոֆեսորն է և ամբողջապես նվիրվել է մանկավարժական աշխատանքին:

Վաղուց է, որ նա օպերային բեմահարթակում չի երգում, չի երգում նաև սիմֆոնիկ և կամերային համերգներում: Բայց Տաթևիկ Սազանդարյանի ձայնը, նրա անկրկնելի տեմբրը և մաներան հիմա էլ հնչում են մեր խստապահանջ ունկնդիրների հիշողության մեջ, վերադարձնում են մեզ «Ալմաստ», «Արշակ» և «Դավիթ Բեկ» օպերաների փառապանծ օրերը:

ԷԴԳԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
1980

## ՄԻՇՏ ՏՈՆԱԿԱՆ

Իսկական տաղանդն անկրկնելի է: Պետք չէ փնտրել նրա կրկնությունը, պետք չէ ձգտել այն ընդօրինակելու, որովհետև նա եզակի է, իսկ եթե գտնվի մի ուրիշը՝ մեծությամբ նրան հավասարը, ապա նա նույնպես կլինի եզակի և անկրկնելի: Հենց այդպես անկրկնելի է Տաթևիկ Սազանդարյանի արվեստը, որի անունն ինձ համար թանկ է և որի հետ ես կապված եմ ստեղծագործական և անձնական շատ հարցերով:

Մեզ կապող թելերը գնում են շատ ուղղություններով և առաջին հերթին դա համատեղ կատարողական կյանքն է, որ ավելի քան քառորդ դարի ընթացքում հագեցած է մշտական, գրեթե ամենօրյա լարված ստեղծագործական աշխատանքով, որի հետևանքը հանդիսացան համերգային հարուստ կյանքը, Սովետական Միության քաղաքների համատեղ համերգայցերը, առաջին հյուրախաղերը արտասահմանում, մագնիտոֆոնային ձայնագրությունների ու ձայնասկավառակների հսկայական քանակը և շատ ու շատ այլ բաներ:

Տաթեիկ Տիգրանովնայի անվան հետ կապված է հորս շատ ստեղծագործությունների կատարումը, որն ինձ համար նույնպես չափազանց թանկ է: Առանձնապես երախտապարտ եմ նրան սևամորթ տղայի՝ Բերբերոյի անմոռանալի կերպարի համար՝ հորս գրած «Արևի ցոլքերում» օպերայում, և նրա մի շարք ռոմանսների և

երգերի հիասքանչ կատարման համար, որ արժանացան հեղինակի ջերմ խրախուսանքին: Ի՞նչն է գրավում և ո՞րն է ամենաբնորոշը Տաթևիկ Տիգրանովնայի ստեղծագործական կերպարում: Անտարակույս հմայիչ երգչուհու և տաղանդավոր արտիստուհու եզակի զուգակցումը: Դա այնքան ցայտուն էր, որ դժվար է ասել, թե ինչում էր նա առավել ուժեղ: Նման զուգակցումը բեմարվեստին նվիրված յուրաքանչյուր երգչուհու իդեալն է:

Սակայն վաղուց ապացուցված է, որ միայն տաղանդը քիչ է, որ արվեստում բարձունքների հասնելու համար անհրաժեշտ են այլ բաղկացուցիչներ ևս, որոնցով բնությունը Տաթևիկ Տիգրանովնային նույնպես օժտել է: Տաղանդ՝ գումարած մեծ աշխատասիրություն, տաղանդ՝ գումարած նպատակասլացություն, տաղանդ՝ գումարած համառություն, ուժգնություն, պատասխանատվության զգացում, մեծ կամք, հարցասիրություն, իմաստասիրություն: Ինչպիսի հետաքրքրությամբ էր Տաթևիկ Տիգրանովնան վերաբերվում յուրաքանչյուր նոր երևույթի և ինչպես արագ, բառացիորեն թռիչքի պահին, նա «որսում էր» այդ նորը: Նա միշտ ուրախ էր հետաքրքիր մարդկանց հետ շփում ունենալիս: Հաճախ դրանք վերածվում էին մեծ բարեկամության, որ պահպանվել են մինչև հիմա:

Այս ամենը բնականաբար Տաթևիկ Տիգրանովնային բերեցին համընդհանուր ճանաչում, փառքի պսակ: Այժմ հետևելով Տաթևիկ Տիգրանովնայի մեծ հաջողություններին մանկավարժության ասպարեզում, անհնար է չնկատել, որ բոլոր այն հատկությունները, որ նրան օգնեցին իր բեմական աշխատանքում (համերգային և թատերական), նա տեղափոխել է մանկավարժության բնագավառը, որն անշուշտ դարձել է նրա երկրորդ կոչումը:

Ես կարծում եմ, չկա այնպիսի մարդ, որը չխոստովաներ, թե Տաթևիկ Սազանդարյանը հայ արվեստի հպարտությունն է, որ նա հայ թատրոնի պատմությունն է, որ նա մեզ համար դարաշրջան է:

ԵԼԵՆԱ ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ
1981

# ՄԵՐ ՁՐՆԳՈՒՆ ՈՒ ԳՈՒՆԱԳԵՂ ՍԱՁԱՆԴԱՐՅԱՆԸ

Անուններ կան, որոնց հիշելիս՝ մեջդ վերակենդանանում է ամբողջ մի ժամանակահատված, ապրածդ կյանքի ամբողջ մի շրջան: Այդ անուններից է Տաթևիկ Սազանդարյանը, հայ նորաբաց օպերայի գարունը իրենով ազդարարող առաջին սոխակներից մեկը: Ասպարեզ գալով օպերային երգեցողության անզուգական դասական Հայկանուշ Դանիելյանի օրոք ու նրա հովանավոր շնչի տակ, Տաթևիկ Սազանդարյանը կարողացավ արագորեն գրավել իր տեղը՝ իր թանձր ու զարմանալի առողջ ձայնով, իր խորը անհատականությամբ, արտիստականությամբ, իր ձայնին ներդաշնակ, ձայնը առավել հնչեցնող արտաքինով: Մի ուրիշ երջանիկ շնորհ էլ ունի Սազանդարյանը, դա դրամատիկ դերասանուհու տաղանդն է, որը մինչև օրս էլ մեր օպերային արվեստում մնացել է անգերազանցելի: Նրա՝ համամարդկային հնչեղության հասցրած Ալմաստը և այնքան կենդանիորեն հայացրած Կարմենը մեր բազմադարյան բեմի շքեղ ու մնայուն կերպարներից են:

Այդ տարիներին ուրիշ շատ աստղեր փայլատակեցին և կփայլատակեն մեր երգի երկնակամարում: Տաթևիկ Սազանդարյանը սոսկ փայլատակում չէ. նա լրջախոհ, մոնումենտալ, իր շունչն ու ոտնահետքերը հայոց հողին թողած արվեստագետ է, իր ազգանվան պես զրնգուն ու գունագեղ, իր անվան պես խոսուն ու հայրենասոճ:

ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ
1982

Տաթևիկ Սազանդարյանը հայ ազգային օպերայի ամենախոշոր դեմքերից է: Սազանդարյանը օպերային թատրոն բերեց դրամատիկ խաղ, գերող ու հմայող արտիստականություն: Վոկալ կատարողական վարպետությանը նա զուգակցեց դերասանական վառ արտա-

հայտչականություն, ներքին ապրումների ռեալիստական վերարտադրում: Սազանդարյանի ստեղծած կերպարները արվեստի ամբողջական երևույթներ են, միաձույլ, ամուր, որոնք խորը հոգեբանական լինելով՝ միաժամանակ պարուրված են ջերմ քնարականությամբ:

Տաթևիկ Սազանդարյանի Ալմաստը, Փառանձեմը, Կարմենը, Թամառը և ուրիշ շատ կերպարներ բեմական գլուխգործոցներ են, որոնք հավերժորեն տեղ են գրավել հայ թատերական մշակույթի պատկերասրահում:

ԱՐՏԱՇԵՍ ԲԱԲԱՅԱՆ
1982

# ՄԱՄՈՒԼԻ ԷՋԵՐԻՑ...

Տաթևիկ Սազանդարյանը Ալ. Սպենդիարյանի անվան թատրոնի ամենաերիտասարդ ու ամենատաղանդավոր արտիստուհիներից մեկն է: Նրա կյանքի ուղու մասին շատ է գրվել: Հայրենի Զանգեզուրի սքանչելի երգերը աղջնակի մեջ մանկուց արթնացրել են ստեղծագործելու սեր: Սեր, որ դրսևորվում է թե՛ այն գործարանի ինքնագործ երգչախմբում, ուր աշխատում էր Տաթևիկը, թե՛ Հայաստանի կուլտուրայի տան թատերական ստուդիայում, ուր նրան բերել էր իր տաղանդը, և թե՛ անդրանիկ բեմական խոշոր աշխատանքում՝ Սպենդիարյանի օպերայում:

Երբ խոսում ես Տաթևիկի մասին, ապա մի տեսակ չես հավատում, որ այդ դեռատի, համեստ աղջիկը կարողացել է թափանցել Ալմաստի այդքան հակասական և, գլխավորը, ոգով իրեն այդքան խորթ կերպարի մեջ: Բայց արտիստուհու բեմում հայտնվելուն պես կասկածներդ չքանում են: Սազանդարյանը խորը և արտահայտիչ կերպով է բացահայտում Թաթուլի նենգ կնոջ հոգեկան բարդ աշխարհը, որն իր անհագ փառամոլությանը զոհ է բերում իր ժողովրդին և իր հերոս ամուսնուն: Որքա՜ն ճշմարտացի է արտահայտված Ալմաստի խռովքի ուժգնացումը, ինչքա՜ն արտահայտիչ է նրա պարը, որ Ալմաստի կերպարի դրամատիկական զարգացման կուլմինացիաներից է: Խնջույքի թեժ պահին, կամենալով խլացնել իր տագնապն ու մահաշունչ թախիծը, Ալմաստն սկսում է պարել, վեհաշուք, ասես օդում ճախրելով, նա սահում է գորգի վրայով, և միայն նրա ձեռքերն են խոսում հոգին ծվատող դժնի պայքարի մասին...

Ա. ՀԱԾՎԵՐԴՅԱՆ

«ԻՍԿՈՒՍՏՎՈ», 11 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 1939

## ԱԼՄԱՍՏ

Ալմաստի դերերգի համար Սազանդարյանը հիանալի վոկալ տվյալներ ունի: Դերասանուհի Սազանդարյանը, ինչպես և հայ օպերային արվեստի հնագույն վարպետ Լևոն Իսեցկին և Հայաստանի օպերային դերասանների երիտասարդ փաղանգի տաղանդավոր ներկայացուցիչ Լիսիցյանը, անկասկած պատվով կմասնակցեն ազգային արվեստի այս վառ տոնախմբությանը, որը հայ ազգային երաժշտության ստեղծագործական նվաճումների վկայակոչումն է:

ՍԵՐԳԵՅ ՄԻԽԱԼԿՈՎ

«ՍՈՎԵՏՍԿՈՅԵ ԻՍԿՈՒՍՏՎՈ», 18 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 1939

Ուժեղ տպավորություն է գործում երիտասարդ արտիստուհի Սազանդարյանը Ալմաստի դերում: Նրա կատարման մեջ երևում է այդ բարդ դերի վրա տարված համառ ու մտածված աշխատանքը:

Հ. ՆԵՐՍԻՍՅԱՆ

«ԿՈՄՈՒՆԻՍՏ» 22 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 1939

Կատարողներից ուզում եմ նշել երիտասարդ դերասանուհի Տ. Սազանդարյանին: Ալմաստի բարդ դերը նա տանում է բացառիկ գեղեցկությամբ և շնորհալիությամբ, չընկնելով կեղծ պաթոսի և թատերայնության մեջ:

ԵԿԱՏԵՐԻՆԱ ԳԵԼՑԵՐ

«ՊՐԱՎԴԱ», 19 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, 1939

Գլխավոր դերակատարների շարքում առաջին տեղը պատկանում է Տ. Տ. Սազանդարյանին (Ալմաստի դերակատարը՝ խաղացողների առաջին կազմում): Երիտասարդ դերասանուհուն հաջողվել է ստեղծել հոգեբանորեն ճշմարտացի և խորը կերպար: Երկրորդ գործողության մեջ նա վեհապանծ է (մինչև աշուղի հայտնվելը), երրորդում՝ խռովքի մեջ, իսկ չորրորդում արդեն՝ ստորացած: Ալմաստի կերպարի զարգացման այս բոլոր աստիճանական փոփոխությունները Տ. Տ. Սազանդարյանը հաղորդում է նրբորեն ու արտահայտիչ, դրսևորելով իր հազվագյուտ դերասանական տաղանդը: Տ. Սազանդարյանի ձայնը չափազանց գեղեցիկ է:

Դ. ՌԱԲԻՆՈՎԻՉ

«ԻՍԿՈՒՍՏՎՈ», 21 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, 1939

Հատկապես ուզում եմ նշել երիտասարդ արտիստուհի Սազանդարյանին, որը փայլուն կերպով կարողացավ կատարել Ալմաստի դժվար պարտիան: Անտարակույս, նա մեծ ապագա ունի:

Բ. ԼԵՈՆՏՅԵՎ

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ», 22 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, 1939

Երիտասարդ երգչուհի Սազանդարյանն օժտված է գեղեցիկ ձայնով և վառ դրամատիկ տաղանդով: Նրա ստեղծած նենգ, իշխանություն սիրող Ալմաստը թողնում է ուժեղ տպավորություն:

Պ. ՆՈՐՑՈՎ

«ՎԵՉԵՐՆՅԱՅԱ ՄՈՍԿՎԱ», 29 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, 1939

Նրբին երանգավորմամբ էր երգում Ալմաստի դերը Տ. Սազանդարյանը. նա ունի գերազանց դերասանական արտահայտչականություն: Իր վառ կատարմամբ նա հսկայական տպավորություն է թողնում:

Բ. ՄՈՐԴՎԻՆՈՎ

«ՊՐԱՎԴԱ», 30 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, 1939

Ալմաստի դերերգը Սազանդարյանը հրաշալի է երգում, նա ստիպում է իրեն լսել ուշադիր ու լարված: Նրա Ալմաստը հմայիչ է, շարժումները պլաստիկ են ու թեթև, ձայնը գեղեցիկ է, անբիծ մաքրություն և հնչեղություն ունի:

Ա. ՄԵԼԻՔ-ՓԱՇԱԵՎ

«ՍՈՎԵՏՍԿՈՅԵ ԻՍԿՈՒՍՏՎՈ», 7 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ, 1939

Սազանդարյանի, այդ տաղանդավոր արտիստուհու խաղը անսպասելիորեն հանդիսականին տալիս է Ալմաստի ամբողջական կերպարը՝ ձեռքերի հայկական պարով: Սազանդարյանն ունի անխոս, նրբին, ճկուն շարժուձև: Ալմաստի անհանգիստ, դավադիր, փառատենչ կերպարը ուժգին տպավորություն է թողնում:

Մ. ՇԱՀԻՆՅԱՆ

«ԼԻՏԵՐԱՏՈՒՐՆԱՅԱ ԳԱԶԵՏԱ», 26 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ, 1939

## ՈՒՐԲԱՆ (ՀՈՒԳԵՆՈՏՆԵՐ)

Մանկլավիկ Ուրբանի դերը Տ. Սազանդարյանի լավագույն ու տպավորիչ կատարումներից մեկն է: Այս դինամիկ, բարձր ու վիրտուոզ դերերգի վրա կատարած աշխատանքը դերասանուհուն շատ բան է տվել: Ուրբանի դերը նա տանում է անկաշկանդ ու անբռնազբոս արվեստով:

Ա. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ

«ԿՈՄՈՒՆԻՍՏ» 31 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, 1943

## ՀԱՅ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԵՐԳԸ

Համերգի մի շարք մասնակիցներ մեզ ծանոթ են դեռևս 1939 թ. տասնօրյակից: Մեծ բավականությամբ կարող ենք նշել երիտասարդ հայ դերասանների ստեղծագործական աճը: Սպենդիարյանի անվան օպերային թատրոնի մենակատար Տ. Սազանդարյանին տեսել ենք հինգ տարի առաջ, իր արտիստական ուղու հենց սկզբում: Այդ տարիների ընթացքում նրա տաղանդը բացվել է և Չայկովսկու անվան համերգային դահլիճում մեր առջև կանգնեց ոչ միայն փայլուն տաղանդով օժտված, այլև արդեն հասուն մի դերասանուհի:

Հ. Ստեփանյանի («Հե՛յ, Արագած») և Ռ. Մելիքյանի («Ա՛յ վարդ») երգերը նա հիանալի կատարեց: Նույնքան հիասքանչ էին գողտրիկ մինիատյուրաները՝ «Զառվառ» շարքից («Տիկնիկի հարսանիքը», «Կլոր պարը»):

Երբեմն երաժշտությունը լավագույն թարգմանչի դեր է կատարում: Այս երգերը, որ հավանորեն վոկալ սյուիտի մի մասն են կազմում, ամենևին բառերը թարգմանելու կարիք չեն զգում: Մեղեդայնության գերազանցությունն ու զուլալ նրբագեղությունը, ողջ երաժշտության գրավիչ աշխուժությունը երգի բառերը դարձնում են հասկանալի և ըմբռնելի: Ավելի ճիշտ՝ ըմբռնելի են դարձնում հենց այդ բառերի ներքին երաժշտականությունը: Բայց դա նաև երգչուհու՝ Տաթևիկ Սազանդարյանի վաստակն է, որ այդ երգերը կատարելիս իսկական նրբագեղության է հասնում:

Բ. ԳՈՐՈԴԻՆՍԿԻ

«ՏՐՈՒԴ», 29 ՄԱՅԻՍԻ, 1944

Տաթևիկ Սազանդարյանը՝ Ալմաստի թովիչ կերպարի ստեղծողը, մեզ գերեց իր արտիստական հմայքով: Երիտասարդ երգչուհին մեծ հաջողության է հասել երգեցողական արվեստում: Այդ մասին է վկայում Մեյերբերի «Հուգենոտներ» օպերայում նրա կատարած մանկլավիկի արիան: Այն երգչուհուց պահանջում էր ձայնի մեծ ներդաշնակում և ճկունություն: Բայց Սազանդարյանն առանձնապես սքանչելի է հայկական ազգային երկերի կատարումով: Մեղմ ու նազելիորեն ընդգծելով ժողովրդական կատարողական ոճի բնորոշ կողմերը, նա ամենևին էլ ազգագրության մեջ չի ընկնում: Սազանդարյանը բացահայտում է ազգային լիրիկայի բուն ոգին:

Ե. ԳՐՈՇԵՎԱ

«ԼԻՏԵՐԱՏՈՒՐԱ Ի ԻՍԿՈՒՍՏՎՈ» N 6, 1944

## ՓԱՌԱՆՁԵՄ (ԱՐՇԱԿ ԵՐԿՐՈՐԴ)

Սազանդարյանի Փառանձեմը («Արշակ Երկրորդ») լի է ավյունով, դրա հետ մեկտեղ, հագեցած է պոետական ներշնչանքով: Նա կերտված է նուրբ երանգներով: Իր խաղով ու երգով Տ. Սազանդարյանը բարձր դրամատիզմի է հասնում: Նրա ձայնը հնչում է լիաթոք ու լիարժեք.

Գ. ՏԻԳՐԱՆՈՎ

«ԿՈՄՈՒՆԻՍՏ» 16 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ, 1945

## ԲԵՐԲԵՐՈ («ԱՐԵԳԱԿԻ ՑՈԼՔԵՐՈՒՄ»)

Օպերայի գլխավոր դերակատարներից հարկ է նշել ամենից առաջ Տաթևիկ Սազանդարյանի (Բերբերո) սքանչելի խաղը: Սազանդարյանը ցույց տվեց ոչ միայն իր վոկալ կատարողական բարձր կուլտուրան և հարուստ հնարավորությունները, այլև գեղե-

ցիկ, խորապես իմաստավորված, գրավիչ ու բնական խաղ: Բերբերոյի դերում նա անկաշկանդ է և անկեղծ: Բերբերոյի անսահման հրճվանքը և խնդությունն իր նոր հայրենիքում արտիստուհու կողմից դրսևորվում է համոզիչ ուժով, բեմական կոնկրետ բնութագրմամբ:

ԱԼ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ», 1 ՀՈՒԼԻՍԻ, 1949

## ՊՈՒՇԿԻՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԿԱՄԵՐԱՅԻՆ ՀԱՄԵՐԳ

Հայֆիլհարմոնիայի դահլիճում տեղի ունեցավ Հայկական ՍՍՀ ժողովրդական արտիստուհի Տ. Սազանդարյանի համերգը, նվիրված Ա. Պուշկինի ստեղծագործությունների հիման վրա գրված երաժշտական երկերին:

Տ. Սազանդարյանը գեղեցիկ տեմբրի և մեծ դիապազոնի ձայն ունի: Օպերային բեմում իր արդյունավետ գործունեությանը տաղանդավոր դերասանուհին հմտորեն զուգակցում է կամերային համերգասրահներում ունեցած իր ելույթները:

Համերգային ծրագիրը գեղարվեստական նկատելի հետաքրքրություն էր ներկայացնում: Դրա մեջ էին Պուշկինի ժամանակակիցների՝ կոմպոզիտորներ Տիտովի, Վիելգորսկու, Գլինկայի գործերը, Դարգոմիժսկու, Ռիմսկի-Կորսակովի, Գլազունովի, Ռախմանինովի և սովետական կոմպոզիտորներ Ծապորինի, Շիշկովի և այլոց ստեղծագործությունները:

Երգչուհին մեծ ճաշակով էր ընտրել նրանց գործերի լավագույն նմուշները: Այդ համերգի ծրագրում նա մտցրել էր Պուշկինի հանրահայտ բանաստեղծությունների տեքստերով գրված ռոմանսները, ինչպես, ասենք, «Բուքը մեգով երկինք պատեց», «Երազնե՛ր, երազներ, ուր է ձեր թովչանքը» և կտորներ՝ «Գնչուներ» ու «Պոլտավա» օպերաներից:

Տաթևիկ Սազանդարյանը երգում էր արտահայտիչ ու մտասույզ: Մեծ զգացմունք կար Գլազունովի «Արևելյան ռոմանսի»

կատարման մեջ: Ռախմանինովի հայտնի «Մի երգիր ինձ մոտ, գեղուհիս» ռոմանսում արտիստուհին ստեղծել էր հերոսի պոետական, երազուն մի կերպար: Վառ դրամատիկական հույզով հնչեց Շապորինի «Թախանձանք» ռոմանսը, կատակային և անբռնազբոս էր Տիտովի «Թռչնակը»:

Հատկապես մեծ հուզականությամբ երգեց Սազանդարյանը Ռուբինշտեյնի «Գիշերը»: Ոգևորությամբ ու դրամատիկ լարվածությամբ հնչեցին Վերստովսկու «Ծեր ու դաժան, դու ամուսին» և Վիելգորսկու «Ով է լուսնի ու աստղերի տակ» ռոմանսները:

Արտիստուհուն այնքան էլ չհաջողվեցին Ռիմսկի-Կորսակովի «Արթնացում», Դարգոմիժսկու «Պատանին ու աղջնակը» ռոմանսները: Դրանց կատարման մեջ ցանկալի կլիներ ավելի շատ թեթևություն, պարզության և նրբագեղություն զգալ:

Համերգի հաջողությանը մեծ չափով նպաստեց իր նուրբ գեղարվեստական նվագակցությամբ Ն. Սաղյանը: Համատեղ ստեղծագործական աշխատանքում Տ. Սազանդարյանը և Ն. Սաղյանը հասել են գեղարվեստական միաձույլ անսամբլայնության:

Նման թեմատիկ կամերային համերգներ պետք է ավելի հաճախ կազմակերպվեն:

Ե. ԳԻԼԻՆԱ

«ԿՈՄՈՒՆԻՍՏ», 14 ՀՈՒՆԻՍԻ, 1949

## ՆԱԶԵԼԻ («ՀԵՐՈՍՈՒՀԻՆ»)

Նազելիի բեմական կերպարը և վոկալ պարտիան իր գեղարվեստական լիարժեք ու ամբողջական մարմնավորումն է ստացել Տ. Սազանդարյանի վարպետ խաղի և նրբագեղ երգեցողության մեջ: Սազանդարյանը խոր կերպով թափանցելով իր դերի էության մեջ, բեմական արվեստի և երգեցողության գեղարվեստական բարձր արտահայտչականությամբ պատկերում է աշխատանքի եռանդով լի Նազելիի բեմական ու անբռնազբոսիկ կերպարը իր կատարողական նրբագեղ արվեստի ամբողջ հմայքով ու գրավչությամբ:

Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ», 1 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ, 1950

Նազելիի հիասքանչ ու հավաստի կերպար է ստեղծում Տ. Սազանդարյանը՝ խորն ու անկեղծ ապրումի տեր, իր մարմնավորած կերպարի հանդեպ ունկնդիրների մեջ սեր առաջացնող այդ դերասանուհին:

Ա. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ

«ԿՈՄՈՒՆԻՍՏ», 7 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ, 1950

## ԹԱՄԱՐ («ԴԱՎԻԹ ԲԵԿ»)

Հմայիչ տպավորություն է թողնում Տ. Սազանդարյանը Դավիթ Բեկի նշանածի՝ Վախթանգ թագավորի եղբոր դստեր՝ Թամարի դերում: Նրա հիանալի ձայնը, ներթափանց կատարումը, մեծ և բազմակողմանի բեմական տաղանդը, որով նա կարողացել է կարճ ժամանակամիջոցում ստեղծել ամենատարբեր կերպարների մի ամբողջ շարք, խոր տպավորություն են գործում դիտողի վրա: Տաղանդավոր արտիստուհին մեծ ճաշակով և խորությամբ բացահայտում է Թամարի կերպարը:

Ա. ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ», 10 ՀՈՒՆՎԱՐԻ, 1951

## ԴԵՐԱՍԱՆԸ ՕՊԵՐԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՄԵՋ

Տ. Սազանդարյանի ստեղծած կերպարները պերճախոս վկայում են, որ երբ դերակատարը կերպարին հաղորդում է խոր մտքեր ու զգացմունքներ, այն գերում է հանդիսասրահը, համոզում նրան, հուզում: Փառանձեմի («Արշակ Երկրորդ»), Ամներիսի («Աիդա»),

Ալմաստի (Ալմաստ») և այլ կերպարների մարդկային բազմազան ապրումները արտիստուհին հիանալիորեն բացահայտում է թե՛ վոկալ, թե՛ բեմական միջոցներով, ստեղծում իսկական երաժշտական-բեմական հարուստ կերպար, որը ներդաշնակորեն զուգակցում է երգեցողությունն ու գործողությունը: Կերպարի մտահղացման մեջ խորամուխ լինելու կարողությամբ միայն պետք է բացատրել դերասանուհու հաջողությունները: Ազատասեր և չարաճճի Կարմենի կողքին Տ. Սազանդարյանը կերտում է Փառանձեմի զուսպ, խոհուն, բայց լիրիկական պոռթկումներ ապրող կերպարը: Սազանդարյանի Ալմաստն ու Ամներիսը տոգորված են իշխանասիրությամբ, դերասանուհին նրբորեն է բացահայտում իր հերոսուհիների բնավորությունները, միշտ ստեղծելով գունեղ, ճշմարտացի կերպարներ: Ալմաստի սերը դեպի Թաթուլը Սազանդարյանը հաղորդում է լիրիկոդրամատիկական երանգներով, բայց միաժամանակ նա կարողանում է համոզիչ կերպով բացահայտել Ալմաստի իշխանասիրությունը, ընչաքաղցությունը, որը և հետագայում նրան պիտի հղի դեպի դավաճանություն: Հոգեկան ինչպիսի բարդ անցումներ է ապրում Ամներիս-Սազանդարյանը. կիրք, ամեն ինչ կլանող կիրք, խանդ, անպատասխան սիրո պատճառած թախիծ, վրեժի ծարավ, Ռադամեսի մահվան ողբերգական վերապրում: Հերոսուհու հոգեկան այս կարգի ընդվզումները դերասանուհին այնքան համոզիչ, այնքան ճշմարտապատում է վերարտադրում, որ հանդիսատեսն ամբողջապես մոռանում է դերակատար Սազանդարյանին և միայն տեսնում է նրա ստեղծած Ամներիսը: Տ. Սազանդարյանը «երգող դերասանուհի է», այն, ինչի կոչ էր անում մեծ Ստանիսլավսկին:

Մ. ՕՀԱՆՅԱՆ, Ս. ՌԻԶԱՅԵՎ

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐՎԵՍՏ» N 11, 1953

## Տ. ՍԱԶԱՆԴԱՐՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՐԵԿՈՆ

Տ. Սազանդարյանը պատկանում է այն երգչուհիների թվին, որ դաստիարակվել են վոկալ արվեստի լավագույն ավանդույթներով, մշտապես հոգ են տանում իրենց վոկալ և բեմական վարպետության կատարելագործման մասին: Նա իր մեջ մեկտեղում է տաղանդն ու

մեծ աշխատասիրությունը, ստեղծագործական առաջադիմության տենչը:

Արտիստուհու՝ իր ուժով ու դիապազոնով մեծ, տեմբրով գեղեցիկ ձայնը հնչում է ազատ, ինտոնացիոն առումով հստակ ու հավասարապես լիահունչ է բոլոր ռեգիստրներում:

Իր ստեղծագործական երեկոն Տ. Սազանդարյանն սկսեց կամերային բաժնով, որի ծրագիրը կազմված էր ռուս, աբևմտաեվրոպական դասական երաժշտության և սովետական կոմպոզիտորների ստեղծագործություններից:

Նա ջերմորեն ու ներշնչանքով կատարեց Ռախմանինովի «Խորհրդավոր լռության մեջ գիշերային», Բալակիրևի «Ես սիրում եմ նրան», Ռուբինշտեյնի «Գիշեր», Վարլամովի «Օ՛, մի համբուրիր ինձ» ռոմանսները և Վերստովսկու «Գնչուական երգը», թարմ ու հետաքրքրական հնչեց Կաբալասկու գունագեղ «Գեղեցկուհու սերենադը», որ գրված է «Դոն Կիխոտ» ռադիոբեմադրության համար:

Արտիստուհին նրբորեն է հաղորդում ամենատարբեր բնույթի ստեղծագործությունների ոճական առանձնահատկությունները: Այդ բանը դրսևորվեց Բիզեի քնքուշ «Հովվերգություն», Սեն-Սանսի «Սամսոն և Դալիլա» օպերայից Դալիլայի հուզական, կրակոտ արիայի, սովետական կոմպոզիտոր Կրյուկովի «Խածկտիկ» թովիչ երգի, Կոմիտասի խորատես ժողովրդային «Ալագյազ» երգի, Ռ. Մելիքյանի դրամատիկորեն հագեցած «Դու անհոգ նայեցիր ինձ վրա», նույն կոմպոզիտորի «Այ վառման վարդ» ռոմանսների, Մոցարտի «Ֆիգարոյի ամուսնությունը» օպերայից Քերուբինոյի դասական արիայի, «Վալսում» երկի վիրտուոզ կատարման մեջ:

Կամերային բարդ ծրագրի կատարումը վկայում է Տ. Սազանդարյանի ստեղծագործական մեծ աճը վոկալ տեխնիկայի առումով: Այդ ծրագրի վրա տարած աշխատանքը նրա համար հանդիսացավ կատարողական գործունեության մի նոր շրջափուլ, ցույց տվեց լայն ու բազմազան երգացանկին կատարելապես տիրապետելու երգչուհու մեծ հնարավորությունները:

Տ. Սազանդարյանը հայկական ժողովրդական երգերի և հայ կոմպոզիտորների ռոմանսների լավագույն կատարողներից մեկն է:

Տ. Սազանդարյանի ստեղծագործական երեկոյի երկրորդ մասը նվիրված էր օպերային պարտիաների կատարմանը:

Իր բովանդակ արտիստական գործունեության ընթացքում Տ. Սազանդարյանը ստեղծել է բնույթով միանգամայն տարբեր, բայց միշտ վառ, ռեալիստական մի ամբողջ շարք օպերային կերպարներ:

Նրա երկացանկում կա տասնչորս օպերային դերերգ:

Ստեղծագործական երեկոյին ցույց տրվեցին Վերդիի «Աիդա» օպերայի 3-րդ պատկերը և Բիզեի «Կարմեն» օպերայի վերջին գործողությունը:

Ամերիսի արիան օպերային գրականության մեջ դժվարագույններից է: Այն հագեցած է խորը դրամատիզմով և նախատեսված է մեծ դիապազոն ունեցող լիարժեք օպերային ձայնի համար: Տ. Սազանդարյանի վոկալ հնարավորությունները լիովին համապատասխանում են այդ պահանջներին: Արտիստուհին ճշմարտացիորեն է մեկնաբանում Փարավոնի հպարտ դստեր կերպարը, որին ծվատում է Ռադամեսի հանդեպ անպատասխան սիրո զգացմունքը, և որն իր մրցակցուհուց նենգորեն դուրս է կորզում ճակատագրական գաղտնիքը:

Վառ տպավորություն գործեց Կարմենի դերերգի կատարումը: Կարմենի վոկալ-սիմֆոնիկ կերպարը հյուսելիս, արտիստուհին հասնում է ձևի մեծ արտահայտչականության և ամբողջականության, վարպետորեն է հաղորդում կերպարի ներքին խորունկ բովանդակությանը:

Տ. Սազանդարյանի ստեղծագործական երեկոն ունեցավ մեծ թվով ունկնդիրներ ու անցավ մեծ, արժանի հաջողությամբ:

Ա. ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ

«ԿՈՄՈՒՆԻՍՏ» 21 հուլիսի, 1953

Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և. բալետի թատրոնի մեներգչուհի, պետական մրցանակի դափնեկիր Տաթևիկ Սազանդարյանը վերջերս հյուրախաղերի մեկնեց Օդեսա:

Օդեսայի օպերայի և բալետի թատրոնում Տ. Սազանդարյանը երկու անգամ մեծ հաջողությամբ հանդես եկավ Կարմենի դերում, համանուն օաերայում:

Այնուհետև Տ. Սազանդարյանը համերգներ տվեց Քիշինևում և

ապա Մոսկվայում: Ինչպես Քիշինևի Ֆիլհարմոնիայում, այնպես էլ Մոսկվայի Ֆիլհարմոնիայի փոքր դահլիճում Տ. Սազանդարյանը մեծ հաջողությամբ տվեց մեկական համերգ:

Տ. Սազանդարյանը մեծ վարպետությամբ հանդես եկավ Չայկովսկու, Գլազունովի, Կոմիտասի, Ռ. Մելիքյանի, Դոնիցետիի, Լիստի և այլոց ստեղծագործություններով:

Բացի դրանից նա հաջողությամբ կատարեց Սեն-Սանսի «Սամսոն և Դալիլա» օպերայից հատվածներ:

Հյուրախաղերն անցան մեծ հաջողությամբ:

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԱՐՎԵՍՏ», N 6, 1955

❁ ❁ ❁

Այս խոշոր, գաղափարական բովանդակությամբ հագեցած, միաժամանակ նաև կանացի հմայքով ջերմացած դերը գերազանց է կատարում Հայկական ՍՍՀ ժողովրդական դերասանուհի Տ. Սազանդարյանը:

Թագուհի Վոլիմպիայի ընդհանուր դրամատիկ կերպարին, մի կնոջ, որին հավատացրել են, թե նա զրկվել է իր թագակիր ամուսնու սիրուց, Հայկական ՍՍՀ ժողովրդական դերասանուհի Գ. Գասպարյանի կատարմամբ, օրգանապես ու հմտորեն տրվել էր ինչ-որ առինքնող ներքին պայծառություն: Այն հանգամանքը, որ երկու հերոսուհիների մեջ բացակայում է սուր հակադրությունը, ամենևին էլ չի նշանակում, թե նրանք միատիպ բնավորություններ են:

Դրա պատճառն այն է, որ կոմպոզիտորը նրանց տվել է վառ ու նրբին երաժշտական բնութագրում, իսկ երկու դերակատարներն էլ, իրենց հերթին, այն դրսևորում են վոկալ ու բեմական խոշոր տաղանդով:

ՎԼ. ԷՆԿԵ

«ՎԵՉԵՐՆՅԱՅԱ ՄՈՍԿՎԱ»», 18 ՀՈՒՆԻՍԻ, 1956

Տաթևիկ Սազանդարյան:

1949թ.: Ամուսնու՝ Հակոբ Խանջյանի և զավակների՝ Դավթի և Տիգրանի հետ:

Առաջին քայլերը մեծ բեմում: →

Հակոբ Խանջյան,
Տաթևիկ Սազանդարյան:

1963թ. Փառանձեմ:

1963թ. Ալմաստ

Բուլղարիա: Կարմեն:

Իոկաստա: →

«Խաչատուր Աբովյան»
Տ. Սազանդարյան
Ս. Դանիելյան

Փառանձեմ

Պատկեր ներկայացումից:

Կարմեն:

1955թ., Ավ. Իսահակյանի տանը: Վ. Վաղարշյան, Ալ. Հարությունյան, Հ. Ջարդարյան, Վ. Համբարձումյան, Ս. Իսահակյան, Ավ. Իսահակյան, Տ. Սազանդարյան, Մ. Սարյան:

Է. Միրզոյան, Տ. Սազանդարյան, Ղ. Սարյան, Գ. Արմենյան:

1956թ.: Վ. Աճեմյան, Տ. Սազանդարյան, Ռ. Սիմոնով, Գ. Մելքումյան, Կ. Հարությունով, Վ. Վարդանյան, Կ. Կարապետյան, Մ. Թավրիզյան, Կ. Մինասյան, Գ. Խանջյան:



1962թ. Բրյուսել: Տ. Սազանդարյանն ու Ա. Բաբաջանյանը Քալանթարյանների ընտանիքում:

1964թ., Հանդիպում Վ. Սարոյանի հետ:

Թբիլիսի: Ներկայացումներից հետո:

Թբիլիսի: «Դավիթ-Բեկ» օպերայի ներկայացումից հետո: Երաժշտագետների և կոմպազիտորներ Թաքթաքիշվիլու և Հարությունյանի հետ:

1962թ., «Ալմաստ» օպերայի ներկայացումից հետո:

«Արշակ II»: Փառանձեմ՝ Տ. Սազանդարյան, Արշակ՝ Մ. Երկաթ:

Տ. Սազանդարյան, Դ. Պողոսյան

## ՏԱԹԵՎԻԿ ՍԱԶԱՆԴԱՐՅԱՆ

Հայաստանում կա մի վայր, ուր ապառաժե ժայռերը, ասես հսկաների ձեռքով արարված վիթխարի սյունաշարեր, խոյանում են դեպի երկինք, խստադեմ ու խիզախ մարդկանց մի վայր: Այնտեղ շատ են նաև ծաղիկները, շատ են ինքնատիպ, էպիկականորեն վեհաշունչ երգերը: Իսկ հողը քիչ է, և նրա ամեն կտորը բնությունից նվաճվել է սերունդների տքնությամբ:

Այդ վայրը Զանգեզուրն է:

Երբ Զանգեզուրի բնակիչը հեռանում էր հայրենի վայրերից, նա իր մտքում տանում էր ժայռերի վեհատեսիլ ուրվագծերի հիշողությունը, սրտում՝ նվիրական երգերը և վերցնում էր իր հետ մի բուռ «հայրենի հող...»:

Քսանական թվականների սկզբներին, երբ Տաթևիկը տակավին երեխա էր, Սազանդարյանների ընտանիքը տեղափոխվեց Բաքու: Զանգեզուրի լեռները դեռ չէին տպավորվել նրա գիտակցության մեջ, նա գրեթե չգիտեր հայրենի երգերը: Բայց այստեղ նա հայտնվեց հայրենակիցների շրջապատում: Նրանք հաճախ էին հավաքվում, երգում զանգեզուրյան երգեր:

Ծուտով նկատեցին Տաթևիկի ձայնը, և նրան վերցրին աշակերտական երգչախումբ, տասը տարեկանից նա դարձավ երգչախմբի մենակատարուհին, սկսեց երգել հայկական և ադրբեջանական երգեր, բայց երգում էր յուրովի՝ զանգեզուրցու նման:

Երբ 1931-ին Տաթևիկը մոր հետ միասին տեղափոխվեց Մոսկվա և քաղաքի գործարաններից մեկում դարձավ աշակերտուհի, նա այստեղ գտավ իր երկրորդ ընտանիքը, մարդկանց, որ ամեն րոպե պատրաստ էին օգնելու ընկերոջը: Գործարանի կոմերիտականներն էին դրանք: Նրանք օգնեցին տաղանդավոր աղջկան դառնալ փականագործ, իսկ ապա, իմանալով նրա երգչական օժտվածության մասին, ուղարկեցին երգեցողություն ուսանելու:

— Ես, իհարկե, երբեք էլ չէի դադարի երգել, — ինչ-որ առիթով ասաց Սազանդարյանը, երբ արդեն ժողովրդական արտիստուհի էր, — բայց այն ամենի համար, որ ես պրոֆեսիոնալ երգչուհի եմ, ամենից ավելի պարտական եմ մեր գործարանի կոմերիտականներին:

1933-ին կոմերիտմիությունը գործուղում է նրան Սովետական Հայաստանի Կուլտուրայի տան երաժշտական ստուդիա: Տաթևիկին քննող հանձնաժողովում էին Ա. Խաչատրյանը, Ռ. Սիմոնովը,

մանկավարժ-վոկալիստ Ս. Բարխուդարյանը: Տաթևիկը երգում էր իր զանգեզուրյան երգերը թանձր, զրնգուն ձայնով: Ձայնը դուր եկավ: Բայց չէ՞ որ ստուդիան պատրաստում է օպերային երգիչների, այլ ոչ թե ժողովրդական երգերի կատարողների: Եվ քննողներից մեկը հարցրեց, թե արդյոք նա չգիտի որևէ «օպերային երգ»:

Տաթևիկը կարող էր երգել Խաբաներան «Կարմեն» օպերայից, բայց գիտեր միայն կրկներգի խոսքերը. Ա. Խաչատրյանը մոտեցավ դաշնամուրին, հարմարեցրեց նվագակցությունը, և նա լսողությամբ երգեց հրաշալի արիան՝ տեքստը փոխարինելով անվերջ «տրա-լա-լա» - ներով: Եվ հանկարծ ոչ պրոֆեսիոնալ երգեցողությունը՝ կոկորդային երանգով, իր տեղը զիջեց ազատ, գեղեցիկ հնչմանը:

Աղջկան ընդունեցին երաժշտական ստուդիա, Ս. Բարխուդարյանի դասարանը և միաժամանակ դրամատիկական ստուդիա, ուր նա սկսեց պարապել Ռուբեն Սիմոնովի մոտ:

1937-ին, տքնաջան ուսումնառության չորս տարիներից հետո, Տ. Սազանդարյանը տեղափոխվում է Երևան և իբրև Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի ու բալետի թատրոնի մենակատարուհի երգում է Օլգայի («Եվգենի Օնեգին»), Զիբելի («Ֆաուստ»), Գայանեի («Ալմաստ») դերերգերը:

Հայ արվեստի մոսկովյան տասնօրյակի նախապատրաստության ժամանակ թատրոնը կանգնած էր մի մեծ դժվարության առաջ: Առաջատար երգչուհիների թվում չկար մեկը, որ կարողանար ըստ արժանվույն կատարել այն հերոսուհու բարդ դերը, որի անունով կոչվում է Սպենդիարյանի «Ալմաստ» օպերան: Որոշեցին լսել Տաթևիկ Սազանդարյանին: Քննությունը հաջող անցավ: Սազանդարյանը ստացավ մի դեր, որի մասին կարող էր միայն երազել, իսկ թատրոնը՝ հրաշալի Ալմաստ: Տասնօրյակի ներկայացումներին երիտասարդ երգչուհին արժանացավ լայն հասարակայնության և երաժշտական արվեստի գիտակների միահամուռ հավանությանը:

Հայաստանում բոլորը գիտեն Սազանդարյանի ձայնը՝ մաքուր, ուժեղ, օժտված յուրօրինակ, միայն նրան հատուկ գույներով, տեմբրի փափկությամբ կամ զրնգուն, երբեմն գրեթե մետաղյա երանգներով:

Սազանդարյանը երգում է ազատ, անկաշկանդ, հմայիչ թեթևությամբ. ստանում ես այնպիսի տպավորություն, թե նրա համար գոյություն չունեն վոկալ դժվարություններ:

Տիգրանյանի «Դավիթ Բեկ» օպերայում կա մի ոչ մեծ, բայց

պատասխանատու դեր՝ փխրուն, քնքուշ վրաց իշխանադուստր Թամարի դերը: Նրա բեմական կերպարանքը, թվում է, խոսում է այն մասին, որ այդ դերերգը նախատեսված է ավելի շուտ լիրիկական սոպրանոյի, քան մեցցո սոպրանոյի համար, ինչպես գրել է կոմպոզիտորը: Այդ դերում ուշիմ արտիստուհի Սազանդարյանը կարծես փոխել է իր ձայնի բնույթը, դարձնելով այն ավելի սոպրանոյական, փափուկ, քնարական: Թամարի քնքուշ կերպարը ստացվել է ամբողջական, ճշմարտացի:

Շատ անգամ եմ ես լսել Սազանդարյանին թե՛ օպերայում և թե՛ համերգներում, բայց չեմ հիշում մի դեպք, երբ նա տարված լիներ զուտ տեխնիկական վոկալ էֆեկտներով: Նրա յուրաքանչյուր նոտան, շեշտը իմաստավորված է, ենթարկված գեղարվեստական կերպարի ստեղծման խնդրին:

Ալմաստի, իր խաղացած այդ անդրանիկ խոշոր դերում, Սազանդարյանը բաց է արել օպերային երգչուհու իր հարուստ ձիրքը: Այստեղ նա գտել է իրեն, դրա համար էլ հանդիսականները ընդունեցին ու սիրեցին նրան:

Բայց երիտասարդ արտիստուհու ստեղծագործական եռանդը լիովին բավական եղավ, որպեսզի նա Ալմաստից հետո կերտի Կարմենի, Դալիլայի, Ամներիսի, Պաժի, Պոլինայի, Լյուբաշայի, Կոնչակովնայի, Ուլյանա Գրոմովայի, Փառանձեմի, Երգչուհու, Բերբերոյի ոչ պակաս ցայտուն կերպարները:

Ինչպիսի՛ բազմակողմանի օժտվածություն պիտի ունենա արտիստուհին, որպեսզի կարողանա ընդգրկել երաժշտաբեմական կերպարների այդ հարուստ աշխարհը:

Սազանդարյանը բեմում իրեն պահում է ազատ ու անկաշկանդ: Նրա արտիստական նկարագրի կարևոր գծերից մեկն է բնականությունը, կենսական ճշմարտությունը: Հանդիսականին երբեմն թվում է, թե իր առջև հենց ինքը կյանքն է. ահա կանգնած է մի կին և պարզ, շատ մարդկային ձևով պատմում է իր ուրախությունների ու տառապանքների մասին:

Սազանդարյանին առանձնապես հաջողվում են ուժեղ կանանց դրամատիկորեն հագեցած կերպարները՝ Ալմաստը, Ամներիսը, Լյուբաշան: Ալմաստի հոգեկան բարդ ապրումները, նրա բնավորության բոլոր գծերը՝ սիրո ուժը, խանդավառությունը, փառասիրությունը, նենգությունը, ատելու ունակությունը արտիստուհին հաղորդում է զարմանալի ուժով:

Կարմենի կերպարը Սազանդարյանի ամենակատարյալ

անձնավորումներից է և, ըստ իս, շատ բանով տարբերվում է այդ դերերգի ավանդական մեկնաբանությունից:

Կարմենը նրա կատարմամբ անկեղծ, հրապուրվող բնավորություն է: Նա չգիտի և չի էլ ուզում իմանալ, թե ուր կհասցնի սիրո ուղին, որ ինքն ընտրել է: Դրա համար էլ մինչև չորրորդ գործողությունը արտիստուհին իր հերոսուհուն գծում է փափուկ գույներով (հազվադեպ կոնտրաստային ելևէջների առկայությամբ), քնարական պլանով: Եվ միայն ֆինալում հայտնվում են «դիվային» գծեր, որ հակադրվում են նախորդ ողջ վարքագծի հետ, կերպարը դարձնելով ամբողջական ու համոզիչ:

Շատերի պատկերացումներում Տ. Սազանդարյանի անունն ամենից առաջ կապվում է օպերային բեմի հետ: Բայց կամերային երգեցողությունը ևս հետաքրքրում է արտիստուհուն ոչ պակաս, քան օպերան: Հենց միայն Սազանդարյանի կամերային երկացանկի մեջ ընդգրկված հեղինակների թվարկումը կարող է մեզ համոզել դրանում, ավելի քան երեք հարյուր ստեղծագործություններ Լիստից ու Բիզեից, Դոնիցետիից ու Գրիգից, ռուս դասականներ Ռուբինշտեյնից ու Դարգոմիժսկուց, Չայկովսկուց ու Ռախմանինովից, սովետական կոմպոզիտորներ Յու. Շապորինից ու Դ. Կաբալևսկուց, Մ. Կովալից ու Վ. Կրյակովից, հայ կոմպոզիտորներ... ասենք, նրանց մասին առանձին կխոսենք:

Սազանդարյանը կամերային համերգներով հաճախ է հանդես գալիս Հայաստանում և նրա սահմաններից դուրս:

Արտիստական բարձր կուլտուրայի և վարպետության շնորհիվ վառ կերպով են դրսևորվում նաև երգչուհու անհատական գծերը՝ նրա թանձր, գեղեցիկ տեմբրի հյութեղ ձայնը, որ միշտ բխում է սրտից, նրա հուզականությունն ու անկեղծությունը, որ կատարվող ստեղծագործություններին հաղորդում են մի առանձին հնչեղություն, իսկ երբեմն էլ՝ հատուկ մի իմաստ:

Սազանդարյանի կամերային ծրագրերում առատորեն են ներկայացված ռուս և արևմտյան կոմպոզիտորների ստեղծագործությունները, բայց հիմնական տեղը հատկացված է հայկական երաժշտությանը: Եվ այստեղ նրա երկացանկն այնքան լայն է, որ դա կբավականացներ տարբեր ամպլուայի մի քանի երգչուհիների: Այստեղ մենք հանդիպում ենք Կոմիտասի զարմանալիորեն ներդաշնակ ու հոգեզմայլ երգերին, Ռ. Մելիքյանի, Ալ. Սպենդիարյանի ռոմանսներին, Ա. Հարությունյանի, Ղ. Սարյանի, Է. Միրզոյանի, Ա.

Սաթյանի, Ա. Դոլուխանյանի և ժամանակակից ուրիշ հայ կոմպոզիտորների լիրիկական, էպիկական, կենցաղային, էստրադային, կատակային երգերին, վերջապես, գուսաններ Սայաթ-Նովայի և Շերամի երգերին:

Հայաստանում դանդաղ, բայց հաստատորեն աճում է տաղանդավոր երգաստեղծ կոմպոզիտորների թիվը, ու դրա հետ մեկտեղ աճում է հրաշալի երգչուհու երգացանկը: Իսկ դա իր հերթին նպաստում է նոր, լավ երգերի երևան գալուն, քանի որ հայ կոմպոզիտորները հպարտանում են նրանով, որ իրենց երգերը կատարում է Սազանդարյանը:

Երգացանկ ընտրելիս երգչի համար քիչ նշանակություն չունի կոմպոզիտորի անունը, չէ որ անունն ինչ-որ չափով նպաստում է կատարվող ստեղծագործության հաջողությանը: Սազանդարյանն այլ կարծիք ունի: Ահա մի օրինակ, երիտասարդ կոմպոզիտոր Գեղունի Չթչյանը, որի անունը նույնիսկ Երևանում քչերը գիտեին, գրել էր մի շարք ռոմանսներ և ցույց տվել բարեկամներին: Ռոմանսները առանձին տպավորություն չէին գործել: Նա հավատում էր գործերին, բայց միաժամանակ երկյուղում էր դրանց հրապարակային կատարման բախտի համար: Ռոմանսների բախտը վճռեց Սազանդարյանը՝ առաջին անգամ կատարելով դրանք Հայաստանի կոմպոզիտորների միության չորրորդ համագումարի ժամանակ տրված համերգներից մեկում: Հաջողությունն անսպասելի էր, ոչ միայն նրանց համար, ովքեր ներկա էին անդրանիկ կատարմանը, այլ թերևս նաև հեղինակի համար: Երիտասարդ կոմպոզիտորի ռոմանսները ստացան լավ «կյանքի ուղեգիր»:

Սազանդարյանի կատարմամբ հայկական էստրադային երգը ձեռք բերեց ազգային բնութագծեր, հնչեց իբրև արվեստի մի ստեղծագործություն, որ արժանի է տեղ գրավելու համերգային երկացանկում:

Գուսանական երգը, շնորհիվ Տ. Սազանդարյանի և այդ ժանրի անխոնջ պրոպագանդիստ Շարա Տալյանի ջանքերի, արժանի տեղ գրավեց երգիչների երկացանկում՝ պրոֆեսիոնալ երաժշտության կողքին:

Այնպիսի մի խոշոր կոմպոզիտորի երկերը, ինչպիսին է Ռ. Մելիքյանը, հեղինակի մահից հետո գրեթե չէին կատարվում, իսկ եթե կատարվում էլ էին, ապա «դեկադանսի» շղարշով, որ ինչ-որ ժամանակ «հայտնաբերված» էր դրանցում՝ որոշ վայ-երաժշտագետների թեթևամտությամբ: Տ. Սազանդարյանը նոր կյանք

պարգևեց նրա երգերին, մասնավորապես «Զառ-վառ» հոյակապ շարքին, ցույց տալով դրանց ճշմարիտ ազգային բնույթը և ուղակի կապը Կոմիտասի ավանդույթների հետ:

Մի առիթով, Ա. Հարությունյանի երգերից մեկի վրա համատեղ աշխատանքի ժամանակ, հեղինակը, ցանկանալով տեքստի մեջ արտահայտել Սազանդարյանի երգային մաներայի բոլոր առանձնահատկություններն ու բոլոր վոկալ նրբերանգները՝ երաժշտական շարադրանքի զինանոցում չգտնելով համապատասխան նշաններ, ափսոսանքով նկատեց.

— Տաթևիկ Տիգրանովնա, այն, ինչպես դուք երգում եք, անհնար է ձայնագրել:

Եվ նա իրավացի էր:

Բայց եթե նոտային տեքստն ի զորու չէ արտահայտել նրա երգեցողության բոլոր երանգները, ապա հնարավո՞ր է մի ակնարկով պատկերացում տալ Տ. Սազանդարյանի ձայնի, նրա հարուստ ու նուրբ արտիստական նկարագրի մասին: Ես փորձեցի սոսկ ընդհանուր գծերով ներկայացնել հրաշալի երգչուհու դիմանկարը:

Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«ՍՈՎԵՏՍԿԱՅԱ ՄՈՒԶԻԿԱ», N6, 1956

## ԻՐԱՆ

Մի ամբողջ ամիս մեզ մոտ էին Սովետական Միությունից ժամանած դերասանները: Նրանց ելույթները տեղի ունեցան Ֆիլհարմոնիայի «Ռոյալ» համերգասրահում:

Որտեղ էլ հանդիպեինք դերասաններին, նրանք ամենուրեք մեր ժողովրդի ուշադրության կենտրոնում էին: Հատկապես մեծ հետաքրքրություն առաջացրեց տիկին Սազանդարյանի մենահամերգը, որ տեղի ունեցավ լեփ-լեցուն դահլիճում: Նա մեզ ներկայացրեց կոմպոզիտորների երկերի մի ամբողջ շարք՝ Բախից մինչև Շոստակովիչ: Իսկ հատկապես մեզ համար նա պարսկերեն երգեց հայտնի պոետ Սահադիի տեքստով կոմպոզիտոր Հուսեյնի գրած «Քարավան» ռոմանսը: Դահլիճը երկար ժամանակ կանգնած ծափահարում էր նրան:

Մի երեկոյի ընթացքում տիկինը երկու համերգի ծրագիր կատարեց: Նա շատ երգեց «բիս»-ով, հատկապես հայկական ժողովրդական երգեր, որոնք նրա վարպետ կատարմամբ նույնիսկ հասկանալի էին նրանց, ովքեր հայերեն չգիտեին:

Անվերջ լսվում էին «բրավո» բացականչություններ:

Համերգից հետո հայրենակիցների մի հսկա բազմություն նետվեց դեպի երգչուհին՝ նրա ստորագրությունը վերցնելու համար:

«ՍՈՎԵՏՍԿԱՅԱ ԿՈՒԼՏՈՒՐԱ», ՄԱՅԻՍ, 1956
(արտատպված է Թեհրանի «ՕՄԻԴԵ ԻՐԱՆ» ամսագրից)

## ՍՈՎԵՏԱԿԱՆ ԱՐՏԻՍՏՆԵՐԻ ԵԼՈՒՅԹԸ ԼԻԲԱՆԱՆՈՒՄ

ՍՍՀՄ-ի հետ կուլտուրական կապերի Լիբանանի ընկերության հրավերով Լիբանան ժամանած սովետական արտիստների խումբը երեկ Բեյրութի «Դունյա» կինոթատրոնում տվեց իր առաջին համերգը: Համերգն անցավ մեծ հաջողությամբ և հանդիսականների խնդրանքով շատ համարներ կատարվեցին բազմիցս անգամ: Ներկաները հատկապես ջերմ ընդունեցին ՍՍՀՄ ժողովրդական արտիստներ Տ. Սազանդարյանի ու Նար Հովհաննիսյանի ելույթները:

«ԿՈՄՈՒՆԻՍՏ», 15 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, 1956

## ՍՈՎԵՏԱԿԱՆ ԱՐՏԻՍՏՆԵՐԻ ԵԼՈՒՅԹԸ ՍԻՐԻԱՅՈՒՄ

Հալեպ: Սիրիայում գտնվող սովետական արտիստների խումբը երկու համերգ տվեց Հալեպում: «Սուրիա» կինոթատրոնի դահլիճը (1500 տեղանոց) երկու համերգների ժամանակ լեփ-լեցուն էր: Հասարակությունը ջերմորեն դիմավորեց ՍՍՀՄ ժողովրդական արտիստուհի Տ. Սազանդարյանին, ՍՍՀՄ ժողովրդական արտիստ Ն. Հովհաննիսյանին, արտիստներ Պտիցինի, Կալաչևայի և մյուսների ելույթները:

Համերգներին ներկա էին սիրիական պառլամենտի նախագահը և Հալեպի քաղաքապետը:

«ԿՈՄՈՒՆԻՍՏ», 28 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, 1956

## ՍՈՎԵՏԱԿԱՆ ԱՐՏԻՍՏՆԵՐԸ ԹԵՀՐԱՆՈՒՄ

Սովետական արվեստի ներկայացուցիչներին բացառիկ ջերմ ընդունելություն ցույց տրվեց: Հատկապես մեծ հաջողություն ունեցավ Հայկական ՍՍՀ ժողովրդական արտիստուհի Տ. Տ. Սազանդարյանը, որը կատարեց արևմտյան և ռուս կլասիկների ստեղծագործություններն ու սովետական կոմպոզիտորների գրվածքները ռուսերեն, հայերեն և ադրբեջաներեն լեզուներով, ինչպես նաև իրանական կոմպոզիտոր Հուսեյնի ստեղծագործությունը պարսկերեն լեզվով՝ իրանական նշանավոր բանաստեղծ Սահադիի խոսքերով:

«ԿՈՄՈՒՆԻՍՏ», 15 ՄԱՅԻՍԻ, 1956 (ՏԱՍՍ-ի հաղորդում)

## ՍՈՎԵՏԱԿԱՆ ԱՐՏԻՍՏՆԵՐԸ ԲՐՅՈՒՍԵԼՈՒՄ

Սովետական երգարվեստը Բրյուսելյան տոնավաճառում ներկայացնելու պատիվը տրվել էր Ի. Պետրովին, Գ. Օլեյնիչենկոյին և Տ. Սազանդարյանին: Նրանք իրենց արտակարգ տաղանդը դրսևորեցին՝ իսկական վարպետության շուքով կատարելով իրենց բոլոր համարները:

«ՍՈՎԵՏՍԿԱՅԱ ԿՈՒԼՏՈՒՐԱ», 12 ՕԳՈՍՏՈՍԻ, 1958

Տ. Սազանդարյանը ներքին խոր ապրումներով մեզ հասցրեց Փառանձեմի բոլոր զգացմունքներն ու տատանումները, ընդգծելով նրա հոգեկան վեհանձնությունը: Երգչուհին հիանալի է տալիս կերպարի զարգացման ողջ ընթացքը: Սկիզբ առնելով «Օ՛, իմ սև ճակատագիրը» մեներգի տխուր տրամադրությունից, նա իր հերոսուհուն աստիճանաբար տանում է դեպի Տիրիթի հետ ունեցած դրամատիզմով լեցուն զուգերգի տեսարանը, իսկ վերջում ցայտուն դրսևորում է նրա հայրենասիրական վսեմ զգացումների հաղթանակը: Երգչուհու

արտահայտիչ մեցցո-սոպրանոն հնարավորություն է ընձեռում հավասարապես համոզիչ դարձնել տարբեր տրամադրություններ բացահայտող և տարբեր բովանդակություն կրող բոլոր տեսարանները:

Ն. ՄԱՄԻՍԱՇՎԻԼԻ, Վ. ԳՈՒՐԿԵՎԻՉ

«ԶԱՐՅԱ ՎՈՍՏՈԿԱ», 23 ՄԱՐՏԻ, 1958

## ԵՐԳՈՒՄ Է ՏԱԹԵՎԻԿ ՍԱԶԱՆԴԱՐՅԱՆԸ

Օդի մեջ հալվում են թավշյա հնչյուններն ու շոյում հոգիդ, ուզում ես հավաքել ձայնի այդ անուշ նրբերանգներն ու պահել, բայց ինչպես... ժպտում ես ակամա ու խորհում, որքան հմայիչ են դարձնում կյանքը երգն ու երաժշտությունը:

Ահա մեղմ շշնջում է Ռոմանոս Մելիքյանը՝ բարի, անսահման բարի ու մարդկային, մորմոքում է Կոմիտասը, այրում է Սայաթ-Նովան... այդ Տաթևիկ Սազանդարյանի հոգեթով ձայնն է, փոթորկվում են ալիքները ու գնում դեպի աշխարհի հեռավոր ափերը...

Խնձորեսկ, Զանգեզուր, հրաշքներով ու հեքիաթներով լի լեռնաշխարհ: Ծորում է ինչ-որ տեղ մի կարոտի կանչ, մի սիրո մրմուռ, խլում են այդ մրմունջները հսկայական քարերը ու ձորերը ու վաշ-վիշ անելով՝ իրարու տալիս: Գյուղերը թառել են ժայռերի կատարներին կամ ծվարել ստորոտում, տները թափվել են իրար վրա և ցրվել քարերի արանքներում՝ նետած մի բուռ հատիկի նման:

Խիստ է այստեղ բնությունը, բայց գեղեցիկ է ու արվեստածին: Այդպես է օժտել նա նաև իր զավակներին. խիզախ է Զանգեզուրի ժողովուրդը, երգասեր է, սրտառուչ, հաց է քամել հայ լեռնականը սեպ ժայռի սրտից ու ծաղիկներ ցանել նրա շիկացած լանջերին, երգը նրա աշխատանքի ընկերն է եղել, վշտի ամոքիչը, ուրախության ուղեկիցը:

Այս լեռնային երգիչներից մեկն էլ դարձել է այնքան նշանավոր «սազանդար», որ նրան հրավիրել են հաճախ գյուղից-գյուղ, քաղաքից քաղաք՝ մեծ խնջույքներին ու մրցախաղերին: Նրան

անվանում էին «կեծի պապի»: Տաքարյուն պապին մի ձմեռ էլ գնացել է երգելու, նվագելու ժողովրդի համար, ու սազը ձեռքին կորել է Զանգեզուրի կիրճերում: Երաժշտասեր ծերունու պատվին ազգը դառել է Սազանդարյան և ազգանվան հետ միասին պապերի սերն ու արվեստն էլ անցել են որդոց որդի:

Խստաբարո և հայրենասեր մարդ է եղել Սազադարյանի որդիներից մեկը՝ Տիգրան վարժապետը, ինչպես բոլոր զավակներին, այնպես էլ կրտսեր աղջկան նա տարել է կնքելու Տաթևի վանքում և այս անգամ արդեն գրկած Տաթևիկ անունը՝ վերադարձել է տուն:

Դեռ նոր ոտի կանգնած սև, խուճուճիկ աղջիկը ահա տոտիկ-տոտիկ է անում լեռնալանջ բակում ու դնդնացնում քթի տակ, հասակի հետ զորեղանում է ձայնը ու մրմնջում գիշեր-ցերեկ:

— Երգելով քնում է, երգելով վերկենում էս բզեզը, — ծիծաղում է հաճախ մայրը:

Բաքու:

Գյուղի ամենախարխուլ խրճիթներից մեկը ասես նրանց հետ տեղափոխվել է քաղաք: Ծուռ ու մուռ փողոցներով Տաթևիկը դպրոց է շտապում: Նա ինը-տասը տարեկան է ընդամենը, բայց դարձել է արդեն Անտոն Մայիլյանի և Ստեփան Դեմուրյանի երգչախմբի մեներգչուհին: Հենց առաջին համերգից հետո, երբ իրենից մեծ ծաղկեփունջ ձեռքին՝ փոքրիկ երգչուհին մոտենում է ծնողներին, հուզված հայրը երազում է.

— Կմեծանա Տաթևիկս, նշանավոր երգչուհի կդառնա, մեծ համերգներ կտա...

Մոսկվա: Փոխվել է կյանքի ընթացքը:

Դաշտերի հորովելին ու կիրճերի հառաչին փոխարինել են մեծ քաղաքի աղմուկն ու մեքենաների համերգը: Տասնհինգ տարեկան Տաթևիկը արհեստագործական դպրոցն արդեն ավարտած աշխատում է Մոսկվայի «Վելոստրոյ» գործարանում, բայց արվեստի սերը նրան հետևում է ամենուրեք: Գործարանում Տաթևիկը մեծ եռանդով մասնակցում է ինքնագործ խմբերի օլիմպիադաներին: «Վելոստրոյի» Տանյան գրեթե միշտ գրավում է առաջին տեղը: Բանվորական ազնիվ միջավայրը մտահոգվում է տաղանդավոր աղջկա ճակատագրով: Մի օր էլ Տաթևիկը իր ավագ ընկերների հետ հայտնվում է Հայկական կուլտուրայի տանը:

Հայկական կուլտուրայի տուն, հայրենաբույր մի օջախ, պատերից ժպտում են հայ նկարիչների արևաթաթախ գործերը, խշշում են ասես Սևանի ալիքները, կապույտ մշուշում թախծում է

Արարատի վեհությունը: Այրում ու ամոքում են Մարտիրոս Սարյանի նռներն ու դեղձերը: Փոքրիկ ու կոկ է հարմարավետ դահլիճը, բեմից լսվում են Իսահակյանի բանաստեղծությունները, Կոմիտասի երգերը...

Մի խումբ հայ արվեստագետների աջակցությամբ Տաթևիկը սկսում է երաժշտական կրթություն ստանալ: Սովորում է Ռուբեն Սիմոնովի ղեկավարած թատերական ստուդիայում և ձայնը մշակում Մեծ թատրոնի դասատու Ստեփան Բարխուդարյանի մոտ: Ուսումնառությունը տևում է ընդամենը չորս տարի:

1937 թվականին նորավարտ Սազանդարյանը գալիս է Երևան որպես օպերային երգչուհի և առաջին տարին հանդես է գալիս միայն երկրորդական դերերում:

1938 թվականին մեր հանրապետությունը պատրաստվում էր իր արվեստի և գրականության տասնօրյակին: Օպերան Ալմաստի դերակատար չուներ: Որոշում են Մոսկվայից հրավիրել, բայց Մոսկվան մերժում է, պահանջելով, որ ազգային օպերայի գլխավոր հերոսուհու դերակատարը լինի հայ դերասանուհի, տեղական ուժերից: Դիրիժոր Գ. Բուդաղյանը, գուցե սրտի վախով, բայց արտաքուստ հավատ ներշնչող հաստատակամությամբ պատվիրում է Տաթևիկին փորձի համար պատրաստել դերի ամենադժվար մասը՝ երկրորդ գործողությունը: Տաթևիկն անցնում է գործի: Նրան համակում է համառ ու համբերատար աշխատանքի անհուն բերկրանքը:

... Մեծ թատրոնը թնդում է, նորից ու նորից բեմ հրավիրելով նախկին խառատին՝ իշխանուհու տարազով: Նշանավոր արտիստուհի Մաքսակովան ջերմագին խոսքերով հանդես է գալիս կենտրոնական մամուլում: Հայ արտիստուհուն շատ բարձր գնահատական են տալիս արվեստագետներ Ա. Նեժդանովան, Ա. Մելիք-Փաշայանը և ուրիշներ:

Այնուհետև Երևանի օպերային թատրոնում Տաթևիկ Սազանդարյանը սկսում է կատարել մեցցո-սոպրանո պահանջող գլխավոր դերերը:

Հարուստ ձիրք և համառ աշխատանք: Ստեղծագործական իր ողջ կյանքում Տաթևիկը չի մոռանում, որ առանց համառ աշխատանքի շատ բանի հասնել չի կարելի, տաղանդը կրակ է միայն, որին պետք է վառելիք տալ: Եվ նա կրակի նման էլ վառվել է միշտ, աշխատել որպես անընդհատ խորհող ու որոնող իսկական արտիստուհի:

Որքան կյանք ու ջանք է գործադրել երգչուհին՝ իր այնքան լայն ու բազմազան երգացանկի համար, ավանդական Դալիլայից ու

Կարմենից՝ մինչև Ուլյանա Գրոմովան, արքայական Փառանձեմից ու Ալմաստից՝ մինչև կոլտնտեսական հերոսուհին: Այսպես նա պատրաստել է քսանից ավելի դերեր, յուրաքանչյուրը մի բարդ հոգեբանություն, մի առանձին աշխարհ:

Բնորոշելով Սազանդարյանի երգացանկի բազմազանությունն ու ձայնական տվյալները, մեր երգարվեստի մեծանուն վարպետ Հայկանուշ Դանիելյանը գրել է. «Կարծես նա այն ձույլ ոսկին է, որի հետ ինչ կանես՝ նույն ոսկին կմնա...»:

Սազանդարյանը սիրում է կամերային արվեստը և շատ ժամանակ է հատկացնում նրան: Ամենանուրբ արվեստով կատարելով հայ, ռուս ու եվրոպական դասականների ստեղծագործությունները, Սազանդարյանը կարող է արար աշխատավորների համար երգել նրա ժողովրդական երգերը...

Սիրով ու հոգատարությամբ է նա պատրաստում ու երգում սովետական կոմպոզիտորների նորաստեղծ գործերը, երգում է անգամ մեր բոլորովին երիտասարդ ստեղծագործողների և գուսանների գործերը, հանդես գալով որպես դրանց առաջին կատարողն ու պրոպագանդիստը:

Տարբեր ժողովուրդների երգերից կազմած հարուստ երգացանկով երգչուհին հանդես է եկել Միության բազմաթիվ քաղաքներում:

Մեծ խանդավառությամբ ընդունեցին երգչուհուն նաև Միության սահմաններից դուրս: Թեհրան, Դամասկոս, Լիբանան, Հալեպ... Կարոտած հայրենակիցների սրտառուչ դեմքեր, հույզով ու համակրանքով լի օտարականներ: Ահա Հալեպի լեփլեցուն դահլիճը: Տաթևիկը երգում է հենց այնտեղ սովորած արաբական ժողովրդական մի երգ, դահլիճի ողջ հասարակությունը արցունքաշաղ աչքերով երգում է նրա հետ, բայց չկարողանալով պահել հուզմունքը՝ երգչուհուն ընդհատում է փոթորկալից ծափերով:

Իսկ Թոմմի՞ն...

Հյուրանոցում աշխատող փոքրիկ Թոմմին մի սրտառուչ բարեկամություն է հաստատել հեռու աշխարհից եկած երգչուհու հետ: Փոքրիկ տղան հաճախ մտնում է Տաթևիկի համարը, չոքում թախտի առաջ ու երգում նրա համար արաբական երգեր, համերգներին ուղեկցում է մինչև բեմ, կանգնում է վարագույրի մոտ, սրտատրոփ հետևում երգչուհու ելույթին: Տաթևիկը պահպանում է այդ բարեկամությունը, փոքրիկ նվերներ, պատկերազարդ գրքեր ու ամսագրեր է ուղարկում Թոմմիի համար:

Սազանդարյանը մեծ սիրով կատարել և կատարում է բազմաթիվ

հասարակական աշխատանքներ: Նա շատ մրցանակներ է շահել, մեդալներ, շքանշաններ ստացել, պարգևատրվել պատվոգրերով ու դիպլոմներով, բայց ամենից շատ հուզել է նրան 1956 թվականին իր նախկին աշխատանքի ընկերների՝ գործարանի բանվորների կողմից Մեծ թատրոն բերված ճերմակ յասամանի հսկայական ծառը:

Դժվար է թվել առաջին ծաղկեփնջից հետո Սազանդարյանի ստացած բոլոր շնորհներն ու պարգևները: 1944 թ. նրան շնորհվեց ռեսպուբլիկայի վաստակավոր արտիստի, իսկ 1945 թ. ժողովրդական արտիստի կոչում: 1956 թ. նա անցավ Միության առաջնակարգ երգիչների շարքը, ստանալով ՍՍՀՄ ժողովրդական արտիստի կոչում:

Առաջադրվելով ՍՍՀՄ Գերագույն սովետի դեպուտատության թեկնածու, տաղանդավոր երգչուհին մեծ պարտականություն է ստանձնում: Մեր ժողովուրդը ցանկանում է, որ անսպառ լինի մայր բնությունից ստացած մեծագույն պարգևը՝ նրա հոգեթով ձայնը, եռանդն ու կորովը...

ՄԱՐՈ ՄԱՐԳԱՐՅԱՆ

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ», 8 մարտի, 1958

## ԵՐԳՉՈՒՀԻ ՍԱԶԱՆԴԱՐՅԱՆԸ ԱԹԵՆՔՈՒՄ

Աթենքի «Պալաս» դահլիճում կայացավ հանդիպում Հայաստանի սոխակի՝ տիկին Սազանդարյանի հետ...

Իր պատվին տրված ճաշկերույթից հետո ներկաները հիանալի երգչուհու արվեստը ունկնդրելու և նրան ծափահարելու հաճույքն ունեցան: Մեծ տպավորություն թողեցին իր կատարած մի քանի հայկական երգերը և «Կարմեն» օպերայից մեներգը: Համերգին նվագակցում էր Նիկոլայ Միրոնովը:

«ՏԱՆԵԱ»
ԱՐՏԱՏՊՎԱԾ Է «ԼՐԱԲԵՐԻՑ», 12 ՆՈՅԵՄԲԵՐԻ, 1959

# ՏԱԹԵՎԻԿ ՍԱՁԱՆԴԱՐՅԱՆԻ ՄԵՆԱՀԱՄԵՐԳԸ

Հայկական բնանկարի լայնաշունչ հևք, աղջկա ամոթխած երգը, մայրական վիշտն ու սիրահարների չարաճճի խաղերը, կանչող ու հրահրող մի գիշերերգ, լքված կնոջ թախիծը, գեղջկական երգի անդորր՝ երաժշտական բնութագրումների մի ամբողջ պատկերասրահ անցավ ունկնդիրների առջևից՝ ՍՍՀՄ ժողովրդական արտիստուհի Տաթևիկ Սազանդարյանի համերգի ժամանակ:

Տ. Սազանդարյանի երգած բազմաթիվ և բազմաբնույթ երկերից, որոնք ի դեպ մի ուրիշ երգչի համար ամբողջ երկու համերգի ծրագիր կկազմեին, առանձնապես ուժեղ տպավորություն թողեցին լիրիկո-դրամատիկական բնույթի երգերն ու ռոմանսները: Երգչուհին կարողանում է փոքրածավալ երգի մեջ ստեղծել ավարտուն դիմանկար, դրա համար նախ և առաջ օգտվելով իր ձայնի արտահայտիչ երանգներից և հարուստ ելևէջներից:

Նրա ստեղծած երաժշտական բնութագրման մեջ, չնայած նրբին գեղարվեստական մանրամասների առատությանը, երբեք չի կորչում կերպարի գլխավոր գիծը, դա այնքան ցցուն է գծագրվում, որ կարելի է բնորոշել մեկ-երկու բառով: Այդպես է մոր կերպարը (Նովիկովի «Մայրը» երգում), որի իմաստը հետևյալն է. վիշտ ու բողոք: Այդպես է Կվերուլֆի «Սյուննևի երգի» հերոսուհին, որը համակված է սպասումի թախիծով: Այդ պլանով է կանխամտածված Գրիգի Սոլվեյգի կերպարը:

Դերասանուհին հիասքանչ երգեց Ռեկլիի ու Բիզեի թափանցիկ, մտասույզ-քնարական ու կենցաղային երգերը և ռոմանսները: Հիշողության մեջ հատկապես մնացին Ռեսպիգիի «Իտալական ժողովրդական երգը» և արաբական «Լյոմա-լյոման»:

Նրա ընդարձակ ծրագրի մեջ, ուր մտել էին շատ հազվագյուտ կատարվող ստեղծագործություններ, միայն Մալարտինի ռոմանսն էր զուրկ գեղարվեստականությունից:

Ինչպես միշտ, Տ. Սազանդարյանը շատ լավ կատարեց հայկական երգերը: Երգչուհին զարմանալիորեն տիրապետում է ժողովրդական կատարման ձևերին և մեծ հմտությամբ դրանք միահյուսում է իր մասնագիտական հնչյունաբանությանը: Շատ ուժեղ տպավորություն թողեց Ավետիք Իսահակյանի բառերով Հարո Ստեփանյանի գրած «Հ՛եյ, Արագած» ռոմանսը: Հպարտ ու ոգեշունչ, նրա կատարումն այնպիսի մեծ զգացմունք և խորհուրդ ուներ, որ լսողներն, ասես, ընկալեցին Հայաստանի կենդանի շունչը,

ոգին: Հայաստանի այդ կերպարը Տ. Սազանդարյանը ընդհանրացրեց նաև այս ստեղծագործություններում. մի քանի նուրբ շտրիխ ընդգծեցին ազգային տարբեր բնավորության տարբեր երանգները՝ քնքուշ ժողովրդական «Աղջկա երգի» մեջ (Է. Բաղդասարյանի շատ հաջող մշակմամբ), Չուխաջյանի «Արշակ Երկրորդ» օպերայից Փառանձեմի կրքոտ ու խորաթափանց դերերգում, հոգեպարար «Պաղ ջուր կուգար» (Ս. Սամվելյանի մշակմամբ) երգում:

Անսամբլի ճշգրիտ զգացողությամբ ու նրբորեն երգչուհուն նվագակցում էր դաշնակահարուհի Հ. Տեր-Ղևոնդյանը:

Տ. Սազանդարյանի երեկոն ընթացիկ տարվա ամենավառ համերգներից մեկն էր:

Մ. ԲԵՐԿՈ

«ԿՈՄՈՒՆԻՍՏ», 18 ՄԱՐՏԻ, 1959

## ՀԱՅ ԴԵՐԱՍԱՆՆԵՐԸ ԲՐՅՈՒՍԵԼՈՒՄ

Հինավուրց կուլտուրա ունեցող հեռավոր ու փոքր Հայաստանի լավագույն երգչուհիներից մեկը, Երևանի օպերային թատրոնի մեներգչուհի (սոպրանո) տիկին Սազանդարյանը մեզ ապշեցրեց իր արտիստականությամբ, կատարողական բարձր արվեստով:

Բացի մեզ հայտնի՝ Բիզեի «Կարմեն» օպերայի «Խաբաներայից», որը նա կատարեց մեծ ներշնչանքով, դերասանուհին երգեց տարբեր ոճերի կոմպոզիտորների ստեղծագործություններ, մեզ ամենից շատ զարմացրեց, որ նա դրանք համապատասխանորեն կատարում էր բնագրի լեզվով:

Զարմանալի չէ, որ մենք համոզվեցինք, թե Տաթևիկ Սազանդարյանը բացառիկ երգչուհիների դասին է պատկանում: Նա ունկնդիրներին ստիպեց հուզվել, հատկապես երբ կատարեց Նովիկովի «Մեզ խաղաղություն է պետք» կանտատայից մոր մեներգը:

«ԼՅԱ ՊԵՆՅԱ», 17 ՆՈՅԵՄԲԵՐԻ, 1962

# ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ

Ավարտվեցին Հայաստանի արվեստի մի խումբ վարպետների հյուրախաղերը Ֆրանսիայի տարբեր քաղաքներում: Քսաներկու օրվա ընթացքում Հայաստանի պատվիրակները 19 համերգ տվեցին: Նրանք եղան Փարիզում, Բորդոյում, Տուլուզում, Լիոնում, Մարսելում, Կլերմոն-Ֆեռոնեում ու այլ քաղաքներում:

Ֆրանսիայից վերադառնալուց հետո խմբի ղեկավարը՝ Հայկական ՍՍՀ կուլտուրայի մինիստրի տեղակալ Ա. Ծահինյանը, մեր թղթակցին պատմեց.

— Մեր ուղևորությունը մեծ ծանրաբեռնվածություն ուներ: Համարյա ամեն օր մենք ճանապարհին ենք եղել, իսկ յուրաքանչյուր երեկո համերգ էինք տալիս մեզ համար բոլորովին անծանոթ մի նոր քաղաքում: Մենք Ֆրանսիայի մայրաքաղաք թռանք նոյեմբերի 8-ին և հենց նույն օրն էլ, մայրաքաղաքի խոշոր համերգասրահներից մեկում կայացավ մեր առաջին համերգը:

Դահլիճը լեփ-լեցուն էր: Ֆրանսիացի հանդիսականները, որ մեզ դիմավորեցին ինչ-որ լարված ուշադրությամբ (չէ՞ որ Հայաստանից եկած արվեստագետները նրանց մոտ առաջին անգամ էին հանդես գալիս), արդեն ծրագրի առաջին համարներից հետո էլ չէին թաքցնում իրենց հրճվանքը: Համարյա բոլոր համարները, ինչպես առաջին համերգի ժամանակ, այնպես էլ մնացած օրերը, «բիս»-ով էին կրկնվում:

Անփոփոխ հաջողությամբ էին անցնում երգիչներ Տ. Սազանդարյանի, Ն. Հովհաննիսյանի և Օ. Համբարձումյանի, պարողներ Ա. Բաղդասարյանի և Լ. Կարապետյանի, թավջութակահարուհի Մ. Աբրահամյանի, կոմպոզիտորներ Ալ. Հարությունյանի, Ա. Բաբաջանյանի, Խ. Ավետիսյանի, դուդուկահար Վ. Հովսեփյանի, դափ նվագող Ա. Նիկողոսյանի ելույթները: Հասարակությունը բարձր գնահատեց նվագակցող Հ. Տեր-Ղևոնդյանի վարպետությունը, որը մեծապես նպաստեց համերգի հաջողությանը:

Վ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

«ԿՈՄՍՈՄՈԼՍԿԱՅԱ ՊՐԱՎԴԱ», 3 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ, 1963

## ՖՐԱՆՍԻԱ

Երբ հերթը հասավ տիկին Սազանդարյանին՝ երևանյան օպերայի մեներգչուհուն, օ՛, անսպասելի հայտնություն, մաքուր ֆրանսերենով նա երգեց Շառլոտայի մեներգը Մասնեի «Վերթեր» օպերայից և Բիզեի «Կարմեն» օպերայից «Խաբաներան»:

Նա հիասքանչ երգչուհի է, հարավային տեմպերամենտի և ջերմության տեր:

Ֆրանսիացիներին այդքան մոտ ու սիրած Կարմենը՝ նրա կատարմամբ չափազանց գունեղ է:

ԴԵՌՆԻԵՌ ՅՈՂ (ԼԻՈՆ, «ՎԵՐՋԻՆ ԺԱՄ»), 1963

## ՀԻՆԱՎՈՒՐՑ ՖԼԱՆԴՐԻԱՅՈՒՄ

Բրյուսելցիները մի առանձին ջերմությամբ էին խոսում Սազանդարյանի վարպետության մասին, նշելով, որ նա պատիվ կբերի եվրոպական ուզածդ ազգին...

«Արվեստում Սազանդարյան երգչուհին և արտիստուհին հանդես են գալիս լիակատար միասնությամբ», — ասում էին նրանք...

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ», 10 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ, 1963

## ԱՆՆԱ («ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ»)

Նոր բեմադրության բերկրալի երևույթներից է Սովետական Միության ժողովրդական դերասանուհի Տաթևիկ Սազանդարյանի դերակատարումը: Արտիստուհին մեկ անգամ ևս ունկնդիրներին առինքնեց բեմական իր հմայքով, վարպետությամբ, կուլտուրայով: Նրա մեկնաբանությամբ Աննան, հիրավի, սիրո խոր ու անհաղթահարելի զգացմունքներ առաջացնող էակ է:

Ա. ՍԱՐՅԱՆ

«ԵՐԵԿՈՅԱՆ ԵՐԵՎԱՆ», 6 հունիսի, 1969

# ԱՆՁՆԱԿԱՆ ԱՐԽԻՎԻՑ

Սա կենսագրական չէ և ոչ էլ ստեղծագործական դիմանկար, այլ պարզապես առանձին դիտումներ, տեղեկություններ, պարզաբանումներ՝ արվեստագետի մարդկային կերպարը, նրա անհատականությունը, հասարակական կշիռը առավել լրիվ բացահայտելու համար:

Առաջարկվող փաստաթղթերը Տաթևիկ Սազանդարյանի անձնական արխիվից առնված էջեր են: Սրանք արժեքավոր են իրենց պարունակած փաստական տվյալներով, որ լրացնում են նշանավոր երգչուհու կենսագրությունը, հնարավորություն են տալիս բացորոշ տեսնելու այն ուղին, որն անցնելով, դերասանուհին աստիճանաբար դարձել է իր ժամանակի ոգու դրսևորողը, մեր հանրապետության մշակույթի ու արվեստի կառուցման ակտիվ մասնակիցը:

Այս մտքերն, իհարկե, հաճախ հպանցիկ են, ընդհատ-ընդհատ և լիակատար բնութագրման հավակնությունից հեռու, բայց նոր գծերով գալիս հարստացնում են ստեղծագործական իր ամբողջ եռանդն ու սերը ինքնամոռաց կերպով հարազատ ժողովրդին նվիրաբերած արտիստուհու բնութագիրը:

Այս վավերագրերը նախ և առաջ հավաստում են երգչուհու բազմաթիվ գործունեության քաղաքացիական բնույթը, թե նա ինչպիսի ակտիվ հասարակական աշխատանք է վարել շատ ու շատ տարիների ընթացքում:

Նրա հասարակական բուռն տեմպերամենտը դեռևս 30-ական թվականներից շաղախված էր ամուր ձուլվածքով: Դա մի զարմանալի ժամանակ էր: Անձնուրաց նվիրաբերմամբ իրականանում էին երիտասարդության ամենախիզախ երազանքները: Տաթևիկ Տիգրանովնան ասում էր, որ հենց այն տարիներին էր սկիզբ առել ու իր մեջ թրծվել հասարակական գործչի ջիղը: Գործարանի կոմերիտական կազմակերպությունը նրան ընդգրկեց գործարանի ինքնագործ խմբի մեջ: Տաթևիկը ամենուր հանդես էր գալիս

հաճույքով, ջերմորեն զգալով գործարիկոմի և կոմերիտկոմի խրախուսանքն ու դրվատանքը: Եվ շուտով նրան գործուղեցին Մոսկվայում գործող Հայկական մշակույթի տուն: Հենց այդտեղ էլ փայլուն արդյունքի են հասնում դերասանուհու բնածին վառ շնորհները: Դրա պերճախոս վկայությունն է նրա դերասանական կյանքի առաջին՝ 1933 թվականին վերաբերող հայտագիրը: Այստեղից է սկիզբ առնում նրա մասնագիտական ուղին:

1937 թ. Տ. Սազանդարյանին հրավիրում են Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոն որպես մենակատար: Երկու տարի անց նրան է վստահվում Ալմաստի դերեգը՝ հայ արվեստի մոսկովյան առաջին տասնօրյակին մասնակցելու համար:

Առաջին տասնօրյակը Մոսկվայում: Աննախադեպ հաջողություն, փայլուն հաղթանակ, ապա Կարմիր դրոշի շքանշան:

Իսկ նա ընդամենը 23 տարեկան էր...

Թերթում եմ նրա գզրոցի նյութերը. դրանցից շատերն արդեն խունացել են, բայց դրանք բոլորը նորից ու նորից հաստատում են մի անհերքելի ճշմարտություն, որ ես գործ ունեմ մի մարդու հետ, որը երբեք կանգ չի առել: Նա միշտ շարժման մեջ է եղել և, հիրավի, չկա հասարակական գործունեության մի ոլորտ, որին նա նվիրաբերած չլինի իր ամենաանկեղծ մասնակցությունը:

Որքա՜ն նամակներ ու գրություններ կան շեֆական միջոցառումների վերաբերյալ: Եվ ո՛չ մեկը՝ անպատասխան: Ինչպես վկայում են հսկայական թիվ կազմող սրտաբուխ արձագանքները, իր ոգեշունչ երգով Սազանդարյանը նվաճել է հանդիսականների և ունկնդիրների սրտերը, շահել նրանց սերն ու համակրանքը:

...Հայրենական Մեծ պատերազմի տարիներ:

Երիտասարդ, եռանդաշատ երգչուհին ցերեկը հոսպիտալներում կապում էր մարտիկների վերքերը, իսկ երեկոները մեկնում Հայաստանի հեռավոր շրջանները՝ սրտահույզ երգով հաղթանակի հավատ ներշնչելու մարդկանց:

Ահա ձեռքիս է 1942թ. Թբիլիսիում կայացած հակաֆաշիստական միտինգում Տաթևիկ Սազանդարյանի արտասանած ճառը: Պատերազմի ահեղ օրերին այն ռադիոյով հնչեց ողջ ռազմաճակատով մեկ: Այդ ճառին արձագանքեցին հազարավոր ճակատայիններ: Իրենց նամակներում նրանք գրում էին, որ նրա ելույթը իրենց ռազմական նոր սխրանքների է մղում:

Ահա կես դարից ի վեր պահված մի ազդագիր. Հայ-

ֆիլհարմոնիայի ամառային դահլիճը «Ֆլորայի» այգում... Հնչում է ռազմաճակատային ջազ նվագախումբը , որի ղեկավարն է ռազմաճակատային Հակոբ Խանջյանը՝ Տ. Սազանդարյանի ամուսինը. նա հետագայում երկար տարիներ Հայկական ՍՍՀ արվեստի գործերի վարչության պետն էր: Բեմահարթակում են ՍՍՀՄ ժողովրդական արտիստուհի Հայկանուշ Դանիելյանը, Կոմիտասի անվան մեծահամբավ քառյակը և երիտասարդ երգչուհի Տաթևիկ Սազանդարյանը: Համերգի հասույթը՝ ռազմաճակատայինների երեխաներին....

...Եվ պատահական չէ, որ Տաթևիկ Սազանդարյանը ստացել է «Կովկասի պաշտպանության համար» մեդալը:

Իսկ հիմա դիմենք այլ փաստաթղթերի:

ՍՍՀՄ կուլտուրայի մինիստրությունը հաղորդում է Բրյուսելի միջազգային ցուցահանդեսում ՍՍՀՄ ազգային օրերին Տ. Սազանդարյանի բերած մասնակցության և դրա արդյունքի մասին.

*«Տ.Տ.Սազանդարյանը արժանավայել կերպով ներկայացրեց իր հանրապետությունը, գեղարվեստական բարձր որակով կատարեց իր ելույթները, հանդես բերեց պատասխանատվություն և կարգապահության բարձր զգացում. շնորհակալություն հայտնել Տ.Տ.Սազանդարյանին:*

*Ստեղծագործական նորանոր հաջողությունների և քաջառողության ցանկություններով՝ ՍՍՀՄ կուլտուրայի մինիստրություն:*

*Կուլտուրայի մինիստրի պաշտոնակատար*
*Ս.ԿԱՖՏԱՆՈՎ»*

*Մի այլ փաստաթուղթ, որ վերաբերում է հոկտեմբերյան հեղափոխության 50 ամյակի տոնակատարությանը.*

*«...Դուք հանդիսանում եք սովետական կուլտուրայի ակտիվ շինարարներից մեկը և ձեր անձնվեր աշխատանքով նշանակալից ավանդ եք բերել այդ գործին: Խորին երախտագիտություն և շնորհակալություն ենք հայտնում Ձեզ, Տաթևիկ Տիգրանովնա, մաղթում ենք երջանկություն, քաջառողջություն, ստեղծագործական նոր հղացումներ և ուրախություններ:*

*ՍՍՀՄ Կուլտուրայի մինիստր*
*Վ. ՖՈՒՐՑԵՎԱ*

Բազմաթիվ են այն շնորհավորանքները, որ նա ստացել է զինվորական մասերից և ստորաբաժանումներից, արհմիութենական ու հասարակական կազմակերպություններից.

23 ապրիլի 1966թ., արհմիությունների ԿԿ նախագահ Ռ. Կալինինովից.

*«Տ. Սազանդարյանին շնորհակալություն հայտնել՝ ՍՍՀՄ զինված ուժերի տվյալ շրջանում ունեցած նրա կուլտուրական-շեֆական աշխատանքի համար»:*

Ինձ հետ վերաթերթելով բազում թղթապանակները (նամակներ, պարգևներ, ծրագրեր, ազդագրեր, լուսանկարներ, հրավերներ և այլն), Տաթևիկ Սազանդարյանը ոգևորված պատմում է այս կամ այն իրադարձության, հետաքրքիր հանդիպման, անսովոր եղելության մասին: Ակամա զարմանում ես նրա հրաշալի հիշողության վրա, ուր ապրում ու չեն խամրում հանդիպումները, ուղևորությունները, միջոցառումները, այն ամենը, ինչ կապված է նրա շրջապատի մարդկանց հետ:

Մոտիկից շփվելով հասարակական գործունեության տարբեր մարզերին, Սազանդարյանը յուրաքանչյուր հանձնարարության մեծ պատասխանատվությամբ է մոտեցել: Եթե ամենահակիրճ ձևով թվարկենք նրա հասարակական գործունեությունը, ապա դա մոտավորապես հետևյալ տեսքը կունենա (ես բերում եմ ամենակարևոր փաստերը).

1954թ. - արհմիությունների հանրապետական խորհուրդը հրավիրում է մասնակցելու իր հերթական պլենումին: Երգել է Կրեմլի Մեծ դահլիճում, Հարավսլավիայի վարչապետ Իոսիֆ Բրոզ Տիտոյի պատվին տեղի ունեցած ընդունելության ժամանակ: Կրեմլի Գեորգիևյան դահլիճում ելույթ է ունեցել առաջավոր բամբակագործների հետ ունեցած հանդիպման ժամանակ:

1957թ. - Մոսկվայում կայացած երիտասարդական փառատոնի ժյուրիի անդամ:

1958թ. - ՍՍՀՄ կին գործիչների պառլամենտական խմբի հետ ուղևորվել է Հունաստան և Ալժիր: Այնտեղ հանդես է եկել զեկուցումներով, մասնակցել է կոնֆերանսներին և, իհարկե, երգել է՝ մեծ տպավորություն թողնելով:

1960թ. - Ֆրանս-հայկական երիտասարդական ԺԱՖ ընկերության հրավերով Արամ Խաչատրյանի հետ մեկնել է Փարիզ, մասնակցելու երիտասարդության 4-րդ փառատոնին:

1964թ. - Համառուսական թատերական ընկերության երկրորդ համագումարին մասնակցելու հրավեր՝ Մոսկվայից:
Ընտրվում է Հայաստանի կուլտուրայի աշխատողների առաջին համագումարի պատգամավոր:

1967թ. - հրավեր՝ մասնակցելու Կրեմլում կայանալիք ՍՍՀՄ ստեղծագործական կազմակերպությունների վարչությունների համատեղ պլենումին:

1968թ. - որպես ՀԹԸ նախագահության անդամ ողջույնի խոսք է ասում Ուկրաինայի օպերային թատրոնի 100-ամյակի տոնակատարության օրը Կիևում:

1971թ. - կառավարական պատգամավորության կազմում Թբիլիսիում մասնակցում է Վրացական ՍՍՀ 50-ամյակի տոնակատարությանը:

1973թ. - մասնակցում է Մոսկվայում կայացած թատրոնի միջազգային ինստիտուտի 15-րդ կոնգրեսին:

1976թ. - Վրաստանի ԹԸ հրավերով հանդես է գալիս Դավիթ Անդգուլաձեի հոբելյանին:

1964, 1968, 1973, 1975, 1977, 1979թթ. - Գլինկայի անվ. վոկալիստների մրցանակաբաշխության ժյուրիի անդամ:

1950թվականից եղել է վոկալիստների հանրապետական, համամիութենական և միջազգային մի շարք մրցույթների ժյուրիների նախագահ կամ անդամ, ինչի համար շնորհակալություն է ստացել ՍՍՀՄ կուլտուրայի մինիստր Դեմիչևից:

Ու դարձյալ վավերագրեր...

*«ՍՍՀՄ ժողովրդական արտիստուհի Տաթևիկ Սազանդարյանին.*
*Հեռուստատեսային ֆիլմերի «Երևան» ստուդիան Ձեր ստեղծագործության մասին լիամետրաժ երաժշտա-վավերագրական ֆիլմ է նկարահանում: Խնդրում ենք տալ Ձեր համաձայնությունը...»*

*«Հարգելի Տաթևիկ Տիգրանովնա.*
*Օկրուգի հրամանատարությունն ու քաղբաժինը սրտանց շնորհավորում են Ձեզ սովետական ժողովրդի կյանքում ունեցած նշանակալից մի հոբելյանի՝ ՍՍՀՄ զինված ուժերի 60-ամյակի առիթով:*
*ԵՐԻՍԿՈՎՍԿԻ»*

*«ՍՍՀՄ ժողովրդական արտիստուհի Տաթևիկ Սազանդարյանին.*
*Հարգելի Տաթևիկ Տիգրանովնա,*
*Խաղաղության ֆոնդի վարչությունը հաղորդում է ստացել այն մասին, որ դուք օգնություն եք ցուցաբերել այն համերգի կազմակերպմանը, որի հասույթը հատկացվել է խաղաղության ֆոնդին: Խաղաղության ֆոնդի վարչությունը սրտանց շնորհակալություն է հայտնում Ձեզ և համերգի բոլոր կազմակերպիչներին խաղաղության ֆոնդին կամավոր աջակցելու կոչին հայրենասիրաբար արձագանքելու համար:*
*Լավագույն ցանկություններով՝*
*Խաղաղության ֆոնդի վարչության*
*պատասխանատու քարտուղար՝*
*Կ.ԿՈՏՈՎ»*

Սրան կարելի է ավելացնել, որ նման կամավոր ավանդներ շատ-շատ են եղել: Իր երկու համերգի հասույթը նա տվել է Հայրենական պատերազմում զոհված հերոսների հիշատակին Ձանգեզուրում կանգնեցվող կոթողի շինարարությանը: Բազմաթիվ համերգներ՝ ի շահ դպրոցներին ցույց տրվող օգնության և այլն:

Տաթևիկ Սազանդարյանի արխիվում ամփոփված են վիթխարի քանակությամբ ու չափազանց հետաքրքիր լուսանկարներ, որոնցում դրոշմված են նրա հանդիպումները նշանավոր գործիչների՝ գրողների, նկարիչների, երգիչների, կոմպոզիտորների, ինչպես և աշխատավորների հետ:

Նրա անձնական արխիվում կան մեծ թվով լուսանկարներ, որոնք վկայում են արտասահմանյան հյուրերի և արտիստների հետ Սազանդարյանի ունեցած անձնական ու հասարակական շփումները: Հանդիպումներ օդանավակայաններում, երկաթուղային կայարաններում... երկրի տարբեր հանրապետությունների ներկայացուցիչների հետ: ... Դրանք փաստորեն ոչ միայն Սազանդարյանի կյանքին են վերաբերում, այլ ընդհանրացնում են մեր արվեստագետ մտավորականության, ավելի լայնորեն՝ նաև հայ ժողովրդի հետաքրքրություններն ու բազմալեզու կապերը:

Իսկ հիմա նաև մի քանի խոսք այն մեթոդական ու գրական նյութերի մասին, որոնք նույնպես պահված են նրա գզրոցներում: Դրանք ժամանակին օգտագործվել են, մասնակիորեն տպագրվել:

Ահա մի քանի նմուշ.

1. 1966թ. վոկալ կրթության մասին հատուկ մի զեկուցումով նա հանդես է եկել Մոսկվայում տեղի ունեցած համամիութենական կոնֆերանսում և այդ զեկուցման կոնսպեկտը, որ գտնվում է նրա մոտ, հետագայում, որպես մեթոդական արժեքավոր նյութ, տպագրել է «Մուզիկա» հրատարակչությունը:
2. 1968թ. ՀՍՍՀ Մինիստրների Խորհուրդը կազմակերպել է վոկալի մասնագետների հանրապետական առաջին կոնֆերանսը: Հայաստանի մասնագետների հետ մեկտեղ մասնակցել են Մոսկվայի կոնսերվատորիան, Գնեսինի անվան երաժշտական ինստիտուտը: Հայաստանի կողմից հանդես է եկել Տ. Սազանդարյանը «Հանրապետության երաժշտական ու թատերական հաստատություններում երիտասարդ երգիչների մասնագիտական զարգացման հարցի շուրջ» զեկուցումով:
3. 1977թ. ՀՍՍՀ 60-ամյակի օրերին զեկուցումներ Հայաստանում երաժշտական միջնակարգ կրթության դրվածքի մասին:

Արխիվում բազմաթիվ են ստեղծագործական տարբեր անհատականությունների մասին նրա գրած դիմանկարները, աշխարհաճանաչ օպերային մի շարք արտիստների մասին հոդվածները:

Ես գիտեմ, որ չկարողացա ընդգրկել թեկուզ ամենափոքր մասը այն ամենի, ինչի մասին պատմում են փաստաթղթերը: Ստեղծագործող մարդկանց արխիվները հատուկ գիտական ուսումնասիրություն են պահանջում, իսկ դա այնքան էլ դյուրին չէ:

Վերջին տարիներին Տ. Սազանդարյանը շատ է հանդես եկել նաև հեռուստատեսությամբ: Առիթները խիստ բազմազան են: Դրանք համագումարների, ասուլիսների, մրցույթների ժամանակ տեղի ունեցած նրա ելույթների արձագանքն են, ինչպես և ողջույնի խոսքեր:

Տասնամյակներ Տ. Սազանդարյանը իրեն ամբողջովին նվիրել է մանկավարժական գործունեությանը: 1961 թվականից նա Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսորն է, իսկ 1977 թվականից՝ մեներգիչների ամբիոնի վարիչը: Երկար տարիներ ղեկավարում էր Երևանի թատերական ինստիտուտի երաժշտական կոմեդիայի թատրոնի համար ընտրված ուսանողների հատուկ խումբը:

Արխիվում պահված են շատ վավերագրեր այն մասին, որ Տաթևիկ Սազանդարյանի ասպիրանտները, իսկ Երևանի պետական

կոնդերվատորիայի ասպիրանտուրան առաջին ավարտողները նույնպես սովորել են նրա ղեկավարության ներքո, լավագույն տեղերն են գրավել, դափնեկրի կոչում ու դիպլոմներ են ստացել միջազգային, համամիութենական, հանրապետական և անդրկովկասյան մրցույթներում:

Տ. Սազանդարյանը Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնի գեղարվեստական խորհրդի անդամ է: Ընտրվել է ՍՍՀՄ Կուլտուրայի մինիստրության գեղարվեստական խորհրդի անդամ:

Անտարակույս, երգչուհու ստեղծագործական նվաճումները նշվել են կառավարական բազմաթիվ պարգևներով: Տ. Սազանդարյանը Պետական մրցանակակիր է, պարգևատրվել է Աշխատանքի Կարմիր Դրոշի շքանշանով, մեդալներով և բազմաթիվ շնորհակալագրերով ու պատվոգրերով:

Որպես ամենասիրված կատարողի նրան էին նվիրաբերում իրենց ստեղծագործությունները Հայաստանի կոմպոզիտորները: Այսպես, «Դավիթ Բեկ» օպերայում Թամարի դերեզը Ա. Տիգրանյանը հատկապես նրա համար էր գրել, իսկ Ա. Բաբայանը՝ «Արծվաբերդ» օպերայում Ծուշանի դերերգը:

Հայ կոմպոզիտորները միշտ խորհրդակցում էին արտիստուհու հետ և հաշվի առնում նրա կարծիքը: Շատ հաճախ Սազանդարյանը ինքն էլ հենց դառնում էր այդ նոր ստեղծագործությունների առաջին կատարողը: Նրբորեն ու տակտով նա իր ուղղումներն էր մտցնում երկի մեջ, իսկ հետագայում հենց նրա շտկումը դառնում էր ավանդույթ մյուս կատարողների համար:

Աշոտ Սաթյանի, Ալեքսանդր Դոլուխանյանի, Ալեքսանդր Հարությունյանի, Էդգար Հովհաննիսյանի, Գեղունի Չթչյանի բազմաթիվ երգեր պրոպագանդվել են հենց Տաթևիկ Սազանդարյանի կողմից և կյանքի հոյակապ ուղեգիր ստացել: Այդ մասին են վկայում նրան նվիրված նոտաների վրա արված հեղինակային մակագրությունները:

Մամուլից դատելով, հսկայական է Սազանդարյանի համերգային գործունեության վաստակը՝ թե՛ մեր երկրում, թե՛ արտասահմանում: Այդ ասպարեզում նա անվերապահ ու բացառիկ հաջողություն ուներ:

Նրա հասարակական ու գեղարվեստական ոլորտի ողջ կյանքը արտացոլված է այս հետաքրքիր ու հսկա արխիվի թղթերում:

Բազմաթիվ են այն նյութերը, որոնք ներկայացնում են Տաթևիկ

Սազանդարյանին իբրև հասարակական ակտիվ գործչի: Ահա այն մանդատները, որոնք վկայում են, որ նա ընտրվել է ՍՍՀՄ Գերագույն սովետի դեպուտատ, Երքաղսովետի դեպուտատ, կոնֆերանսների, կականց կոմիտեի պատգամավոր:

Տ. Սազանդարյանն ակտիվ մասնակցություն է ունեցել նաև սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեի միջոցառումներին. վերջերս նրա ղեկավարությամբ արտիստների մի խումբ մեկնեց Շվեյցարիա և Ֆրանսիա: Այս ամենն արտացոլված է նաև գրավիչ լուսանկարներում:

Հոյակապ ձայնի հսկա դիապազոնը, փայլուն արտիստիզմը, կատարողական բարձր կուլտուրան Տաթևիկ Սազանդարյանին հնարավորություն տվին գրավելու ժողովրդի սերն ու հարգանքը:

Ինչպես նկատեցիք, իր հսկայական գործունեության բոլոր ոլորտներում նա եղել է և՛ նախաձեռնող, և՛ գործը առաջինն ի կատար ածող:

Իզուր չէ, որ ժողովուրդը նրան իր ճանաչմանն է արժանացրել, իսկ կառավությունը բարձր գնահատելով նրա արժանիքները, նրան շնորհել է Սովետական Միության ժողովրդական արտիստի վեհ կոչում:

ԻՆԴԱ ԻՈՆԻՍՅԱՆ

1983թ.

# ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Վաղուց ի վեր հայտնի է, որ շատ գրքեր գրվում են երկար տարիներ և, բնական է, եթե նրանք զուրկ են պատմողական անընդհատությունից՝ կատարվում է այս կամ այն փաստի շարադրության որոշակի կտրտվածություն:

Դա կատարվում է նաև այն պատճառով, որ պարբերաբար հանդիպումներ են կայանում այն մարդկանց հետ, որոնք գիտեին կամ ուսանել են այն մարդու մոտ, որի մասին խոսվում է այս գրքում:

Ես համոզված եմ, որ մարդու անձնական կուլտուրան անմիջականորեն արտահայտվում է նրա ողջ էության վրա, նրա ամբողջ ստեղծագործական կյանքի վրա: Չմոռանանք, որ թատրոնը, երաժշտությունը, գրականությունը, կերպարվեստը ակտիվորեն ներազդում են մարդու վրա՝ անկախ նրանից, թե արվեստի որ բնագավառում է նա ստեղծագործում, իսկ հանդիպումը իսկապես գեղարվեստական ստեղծագործության հետ մարդու մոտ նաև միտք է արթնացնում:

Արվեստն ընձեռում է հայացքների լայնարձակություն, արթնացնում է հետաքրքրություն գիտելիքների տարբեր ճյուղերի նկատմամբ, և երջանիկ է մարդը, որն անում է այն, ինչին առավել ընդունակ է: Միայն այսպես է նա բավարարված:

Տաթևիկ Սազանդարյանի ստեղծագործությունը դասվում է մեր հանրապետության վոկալ արվեստի առավել ցայտունների շարքին: Երգչուհու տաղանդի հմայքը ոչ միայն նրա ձայնի հզորության և գեղեցկության մեջ էր, որով նրան առատորեն պարգևել էր Բնությունը, այլև երգչուհու ողջ դերասանական կերպարում էր: Այդ պատճառով էլ ունկնդրի յուրաքանչյուր հանդիպում երգչուհու հետ բերում էր հիացմունք և ուրախություն:

Երգչուհու կյանքն ընթանում էր հետաքրքիր մարդկանց, արվեստի գործիչների հետ մշտական շփումներով: Նա շատ էր շրջագայում, շատ բան էր տեսնում և մտապահում:

Վարպետություն...

Ինչքա՜ն շատ և բազմազան հասկացություններ կան այս բառում:

Տ. Սազանդարյանն այդ վարպետության տիրապետմանը գնում էր ինչպես յուրաքանչյուր իրական արտիստ՝ դանդաղ, անդադար աշխատանքով և փնտրտուքով: Բարձր պատասխանատվությունը, վոկալ տեխնիկայի տիրապետման կատարելագործման մշտական աշխատանքը դառան նրա ստեղծագործական կյանքի չափանիշը:

Կարծես թե հասու լինելով գեղարվեստական ինքնարտահայտման բարձունքներին, յուրաքանչյուր նոր աշխատանքում երգչուհին հաստատորեն հասնում էր կատարողական ավելի բարձր աստիճանի:

Կերպարանափոխման վարպետություն, բեմական ազատություն՝ սրանք դառան նրա հնարավորությունների գաղտնիքի բացահայտումը: Նրան ամեն ինչ հաջողվում էր. և՛ քնարական դրվագներ, և՛ ողբերգական իրավիճակներ, որոնցում գտնվում էին նրա հերոսուհիները:

Եվ այդժամ նա կանգնեց այն վարպետների կողքին, որոնց կարելի է վստահել ռուսական, հայկական և արևմտաեվրոպական խաղացանկի ցանկացած դերերգ և պարտիա:

Երգչուհու ստեղծած կերպարները, որոնք բերեցին նրան մեծ և վաստակած հաջողություն, երկար և ձիգ տարիների համառ աշխատանքի արդյունք են: Դրանք բոլորը միշտ կատարվել են անկեղծ հուզմունքով, օգտագործելով իր տաղանդին հարիր արտահայտչամիջոցների ողջ ներկապնակը:

1961 թվականից սկսվեց Տաթևիկ Սազանդարյանի մանկավարժական գործունեությունը: 1970 թվականից նա Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր է, իսկ 1977 թվականից՝ մեներգի ամիբիոնի վարիչ:

Մանկավարժական գործունեության գրեթե 40 տարվա ընթացքում, այսինքն մինչև մահկանացուն կնքելը 1999 թվականին, նա իր ողջ եռանդը տալիս էր նոր սերնդին՝ ուսանողներին և ասպիրանտներին:

Սազանդարյանի դասարանն ավարտել է մոտ 40 երիտասարդ մասնագետ:

Միշտ լինելով ստեղծագործական փնտրտուքների մեջ իր սաների համար գտնում էր այս կամ այն կերպարի կատարման նոր և վառ գույներ:

Նրա ղեկավարությամբ ուսանողների և ասպիրանտների թվում են եղել.

*Անժելա Հարությունյան*, Հայաստանի Հանրապետության ժողովրդական արտիստուհի, Մ. Մուսորգսկու անվան Համամիութենական մրցանակաբաշխության դափնեկիր,

*Ալբինա Հակոբյան*, Անդրկովկասյան մրցանակաբաշխության մասնակից,

*Քնարիկ Մալունցյան*, «Պրահայի գարուն» միջազգային մրցանակաբաշխության մասնակից,

*Գրետա Անտոնյան*, Անդրկովկասյան մրցանակաբաշխության մասնակից,

*Վիոլետա Եսաբեկյան*, Անդրկովկասյան մրցանակաբաշխության մասնակից,

*Գենադի Պատվականյան*, Անդրկովկասյան մրցանակաբաշխության մասնակից,

*Հասմիկ Հացագործյան*, Անդրկովկասյան մրցանակաբաշխության դափնեկիր, Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնի մեներգչուհի,

*Մարիամ Կարապետյան*, Անդրկովկասյան մրցանակաբաշխության դափնեկիր,

*Զեմֆիրա Դանիելյան*, ՀՀ Երգչախմբային ընկերության մեներգչուհի,

*Նելի Փիրումովա*, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր....

ԻՆԴԱ ԻՈՆԻՍՅԱՆ

2006թ.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՏԱԹԵՎԻԿ ՍԱՀԱՆԴԱՐՅԱՆ

5

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԸ ՏԱԹԵՎԻԿ ՍԱՀԱՆԴԱՐՅԱՆԻ ՄԱՍԻՆ

29

ՄԱՄՈՒԼԻ ԷՋԵՐԻՑ...

84

ԱՆՁՆԱԿԱՆ ԱՐԽԻՎԻՑ

114

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

123

126

40184

ԵՐՊԵՏԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱՅԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА
ЕРГОСКОНСЕРВАТОРИИ

ՏԱԹԵՎԻԿ ՍԱՉԱՆԴԱՐՅԱՆ
(ԾՆՆԴՅԱՆ 90-ԱՄՅԱԿԻՆ)

*ԽՄԲԱԳԻՐ*
Ս. ԳԵՂԱՄՅԱՆ
*ԳԵՂ. ԽՄԲԱԳԻՐ*
*Մ. ՆԵՐՍԻՍՅԱՆ*
*ՄԱԿԵՏ*
Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ
*ՇԱՐՎԱԾՔ*
Ն. ԽԱՉԱՏՐՅԱՆ
*ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԸ*
Տ. ՍԱՉԱՆԴԱՐՅԱՆԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԱՐԽԻՎ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԱՏԵՐԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ
Ե.ՉԱՐԵՆՑԻ ԱՆՎԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ
Գ. ԳՅՈՂԱԿՅԱՆԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԱՐԽԻՎ
*ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ*
«ՏԱԹԵՎԻԿ ՍԱՉԱՆԴԱՐՅԱՆ», ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՏԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ,
ԵՐԵՎԱՆ, 1984

ТАТЕВИК САЗАНДАРЯН
(К 90-ЛЕТИЮ СО ДНЯ РОЖДЕНИЯ)
ИЗДАНО ПО ГОСУДАРСТВЕННОМУ ЗАКАЗУ
ИЗДАТЕЛЬСТВО "АМРОЦ ГРУП"
ЕРЕВАН, 0033, УЛ. КАСЯНА 3/26.
ТЕЛ.; (37410) 27-08-56
E-MAIL:AMROTS@FREENET.AM

Չափսը՝ 60.84$^{1}/_{16}$ , 8,0 պայմ. տպ. մամ. + 1,0 մամ. ներդիր,
թուղթ՝ օֆսեթ և կավճապատ, տպաքանակ՝ 500:

ՏՊԱԳՐՎԱԾ Է «ՏԻԳՐԱՆ ՄԵԾ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ՏՊԱՐԱՆՈՒՄ
ԵՐԵՎԱՆ, ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ 2: